

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԼԸ. ՏԱՐԻ 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ ԳՈՐԾ

Գ. ՄԱՍ

Հ. Եփրեմ Պողոսյան

ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«Հարսանիքը Երզնկայի մէջ» վերնագրի տակ կը գրէ Ա. Կամսարական 1906-ին:

Երզնկայի մէջ Հարսանիքը ամենէն աւելի ուրախալի եւ վայելուչ հանգէսներէն մէկը համարուած է եւ սովորաբար Կիրակի օրերը տեղի կ'ունենայ: Այն օրը առտու կանուխ, հարսնետունը կը լեցուի աղբակահներով: Սենեակներուն մէջ իրենց մասնաւոր տեղերը կը գրաւեն ջուլթակահները, քնարահարները, սաղ ու տէֆ նուագողները: Սկզբնական հարսանիքները, այսինքն, կ'ընդունուին զատիկով:

Այն օրը հարսնետան գոնիքը բաց են ամէն եկողի համար, թէ՛ ծանօթին եւ թէ՛ անծանօթին, թէ՛ հրաւիրեալին եւ թէ՛ դիտողին համար: Ամէն կողմ գործունէութիւն, զուարճութիւն, ուրախութիւն կը տիրէ: Ոմանք թոնիրին վրայ կ'երկուր կը պատրաստեն, ոմանք սեղանին աղտոտ սպասները կը լուան, ոմանք ցերեկուան ճաշի պատրաստութիւն կը տեսնեն:

Ճաշի ատենները փեսան կը վերադառնայ բազմաթիւ, իրեն հետեւորդ ունենալով

կնքահայրը եւ քանի մը բարեկամ երիտասարդներ եւ կ'ընդունուի խանդավառութեամբ հարսնետուններէն:

Անմիջապէս սեղանները կը շտկուին: Մեծ թէ պզտիկ, այլ թէ կին, իւրաքանչիւրը իր որոշուած սենեակին մէջ կը բոլորուին սեղաններուն շուրջը: Յետոյ, ըստ հնաւանդ սովորութեան, փեսան ոտքի կ'ելլէ եւ ներկաներէն իւրաքանչիւրին զատ զատ զինի կը մատուցուի ամէնուն բերնէն մաղթանքի միւսկոյն յանկերգը լսելով:

Ճաշը կը սկսի «Հայր մերով», որմէ ետքը դպրանք կը մխրճուին յախճապակիէ կամ պղնձէ խոր ամանին մէջ աւանդական ապուրը խմելու, որուն կը յաջորդեն առատօրէն զանազան համադամ կերակուրներ:

Ճաշէն վերջ նուագախումբերը կը վերսկսին... Ուրախութեան ձայները, աղակերները կը վերածնին երկար ժամանակ, մինչեւ որ քահանան կու գայ հալաւ օրհներու... Քահանան Հալաւին մէջ գտնուած հագուստները եւ ժամացոյցը զատ զատ օրհներով իւրաքանչիւրը փեսային ծնողքին եւ մօտիկ ազգականներուն կու տայ եւ կը մեկնի: Անմիջապէս նուագին հետաւելով

ձայնը կը վերսկսի օղիի եւ քոնեաքի դաւաթներուն ընդհարման աղմուկի հետ:

Վերջապէս հարսնետոններու բազմութիւնը դէպի եկեղեցի կ'ուղղուի հետիոտն, պսակի արարողութեան ներկայ գտնուելու համար: Հարսն ու փեսան կ'առաջնորդուին եկեղեցւոյ աւագ խորանին առջեւ: Խորանը շողշողուն լոյսերով կը փողփողի: Պսակէն վերջ ներկաները ճամբայ կ'ելլեն դէպի փեսային տունը: Երբ ամուլը տան արտաքին դրան սեմէն ներս կը մտնէ, անմիջապէս կը մորթուի մատաղացու ոչխարը, որուն արիւնով կ'օծեն հարսին եւ փեսային նոր կօշիկները: Այստեղ կ'ընտրուեն անոնք, որոնք կ'ընտրուին ուրախութիւնները նուազներուն ընկերակցութեամբ, սա տարբերութեամբ որ օղիին ու քոնեաքին կը յաջորդէ վարդագոյն գինին... (Սուրհանդակ, Կ. Պ. 1906 թ. 2153):

Մ. Թորոսեանց 1897-ին երգնկայէն կը տեղեկագրէ.

Հոս քանի մը տարի առաջ մանչուն ծնողքը ստիպուած էր վճարել աղջկան ծնողքին որոշ գումար մը պաշլըլի եւ քեփմանուան տակ. բայց երբ համուսնացող երիտասարդներու թիւը շատցաւ եւ շատ աղջիկներ ստիպուեցան մնալ իրենց հօր տունը, պաշլըլի դրութիւնը վերցաւ տակաւ առ տակաւ»: (Բիւզանդիոն, Կ. Պ. 1897, թ. 267):

ԽԱՐԱԲԵՐԴԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԽԱՐԱԲԵՐԴԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ա) Խարբերդի հայկական հարսանիքի մասին գրութիւն մը ունի Յովհաննէս Վարդապետ, որ 1852 Դեկտ. 13-ին Խարբերդէն կը ղրկէ Պոլսոյ «Նոյեան Աղաւնի» թերթին՝ «Սովորութիւնք կամ ծէսք հարսանեաց Խարբերդեցւոյ» վերնագրի տակ, գրուած դրաբար, որ կ'ամփոփենք աշխարհաբարով:

Պսակի նախորդ իրիկունը հարսնետոնները կը բերեն փեսային եւ հարսին զգեստ-

ները, որ քահանան օրհնէ: Քահանան առանց ծիսական զգեստի, գլխարկը գլխուն, կը կատարէ օրհնութիւնը:

Յետոյ փոքր ամանով խունիկ ծուխը կը մօտեցնեն ներկաներուն եւ ամէն մէկը ամփով ծուխը իրեն կը քաշէ: Վերջապէս ժամկոչը կը պտտցնէ գանձանակը եւ կ'աւարտի օրհնութեան արարողութիւնը:

Յաջորդ առաւօտ, ժամերգութենէն վերջ, սուրբ եկեղեցւոյ ծէսին համաձայն քահանան կը խոստովանցնէ պսակողները, յետոյ հարսն ու փեսան կու գան բեմին առջեւ, ուր հարսը խոնարհած եւ փեսան սպիտակ թաշկինակով բերանը ծածկած՝ տեղի կ'ունենայ պսակադրութիւնը:

Հոգեւոր երգերով ու ծնծղաներով կ'առջնորդուին պսակուածները մինչեւ եկեղեցւոյ դուռը եւ հեծցնելով պատրաստուած ձիերու վրայ, նուագի ընկերակցութեամբ կ'երթան փեսային տունը: Եկեղեցիէն մինչեւ տուն ճամբան դրացիները կը հրամցնեն օղի, պտուղներ եւ քաղցրաւենի: Օղին խմած ժամանակ բոլորը միասին կը գոչեն՝

Թագաւորեցե՛ք քաղը
մեր քաղաւորին,
Դովաթը մեր քաղաւորին,
Ձին վագուկ մեր քաղաւորին,
Թուրը կտուկ մեր քաղաւորին,
Ազգը պայծառ քաղաւորին,
Երկնից ցօղ, երկրից պտուղ, լօշ լօշ

(լաւաշ):

Երբ փեսան մօտենայ դռան սեմին գառնուկ մը կը մորթեն: Տան սրահին մէջ կրակ կը վառեն. հարսն ու փեսան շուրջը կը դառնան, յետոյ փեսան կեղեւուած խնձոր մը կը զարնէ հարսին գլխուն՝ իբրեւ նշան թէ տիրացած է անոր:

Վերջապէս փեսային ծնողքը կու գան կը պարեն փեսային առջեւ եւ այդպէս երկար ժամանակ անոնց կը յաջորդեն երկ-երկու պարողներ:

Բաղկապարը (Թեևխաղ), Հայաստանի շուրջպարը չտեսանք այստեղ, մինչ Մուշեկ Բեղի շատ տարածված է ան:» (Նոյեան Աղաւնի, Կ. Պ. 1852 թ. 48-49):

Բ) Գ. Զուլումեան, 1904ին, 2 յօդուածով կը խօսի Խարբերդի մէջ Հին ժամանակները գոյութիւն ունեցած պեշիկ-քեսմէ սովորութեան մասին եւ կ'իմացնէ որ այդ «բարբարիկ սովորութիւնը անհետացած է Խարբերդի մէջ», 1904-ին: Յետոյ կը նկարագրէ թէ ինչպէս տեղի կ'ունենար «պեշիկ-քեսմէն»: Կը գրէ.

Առաջ Խարբերդցի երկու ջոջեր կամ ճանչուոր անձեր... իրենց բարեկամութեան հաստատուն ձեւ մը եւ փայլուն գրաւական մը տուած ըլլալ կը կարծէին, երբ սրտաղեղումի մէկ պահուն ... կ'առաջարկէին իրարու հետ ամուսնացնել իրենց արու եւ էգ ծնունդի գաւակները... եւ իբր երաշխիք կազմուած դաշինքի անլուծանելիութեան՝ հարսնցու աղջկան համար կը տրուէր ոսկի մը, օղբի, արծաթէ մատանի կամ ապարանջան:

Երկու կողմի շարունակական ջանքերը կը կենդրոնանային ամրապնդելու այս նորակաղծ խնամութիւնը. Փոխադարձ ազդեցութիւններն ու խրախմանական մեծարանքները կը ծառայէին զայն նուիրագործելու... Այս պղտիկ նշանածներէն մին երբ ծնողքին հետ նշանածին տունը կ'երթար, կ'ողջունուէր սիրալիր կերպով, քաղցր գգուանք ու խանդավառութիւն կը վայելէր... կը պատուասիրուէր միրգերով ու կը վերադառնար տուն՝ հոն վայելած հաճոյքներուն քաղցր յիշատակովն արբշիւ:

(Բիւզանդիոն, Կ. Պ. 1904 թ. 2357-8):

Գ) Գ. Զուլումեանի երկրորդ յօդուածը, գրուած Խարբերդէն, ունի մանրամասնութիւն «դարձի» սովորութեան մասին եւ հետաքրքրական է անոր համար, որ բնիկ

տեղացիի եւ ապրուածի տեղեկութիւններով օժտուած է: Զուլումեանի այս գրութեան ընդհանուր խորագիրն է՝ «Զատկական սովորութիւններ», որուն մէջ կու տայ Խարբերդի հարսանեկան սովորութեան քանի մը յատկանշական կէտերը, որոնք հնութեան մէջ ուրիշներէ նկարագրուած չեն: Զուլումեան կը տողէ.

Յատկանշական սովորութիւն մըն է Զատկի առթիւ նորապսակ հարսերու՝ նոր փեսային հետ հիւրասիրուելը մէրանց տունը: Խարբերդի մէջ հարսին ընտանեաց մէրանք կ'ըսուի, իսկ փեսայինին՝ առնանք: Մէրանքն առհասարակ Զատկի Կիրակին, նախաճաշէ յետոյ, մէկու մը հետ խնամոնց տունը մեծերուն երկու կարմրտուն հաւկիթ բարեւ զրկելով՝ հարսը¹ տուն տանելու համար անոնց թոյլտուութիւնը կը խնդրեն: Խնամոնք ալ հարսն հրաւիրելու համար եկող անձին սիրալիր ընդունելութիւն ու զեղուն պատուասիրութիւն կը ցուցնեն եւ իրենց տան մէջ ժամանակ մը սպասցնել կու տան, մինչեւ որ հարսը «դարձով» զրկելու համար հարկ եղած պատրաստութիւնները տեսնուին: Հարսը «դարձով» կ'երթայ, կ'ըսեն, երբ ամուսնութեան առաջին Զատկին հարսը նուէրով մէրանց տունը կը զրկուի եղած հրաւերին ի պատասխան: Հարսին վերադարձի օրը զրկուած նուէրները ետ պիտի գան տոկոսով մէկտեղ:

Հարսն իր փառաւոր հագուստներէն մին կը հագնի եւ ամուսնութեան ատեն մէրանց տունէն օժիտ բերած գեղեցիկ հանդերձներէն մէկ քանի ձեռք կը տեղաւորէ մասնաւոր ծրարի մը մէջ, հոն մէրանց տունը գանազան օրեր հագնելու համար:

Ամուսնութեան առաջին տարուան մէջ ամէն նոր հարս Ծնունդի ու Զատկի առթիւ մէրանց տունը դացած ատեն, ընդհանրապէս «դռան լաթ» կոչուած ընտիր ու

1 Որեւ ամուսնութեան միայն առաջին Զատկին մէրանքը հակիրճ բարեւ դրկելով՝ հարսը տալոջ ու ցեղոջ աղջիկներէն մին ալ կը ճրարէր, որ

միայն շաբաթ մը կենալէ յետոյ տուն կը վերադառնայ:

մեծարժէք Հագուստը կը Հագնի: Ասի Հարսնառուի ատեն, փեսայի ընտանիքին կողմէ Հարսին բերուած զգեստն է, զոր նոր Հարսին Հագցնելով զայն եկեղեցի կը տանին: Ասկէ դուրս Հարսը միայն այն ատեն կը Հագնի այս փառաւոր Հագուստը, երբ նշանտուքի, Հարսանիքի, կոչունքի եւ նմանօրինակ Հանդիսաւոր օրերու հրաւիրուած ըլլայ:

Մեկնումի ժամանակ չեն մոռնար Հարսին գրպանը Հաւկիթ, քաղցրեղէն եւ կամ չոր միրգ լեցնել, որպէս զի մէրանց տունը գացած ատեն տեսակցութեան եկող աղգակիր կամ դրացի կիներու մանուկներն ուրախացնէ:

Հարսը մեկնումի ատեն փառաւորապէս սագուած ու կոկուած՝ տանը բոլոր մեծերուն ձեռքերը կը պագնէ ու իր առաջնորդին հետ, որ երկու ծրարներ կը կրէ, կ'ուղղուի իր հօրենական տունը, երբ նոյն ատեն իրեն կը հետեւին տնեցիներու անթարթ նայուածքներն անոյշ խանդավառանքով մը պարուրուած: Հարսն այսպէս ճամբելէ յետոյ, ասոնք կու գան ներս եւ կը սկսին իրենց հրաւիրեալներուն հետ զուարճանալ:

Յաջորդ օր, առաւոտտուն, մէրանք ալ կը հրաւիրեն իրենց կնքահայրը, մերձաւոր ազգականներն ու դրացիները, երբեմն ալ կեսուրը, բոլորին ալ լուր ղրկելով թէ «Մեր տունն հրամեցէք, Հարսը դարձով է եկեր»: Այս հրաւիրեալներն ալ իրենց հետ շիշով օղի եւ մէյմէկ պնակ զանազան ընտիր ուտեստներ առնելով՝ «դարձ բանալու» կու գան: Հարսը մէկիկ մէկիկ կը պագնէ բոլոր հրաւիրեալներուն ձեռքերը: Յետոյ այս վերջիններու ներկայութեան կը բացուի «դարձը», որուն պարունակութենէն մաս մը կը ճաշակեն եւ ուրիշ կերակուրներ ալ ուտելէ եւ ուրախանալէ վերջ՝ մեկնողներու իւրաքանչիւրին նորէն խնամոնց ղրկած այդ ուտեստներէն բաժին մը կու տան, որպէս զի հետերինն տուն տանին եւ այսպէս

տանը միւս անդամներն ալ մասնակցին այս «դարձի» մեծարանքին: (Բիւզանդիոն 1903 թ. 3014 եւ 3018):

ԽԱՐԲԵՐԴԻ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԲԱՐՋԱՆՃ ԳԻՒՂ.— Նկարագրողն է բնիկ Բարջանճցի՝ Մանուկ Պ. Ծերօն:

Աղջկատեսի պաշտօնը կը կատարեն երկու կողմի կնքահայրերը: Երկու կնքահայրեր, ուրիշ բարեկամի մը հետ կ'երթան աղջկան տունը: Տղուն կնքահայրը կը սկսի. «Մենք եկել ենք Աստծոյ հրամանովը ձեր աղջիկը մեր տղուն ուղեկու, ասոր ի՞նչ կ'ըսես»: «Բարի էք եկեր, Հագար բարի... Քանի որ մեր ընքապապին (կնքահայր) հետ եկեր էք... Ասուած խէլի ընէ», կ'ըսէ հայրը: Տղուն կնքահայրը 5-10 խաղի կը դնէ մօրը ափը եւ խօսքկապը կը կատարուի. աղջիկը կու գայ ձեռքներին կը պագնէ, սեղան կը դրուի, գինի, ուտելիք, բարեմաղթութիւններ...

Նշանաւոր. — Տղուն հայրն ու մայրը, կնքահայրը, Տէր պապան ժամկոչին հետ, հրաւիրեալ քանի մը ազգական, բարեկամ կ'երթան աղջկան տունը իրիկուան դէմ: «Ողջոյն ձեզ, բարեւ, Աստծոյ բարին», կը նստին: Սեղան կու գայ բախի, գինի... Տղուն կնքահայրը Տէր պապին առջեւ կը դնէ նշանի ծրարը: Տէր հայրը խաչակնքելէ յետոյ, կը բանայ ծրարը: Նշանն է՝ զոյգ մը օղ, մատանի մը եւ «խազի»ներու «խաթար» մը: Ասոնց վրայ կ'աւելնան հիւրերէն նուիրուած «խաղի»ներ, բուսիկներ, պիւրրդուկներ: Աղջկան մայրն ալ կը բերէ իր աղջկան ձեռքով ապրշումներով, ասեղնագործուած նախշուն «քեաս», «քթան այլըխ», գտակ եւ մետաքսեայ փուշի իբրեւ փոխ-նշան: Տէր պապան կը խաչակնքէ բոլոր նշանները եւ կ'օրհնէ պատշաճ աղօթքով եւ շարականով եւ նշանտուքը կը վերջանայ... Կարգը կու գայ խրախճանութեանց. թոյրին մէջ խորովուած խուզի, պոչով խապուրդա-կարմրած, Բարջանճի խրաններուն անոյշ գինին...

Քեսիմ-կյրել. — Շատ հին սովորոյթ էր այս. պսակէն մէկ երկու շաբաթ առաջ, առնանց կողմէն 4-5 հոգի, կնքաձօր ընկերակցութեամբ «Քեսիմ-կյրել»-ու կ'երթային աղջկան տունը: Տղուն հայրը աղջկան հօրը կու տար 5-25 ոսկի աղջկան օթիտին համար:

Պսակադրութիւն. — Միշտ երկուշաբթի առաւօտուն տեղի կ'ունենար: Նախօրօք կարմիր գուեցնող «Մաճարոս»ը կնքահայրէն կ'ընխնծոր կը դրկէին հրաւիրուելիք հարսնեւորներն շորերը հատ հատ՝ մինչ տիրացու — բուն, յետոյ տաւուկ-դուռնայով կ'երթային վարժապետ եւ փեսամանուկներ կ'երգեն. տղուն հարսնետուն բերելու զանոնք: Հարսնետունը կը լեցուէր.

Հարսնեց ցնծուն մէկ օրն է, կոպում եար,
Հարսին փեսին մեծ օրն է, կոպում եար:

Հարսնացուն տունն ալ աղգական բարեկամներով լեցուն է, մանաւանդ հարսնացուն մտերիմ աղջիկներ գիշեր ցերեկ անոր հետն են: — Կիրակի, տղուն կողմէ խումբ մը այր եւ կին, քահանայով, կնքահայրով, տաւուկ-դուռնայով հալաւ կը տանին հարսնացուն տունը: Քահանան կ'օրհնէ մէկիկ մէկիկ: Կ'ուտեն, կը խմեն, կը դառնան փեսային տունը՝ հարսին քով ձգելով կիներն ու աղջիկները:

Աղջկան վերջին գիշերն է. հարսին շորերը հագցնելու, հինայումի գիշերն է: Կիներ կնքամօր առաջնորդութեամբ կը հագցնեն հարսին շորերը, երգելով մեղեդիներ, հարսնգովի, սրտայոյզ բաժանումի, աղջկան ծնողաց եւ աղգականներուն սրտերը փլցնող եւ լացնող.

Մայրիկ, դուն հալալ, մայրիկ դուն հալալ,
Կարիկդ եմ կերեր, էրէ ինձ հալալ:
Ջրիկդ եմ խմեր, էրէ ինձ հալալ:

Հայրիկ, դուն հալալ, հայրիկ դուն հալալ,
Հացիկդ եմ կերեր, էրէ ինձ հալալ:

Ամմէն շնարժուր սա մեր հարսնուկին:

Յետոյ կը հինայեն հարսնացուն ձեռքի մատները, ափերը եւ ոտքերուն մատները:

Հարս ու աղջիկ կը հսկեն այդ գիշեր ծոմապահ եւ անքուն:

Փեսայի տունը հարսնեւորներով լեցուն է. հրճուանք անպատում. փեսայի հալաւը կ'օրհնէ քահանան ու կ'աղօթէ, որ «թագաւորին թուրը կյրուկ ըլլի»:

Փեսան կը լոգցնեն: «Թագաւոր»-ը հաւսանք գովեցէ՛ք, գօտի կապեցէ՛ք եւն.
Փեսան գովեցէ՛ք, ոտից հագուցէ՛ք եւն.
Փեսան գովեցէ՛ք, փուշի պլեցէ՛ք եւն.
Փեսան գովեցէ՛ք, գոկիկը գրէ՛ք եւն.
Փեսան գովեցէ՛ք, թուրն ըլ կապեցէ՛ք եւն.:

Գացէ՛ք, բերէ՛ք սիրուն պապիկ,

Օր գայ տեսնայ, ծառն է ծաղկեր:

Գացէ՛ք, բերէ՛ք ամուշ մայրիկ, եւն.

Գացէ՛ք, բերէ՛ք ամուշ փուրիկ եւն.

Գացէ՛ք, բերէ՛ք շուք աղբրտիք,

Օր գամ տեսնըմ, ծառն է ծաղկեր:

Գացէ՛ք, բերէ՛ք ամուշ մայրիկ, եւն.

Գացէ՛ք, բերէ՛ք ամուշ փուրիկ եւն.

Գացէ՛ք, բերէ՛ք շուք աղբրտիք,

Օր գամ տեսնըմ, ծառն է ծաղկեր:

Կը կանչուին բոլորը, նոյն իսկ հանգուցեալ սիրելիներ՝ տեսնելու թէ «ծառն է ծաղկեր»: «Թագաւոր»ին ծոցը կը դնեն խօսքկապի «այլըն»ը կարմիր խնձորով եւ մէջքը կը կապեն օրհնուած թուրը — նշանակը՝ անկապտելի եւ տարրական իրաւունքին՝ իր հարսին եւ ընտանիքին նամուսը պաշտպանելու:

Փեսային ալ ջլթիկը (ճկոյթը) կը հինայեն եւ փեսայ փեսամանուկ անքուն եւ ծոմ կը պահեն մինչեւ պսակի սուրբ հաղորդը առնելը:

Հարսնառում. — Երկուշաբթի առտուն, տաւուկ-դուռնայով արթնցած հարսնեւորները ձիաւոր փեսայով հարսնառում կ'երթան: Հարսը պատրաստ է, բայց բաժանումը սրտայոյզ... կը համբուրէ հօր, մօր, ամուսնեւոր ձեռքերը, որոնք փոխադարձօրէն իր երեսը կը համբուրեն: Հարսը կը հեծցնեն զարդարուն ձիուն վրայ, փեսային կնքամօր ետեւը, գլուխէն մինչեւ ոտքերը քողով

ծածկուած. իր քովէն կը քալէ Հարսնեղբայրը փեսային թուրը ձեռքին մէջ. Ազգական տղամարդ մը Հարսին ձիուն սանձէն կը քաշէ Հետեւելով փեսային, որ նոյնպէս ձի հեծած է: Հարսանիքի թաբորը, առաջնորդուած տաւուլ-գոլուռնայով, կը հասնի եկեղեցի. պսակաւոր զոյգը, սուրբ սեղանին առաջը ծնկաչոք՝ կը հաղորդուի, յետոյ կը կանգնին Հարս ու փեսայ գլուխ գլխի, իրարու աջ ձեռքը բռնած ու քահանան միացած գլուխներուն վրայ կը դնէ խաչը, իսկ կնքահայրը խաչին քով կը զետեղէ թուրը: Քահանան կը կատարէ պսակօրհնէք հնաւանդ հանգիստութեամբ:

Նորէն Հարս՝ ու փեսայ իրենց ձիերուն վրայ են. Հարսնեց թաբորը դանդաղօրէն կը յառաջանայ, այս անգամ դէպի փեսայի տունը. տաւուլ-գոլուռնան աւելի ուժգին եւ աւիւնոտ է. Հիմայ գիւղն ունի թագուհի ու թագաւոր: Երկու սղամարդ, ձեռքերին մէկ մէկ նախշուն այլըլս՝ կ'ոստոստեն «էր-մէնի տաղլար»ի ելեւէջներովը ու կ'երգեն. «խոնջա» ամէն դրան առաջ, փարջով, դուլով, գինի, օղի ու մեղէներ: Ճամբան կը հանգիպին անպայման կնքահօր տունը ու վերջապէս կը հասնին Հարսնետուն, ուր փեսային հայրն ու մայրը պատշգամին վրայ կեցած կ'ըլլան: Տաւուլ-գոլուռնայի դղրդուն թոփիւններուն մէջ փեսան կը մորթէ խոջը սեմին վրայ պառկած ու ծնողքը վերէն Հարսին ու փեսային գլխուն վրայ կը ցանեն շաքար, չամիչ, լիպլիպու եւ մերթ մանրուք դրամներ բուռնելով... եւ Հարս ու փեսայ ձեռք ձեռքի՝ յաղթական կը մտնեն պապենական օճախը:

Հարսնետունը. — Հարսնեց մեծ ճաշը, խնճոյքը պատրաստ է. գառներու խորովածներ, պոչով-խապուրդաներ, պլոր, սարմա, պլղուր, փիլաւ, պատուական քեչկէկ՝ դառն մսով եւ փարջերով, դուլերով յակինդ գինի: Կրակտան մէջ փռուած խալիները, կապերտները, միւսերները եւ բարձերը դրուած: Կը նստին ծալապատիկ: Քահանայի «Հայր մերով» կը սկսի «Հարսից

ճաշը»... ուր խոնջաները բռնաւոր են Աստուծոյ տուած ամէն բարիքներով... «Աչքերդ լոս, ընքապապ, վարձքդ կատար»: — «Խնամի, խուրպան, անոյշ, Աստուած Վարդիկիդ աղէկ բախտ մը տայ»: Այս իրիկուն Հարս եւ փեսայ իրենց ընքամօր եւ ընքապապի հետ կը պարեն ու մամիկը կ'օրհնէ Հարս ու փեսան. — «Եավրունբոս, մէկ հացով մէկ բարձով ծերանաք». «օճախնիդ միշտ վառ մնայ». «դռներնիդ միշտ բաց եւ սեղաննիդ հայր Աբրիամու սեղանն ըլլի»:

Մինչեւ ուրբաթ կը տեւէր Հարսանիքը. փեսան այդ միջոցին հիւր էր կնքահօր տունը փեսամանուկներու հետ: Ուրբաթ իրիկուն կնքահայրը փեսան տուն կը բերէր փեսամանուկներու հետ եւ վերջին անգամ կը զուարճանային միասին, որով կը վերջանար Հարսանիքը: (Մանուկ Գ. Զիլմեհեան, Խաբերդ եւ իր զաւակները. Զրեզնօ 1955, էջ 669-73):

ԴԱՏԵՄ ԳԻՒՂ

Ամբողջական, գոհացուցիչ նկարագրական մը գտած էինք: Ահա համառօտ տեսութիւն մը:

Հարսանիքի պատրաստութիւնը կը սկսէր հինգշաբթի, իսկ պսակի արարողութիւնը՝ երկուշաբթի: Հարսնետունները կը հաւաքուէին նախ փեսային տունը: Տղան տաւուլ-գոլուռնայով կ'երթար կնքահայրը եւ կնքամայրը իր տունը կը բերէր, յետոյ կու գային փեսային ամենամօտ ազգականներն ու բարեկամները: Կը սկսէր կերուխումը եւ ուրախութիւնը մինչեւ ուշատուն... Ծաշէն առաջ եւ յետոյ նուագի ընկերակցութեամբ տեղի կ'ունենային մենապար, զոյգպար եւ բոլորապար:

Շաբաթ երեկոյեան Հարսնետունները կը հրաւիրուէին Հարսնեցուն տունը, ուր կերուխումն ու ուրախութիւնները կը կրկնուէին մինչեւ ուշ գիշեր: Մեկնելու ատեն հիւրերը իրեւ յիշատակ միասին կը տանէին դգալ մը, պատառաքաղ մը եւն.:

Կիրակի օր ուրախութիւնը կը շարունակուէր տղուն տունը, իսկ երկուշաբթի հարսը կը տարուէր եկեղեցի եւ տեղի կ'ունենար պսակը: Պսակէն վերջ հարսը մէկ երկու ժամ կը պտտցուէր փողոցներուն մէջ հիւրասիրուելով տուններէն: Երբ կը հասնէին փեսայի տունը, փեսան դուրս կը տարուէր եւ երեք օր չէր կրնար վերադառնալ: Վերադարձին դրան առջեւ սուրի մէկ հարուածով կը կտրէր ոչխարի կամ աքաղաղի մը գլուխը:

(Գ. Մխիթարեան, Մեր գիւղը Դատեմ, Պոսթըն 1958, էջ 28-29):

ՀԻՒՍԷՅՆԻԿ ԳԻՒՂ

Կը գրէ Կարօ Փարթոյեան.

Բուն հարսանիքը տեղի կ'ունենար երկուշաբթի օրը, երբ առաւօտուն կանուխ կնքահօր հետ քանի մը երիտասարդներ փեսացուն բաղնիք կը տանէին: Կէսօրէն առաջ հարսնեւորները կը հաւաքուէին, ըստ հրաւերի, կէսօրուան ճաշը ընելու, որմէ վերջ փեսան հագուեցնելու արարողութիւնը կը կատարուէր մասնաւոր գովասանքներով: Չեմ գիտեր ինչո՞ւ փեսան հագուեցնելու գովքը թուրքերէն կ'երգուէր: Սկսելով հօրմէն տան բոլոր անդամները կը մասնակցէին փեսայ հագուեցնելու գործին, միեւնոյն ատեն հարսնեւորները կ'երգէին իւրաքանչիւրին յարմարող համարը.

Եւ հայրը ֆէսը փեսային գլխուն շուրջ երեք անգամ պտտցնելէ վերջ՝ կը դնէր գլխուն վրայ, կը համբուրէր ճակատը եւ տեղը կը նստէր:

Մայրը առնելով տղուն բաճկոնը նոյն շարժումներով կը հագցնէր զայն եւ մօր մը դուրգուանքով համբուրելով այտերը՝ կը գրաւէր իր տեղը:

Եղբայրը նոյն ձեւով կը հագցնէր չալվարը:

Քոյրը կամ մօտիկ ազգական աղջիկ մը կը հագուեցնէր կօշիկները: Այսպէս հա-

գուած սքուած փեսան կնքահօր եւ հարսնեւորներու հետ կ'երթար հարսնառումի: Առջեւէն կ'երթային հալաւը իրենց գլխուն վրայ կրող մէկ կամ աւելի անձեր: Երբ հասնէին հարսին տունը, տեղի կ'ունենար հարսին գովքը, զոր կը կատարէին աղջկան հարսնեւորներէն կիներ ու աղջիկներ: Կը բացուէր օհնուած հալաւի ծրարը եւ հարսին հարսանեկան հագուստը հագցնելէ վերջ, կ'ուղղուէին դէպի եկեղեցի՝ փեսան առջեւէն կնքահօր կողքին, հարսը մտած կնքահօր թեւը:

Պսակէն վերջ հարսանեկան ուրախութիւնները գրեթէ կը վերջանային: Հարսին հետ կը մնային երկու կամ երեք երիտասարդներ, որպէս հարսնեղբայր: (Կ. Ահարոնեան, Հիւսէյնիկ. Պոսթըն 1965, էջ 119-21):

ՀԱՊՈՒՍԻ ԳԻՒՂ

Խարբերդէն 15 մղոն հեռու գտնուող եւ մօտ 3000 բնակչութեամբ զուտ հայաբնակ Հապուսի գիւղի հարսանիքի մասին ունինք համառօտ տեսութիւն մը, ուր կ'ըսուի. «Տղոց ամուսնութեան տարիքը սովորաբար 15-25 էր, իսկ աղջիկներունը՝ 14-20: Խօսկապը կ'ըլլար օրորոցէն կամ տղուն ծնողքին կողմէն աղջկան մը ընտրութիւնը... ըսելով. «Ձեզմէ խնձոր մը ուղեւու եկած ենք», կամ «Ձեր աղջկան ձեռքը խնդրելու համար»: - «Մեր աղջիկը դեռ պզտիկ է» կամ «Պէտք է խորհինք ու տեսնենք», կը պատասխանէին աղջկան կողմէ:

Վերջապէս աղջկան ծնողքը կ'ըսէին. «Եթէ Աստուած ըզցեղ է կամեցեր, թող ըզցեղ ըլլի»: Տղուն ծնողքը, որ պատրաստութեամբ դացած էին, անմիջապէս կը հանէին դեղին ոսկին՝ անցուած ոսկի շղթայով կամ մետաքսեայ դերձանի վրայ: Կու գար հարսնացուն, կը համբուրէր բոլորին ձեռքը: Տղուն մայրը ոսկին հարսնացուին վիզէն կը կախէր եւ համբուրելով ծնողքին կը յանձնէր, ըսելով. «Ապրիս, աղջիկս, Աստուած երկու կողմանէ չամչցնէ»:

Աղջկան մայրն ալ իր փեսացուին նշան մը կը բերէր ու ծնողքին կը յանձնէր - զոյգ մը գուլպայ, քսակ մը, զոր մանր ուլունքներով գործած էր աղջիկը «Աս ալ մեր կողմէն տրուած նշան թող ըլլայ», կ'ըսէր:

Հարսանիքի օրը կ'որոշուէր երկու խնամիներու միջեւ: Սովորութիւն էր ձմեռուան եղանակին կատարել պսակը: Հարսանիքի առաջին օրը (չորեքշաբթի) թմբուկով ու փողով կը հրաւիրուէին կնքահայր, կնքամայր եւ հարսնեւորները: Սայլեր կը լծուէին կապերաներով կահաւորուած, որպէս զի կնքահօր ընտանիքն ու մտերիմները բազմէին: Սայլերով կամ ձիերով բոլոր հարսնեւորները՝ հաւաքուելով գիւղին շուրջը կը դառնային. հարսնեւորի տունէն, սեղաններու վրայ կը հրամցուէր խոտուտ, ռոճիկ, պաստեղ, չամիչ, ընկոյզ եւ փարջերով գինի: Երբ տան մը առջեւէն անցնէին, դռնէն, պատուհանէն ու տանիքէն հարսնեւորներուն վրայ կը ցանէին չամիչ, չոր թութ, աղնձած հատիկ: Երբեմն տեղի կ'ուսննար ձիարչաւ եւ հրացանաձգութիւն:

Իրիկունը փեսային տունը կը հաւաքուէին ուտելու խմելու: Բազմութիւնը դեռ չցրուած՝ փեսան գովելու արարողութիւնը կը կատարուէր կնքահօր կողմէ, որ կը հազցնէր փեսային նոր հագուստները: Գովասանքի ժամանակ կնքահայրը թէ՛ պիտի հազցնէր եւ թէ՛ պիտի պաշտպանէր փեսան, որուն - հինէն մնացած սովորութեամբ - ամէն մարդ կը ջանար կսմիթ մը տալ:

Երկրորդ օրը, հինգշաբթի, դարձեալ փողով ու թմբուկով կը հաւաքուէին հարսնեւորները եւ թաբորաբար կը յառաջանային. թմբուկին առջեւէն միշտ քանի մը տղամարդիկ խաղալով (պարելով) կը յառաջանային. խաղացողներուն բարեկամները խաղացողներուն ճակատը արծաթ կամ ոսկի դրամներ կը փակցնէին, որոնցմէ մաս մը, յետոյ, երաժիշտներուն նուէր կը տրուէր:

Երբ հասնէին հարսին դուռը, թմբուկին եղանակը կը փոխուէր. հարսը հագուած չքուած դուռս պիտի ելլէր: Այս միջոցին փեսան երկայն սուր մը պատեանէն հանած՝ կը սպասէր դրան առջեւ: Կնքահայրը աքաղաղի մը վիզը ոլորելով՝ փեսային կը ներկայացնէր, որ մէկ հարուածով պէտք է կտրէր: Յաջողելու պարագային հանդիսականները մեծ ուրախութեամբ կը ծափահարէին:

Հարսը տունէն կ'ելլէր. կղբայրը դրկելով զայն ձիուն վրայ կը նստեցնէր կամ սայլին վրայ, ուր կը նստէին նաեւ կնքահայրը, հարսին բարեկամները, իսկ փեսան սուրը ձեռքը՝ սայլին առջեւը տեղ կը գրաւէր եւ այսպէս բազմութիւնը կը յառաջանար դէպի եկեղեցի: Պատկը կատարուելէ վերջ, երբ հարս ու փեսայ եկեղեցիէն դուրս կ'ելլէին, ուրախութեան ատրճանակներ կը պարպուէին եւ դարձեալ գիւղին շուրջը դառնալով, երբ փեսային դուռը հասնէին, կը կենար բազմութիւնը. նախ հարս ու փեսայ կը մտնէին ներս առաջնորդութեամբ կնքահօր եւ կնքամօր, յետոյ հանդիսականները ներս կը հրամցուէին: Հարսը իրեն համար վարագոյրով պատրաստուած մասնաւոր տեղը կը քաշուէր, ուր կ'իննէր, աղջիկներ կ'ընային հարսին հետ արձակ համարձակ տեսակցել, իսկ փեսան շատ մօտը, սուրը ձեռքը աթոռի մը վրայ կը նստէր, ուսկից կը դիտէր թէ հարսին կողմը եւ թէ բոլոր հարսնեւորները:

Կը սկսէր հարսանեկան սեղանը - մասնաւոր պատրաստուած հերիսան (քեշկէկ) եւ շատ տեսակ կերակուրներ ու անուշեղէններ, իսկ գինին փարջերով սեղանին զարդն էր: Սովորութիւն կար փեսան փախցնելու: Օրէնք էր, որ ինքը լուռ պիտի մնար: Կնքահայրը, որ փեսային հսկիչն էր, պէտք չէ որ բոլոր մը իսկ հեռանար անոր քովէն: Եթէ փախցնողները յաջողէին, կնքահայրը պարտաւոր էր կամ ոչխար մը նուիրել եւ կամ երկրորդ օրը հարսնեւորներն իր տունը հրաւիրել, կերցնել ու խմցնել: Կնքահայր ու

կնքամայր ամէն ջանք կը թափէին այդ պատիժներուն չենթարկուելու համար:

Այդ գիշեր հարսին մայրը աղջկան քով կը գիշերէր, իսկ փեսան իր տունը կը տանէր կնքահայրը: Հարսանեկան ուրախութիւնները կը շարունակուէին մինչեւ ուրբաթ գիշեր: Շաբաթ իրիկուն կնքահայրը փեսան կը վերադարձնէր տուն, բարեմաղթութիւններ կ'ընէր ու կը բաժնուէր: (Հապուսի Գիւղին Պատմութիւն. Պոստոն 1963, էջ 67-71):

ԲԱԶՄԱԾԷՆ ԳԻՒՂ

400 տունով զուտ հայաբնակ գիւղ մըն էր Բաղմաշէն 1870-ական թուականներուն: Իր հարսանիքի մասին տուած է պատկեր մը բնիկ բաղմաշէնցի Ապտալ Գոլէճ Պողոսեան, որ կը գրէ:

Սովորաբար 15 տարեկան պատանիները կը նշանէին, որոնք երկու երեք տարի նշանուած կը մնային եւ այդ միջոցին խնամիները տաղաւար եւ տօն օրերու առիթով ուրախութիւններ կը սարքէին: Տարին անգամ մը փայ կը տանէին աղջկան տունը, տասը անձեր տղուն կողմէն, նոյնքան ալ աղջկան կողմէն կը հաւաքուէին եւ մինչեւ կէս գիշեր խրախճանք տեղի կ'ունենար: Քահանան երբ նշանը օրհնէր, մատանի մը հարսնացուին մատը կը դնէր եւ այդ օրէն սկսեալ անիկա յարգանքով ու ակնածանքով կը վարուէր իր նշանածին կողմի մարդոց հետ:

Գիւղին հարսանիքը կը սկսէր հարսին համար հանդերձ գնելով քաղաքէն, որ սովորաբար մետաքսի շրջագգեստ մը, սալդա մը եւ պարսկական շալ մը կ'ըլլար, նաեւ հարսին հասակովը գլխու քող մը: Տղուն կողմէ գառնուկ մը կը կարմրցնէին, ատոր հետ պտուղ եւ անուշեղէն գնելով մեծ ծրար մը կը շինէին եւ հարսին հանգերձներն ալ միասին ութը տասը մօտիկ ազգականներ կ'առնէին եւ աղջկան տունը կ'երթային, ուր հաւաքուած կ'ըլլային անոնց

ալ բարեկամները: Սեղան կը նստէին, ճաշ կ'ընէին բարեմաղթութիւններով: Այդ միջոցին քահանան կ'օրհնէր հարսին զգեստները եւ կ'որոշուէր պսակի օրը:

Ալ երկու կողմէն կը սկսէին հարսանիքի (պսակի) պատրաստութիւն տեսնել... Կիրակի առտու երիտասարդ մը նուագախումբով տունները երթալով՝ հարսանիքի կը հրավիրէր: Ամէն տունէ հարս, աղջիկ եւ երիտասարդ կը միանային անոր եւ մեծ խումբով մը կը վերադառնային հարսնետուն...

Փեսացուին տան կողմէ կարմրցուած գառնուկ մը, հելվա, անուշեղէններ եւ պտուղներ պատրաստելով՝ կը բեռցնեն կենդանի մը վրայ, հարսնետոններէն շատեր ալ ձիով կամ կառքով, նուագախումբի առաջնորդութեամբ հարսառումի կ'երթան, եթէ հարսին տունը մօտ է, տարբեր ճամբաներով կ'երթան, որպէս զի ուրախութիւնը երկար տեւէ... Հարսին դուռը զոցուած կը գտնեն. դուռը չի բացուիր... Վերջապէս փեսային կնքահայրը նուէր մը խոստանալով՝ դուռը կը բացուի: Քանի մը ժամ ուախութենէ յետոյ քահանան կ'օրհնէ փեսային սուրը, մատանին եւ հարսին ու փեսային զգեստները...»:

Բուն «հարսնառ»էն առաջ կը յիշէ Պօղոսեան «փեսան գովելու եւ հագուեցնելու արարողութիւնը», ուր կու տայ ուրիշ կողմէ արդէն ծանօթ փեսային գովերգը՝ համառօտուած եւ աննշան տարբերակով: Յետոյ կը յիշէ հինան, որմէ վերջ «բուն հարսնառում»ի մասին կը խօսի, որուն մասնակից է փեսան ալ: Երբ հարսը դուրս կը հանեն, «Հարսնետոնները կը սկսին չամիչ, լեպլեպու եւ շաքարեղէններ տեղացիներ հարսին գլխուն. հարուստ ընտանիքներ մանր դրամ ալ կը ցանեն»:

Դէպի եկեղեցի երթը պարով է. պսակի ժամանակ «կնքահայրը սուրը եւ խաչը հարսին եւ փեսային գլխուն վրայ կը բռնէ եւ մատանիները կը փոխանակուին»: Պսակէն վերջ, դէպի փեսային տուն, շատ երկար



կը տեւէ, հազիւ երեք-չորս ժամէն կը հասնին. «փեսան դրան վրայ աքաղաղ կը մորթէ, որուն վրայէն կ'անցնի հարսը կնքամօր ընկերակցութեամբ»: Հարսանիքի ուրախութիւնները մինչեւ չորեքշաբթի կը տեւեն (տես անդ, էջ 125-36):

ԳՈՍՒՔ ԳԻՒՂ

Խարբերդի Գոմք գիւղի հարսանիքի մասին հետեւեալ սիրուն նկարագրականը ստացայ բնիկ Գոմեցի փարիզաբնակ Պր. Ծատուր Պերպերեանէն՝ մասնաւոր գիմուսի մը վրայ, 1966 Օգոս. 12: Կը յայտնեմ արտագին շնորհալութիւնս:

Հայ գիւղացին, ընդհանրապէս, իր հարսնացուն կ'ընտրէ իր գիւղէն: Հին օրերուն սովորութիւն էր, որ տղան ամուսնանար քսան տարեկանին, իսկ աղջիկը՝ ամէնէն ուշը տասնութը բոլորած:

Ամուսնութեան մէջ օրէնք էր որ հայրն ու մայրը իրենք որոշէին իրենց տղուն ճակատագիրը: Այսինքն, իրենք կ'ընտրէին այն աղջիկը, որ իբրեւ հարս պիտի դարձնէնքը հօրենական տունը: Ու կը սկսին յարաբերութիւնները: Եթէ երկուստեք համաձայն ըլլան, կ'ընեն «խօսք կապ» մը: Աւելի վերջը նշանտուք, ուր կ'որոշուի նաեւ հարսանիքին թուականը: Մինչեւ այս թուականը, ապագայ հարսն ու փեսան իրաւունք չունին միասին պտտելու կամ տեսնուելու: Կարօտով այրող այս խեղճերը սակայն ունէին միութարուելու ճամբայ մը: Տօնի օրերուն անոնք իրենց աղբարիկներուն կամ քոյրիկներուն հետ նուէրներ կը ղրկէին իրարու: Այդ նուէրները երկարատեւ կը մնային իրենց գրպաններուն մէջ:

Վերջապէս կը հասնի մեծ օրը: Առաւօտ: Օրն է չաբաթ: Յանկարծ կը լսուի ձայնը սրինգի մը, որուն կ'ընկերանայ թմբկահարը. — Տըմպ տըմպա, տըմպ տըմպա: Ուրախութեամբ համակուած ամողջ գիւղը լեզու կ'ելլէ: Հարսանիք կայ: Գիւղացի մը

տղան կը կարգէ: Կը խօսին, կը գովեն, կը պանծացնեն:

Կ'ըլլայ կէսօր: Զայները կը լռեն ու հանգիսակաները կը մտնեն ներս ճաշելու: Կերակուրէն վերջ գարձեալ նոյն թմբուկն ու սրինգը: Իրիկուան մօտ այս բազմութիւնը կը կրկնապատկուի: Ամէն կողմէ կը վազեն բաժնելու համար հարսնատիրոջ ուրախութիւնը: Կը լեցուին փողոցներ ու տանիքները: Երբ օրուան լոյսը իր տեղը տայ գիշերուան ճրագներուն, հարսնեւորները կը մտնեն ներս ու ծալապատիկ կը նստին սպիտակ սաւաններու շուրջ, ուր պղնձեայ պնակներու մէջ կը սպասարկուին զանազան աղանդներ, կերակուրներ, պտուղներ ու գինի:

Երգ, արտասանութիւն եւ անակնկալներ: Երբ կերուխումը աւարտի, փեսացուն կը տարուի յարակից սենեակ մը, ուր սափրիչը մազերը կը յարգարէ, կը սափրէ եւ անուշահոտութեամբ գլուխը կ'օծէ: Պահ մը վերջ փեսացուն շրջապատուած իր ընկերներովն ու բարեկամներովը կու գայ սրահը: Քահանան կ'օրհնէ հալաւը: Իսկ կնքահայրը կը բանայ ծրարը ու մէկ առ մէկ հագուստները կը ներկայացնէ հիւրերուն: Ասկէ վերջ փորձառու հարսնեւոր մը կը սկսի արտասանել «փեսայ գով» քառեակ մը, իսկ ուրիշներ կրկնելով զայն՝ կը հագցնեն յիշուած հագուստը խանդավառ ծափերով:

Գովասանքի պահուն, մէջընդմէջ փեսան կը ստանայ կսմիթներ զինքը գովողներէին: Նոյն իսկ թեթեւ ապտակներ: Թագադրութիւնէն վերջ կ'արտասանուի քառեակ մըն ալ, որ կը խեղդուի ծափերու տարափին մէջ:

Փեսան գովեցէ,
Ոտիցն հագցուցէ,
որ պտղաբերուի.
Թագաւորն օրհնեցէ.
Շինաւորեցէ:

Գիշեր: Հանգիսականները կը մեկնին քնանալու: Հետեւեալ առաւօտ, Կիրակի դարձեալ կը սկսին արձագանգել թմրուկին եւ սրինգին ձայները: Հարսնեւորներն ու զեղագիրները կը վերադառնան: Կարճ ատենուան մը մէջ կը կազմուի թարոր մը, որուն փայլունութեան համար գիւղացին ջանք չէ խնայած: Տեսնել պէտք է այս շինական ժողովրդի խանդն ու եռանդը: Մէկը կ'երգէ, ուրիշները կը պարեն ու կան նաեւ ձիաւորներ, որոնք իրարու հետ կը մրցին:

Այս թարորին մէջ ամէնէն հետաքրքրականները գիւղացիին սայլերն են, որ կը քաշուին պարարտ եղներով ու գոմէշներով: Ամէնն ալ զարդարուած են նախշուն բարձերով, թաղիքներով ու կապերտներով, որոնց վրայ նստած կամ կրթնած են կիները հայկական տարազներով: Երբ ամէն բան պատրաստ ըլլայ, տան տիրոջ հրամանին վրայ թարորը յամրաքայլ կը շարժի: Մինչ այդ սուրհանդակ մը կ'երթայ իմացնելու հարսին ծնողքին, որ պատրաստ ըլլան: Թարորը ուրկէ անցնի, իր ճամբուն վրայ կը գտնէ յարգանքի զեղեցիկ արտայայտութիւններ: Ըստ սովորութեան ամէն ընտանիք ավսէի մը վրայ գինի եւ զանազան անուշեղէններ շարած՝ կը մօտենայ պատուելու հարսնատէրն ու հարսնեւորները գոչելով՝ Աչքերնիդ լոս, աչքերնիդ լոս...

Երբ հասնին հարսնետունը, խումբ մը կիներ առաջնորդութեամբ փեսային մօրն ու կնքամօրը կը մօտենն անոս, կ'առնեն հարսը եւ կը վերադառնան: Այդ պահուն կը լսուի մեղմ ձայն մը, հեծկտուքի նմանող: Ու այս ձայնին հետ նաեւ երգը հարսին ընկերուհիներուն տխուր ու կերկեր.

Մի՛ լար աղուտ, մի՛,
Աչըդ կը ցափ.
Վարդի պէս կարմիր
Թուշըդ կ'աւրուի...

Մինչեւ հարսին բաժանումը իր հօրենական տունէն՝ սովորութիւն է որ փեսան թեւալար մը սկսի բոլորին ներկայութեան:

Այս պարը սակայն տարբեր է այն միւս պարերէն: Փեսային հայրն ու աները, կնքահայրն ու հարսնեւորները արծաթ ու ոսկի զրամներով կը զարդարեն թագաւորին ճակատը, այտերը, ուրկէ իրեն բաժինը ունին թմկահարն ու փողահարը: Այս պարերէն վերջ փեսան ու կնքահայրը կը դիմաւորեն հարսը, որ կը յառաջանայ կնքամօրն ու կեսրոջը հետ գէմքը գոց: Ծամբուն վրայ, սակայն, ըստ ընդունուած օրէնքին, հարսին եղբայրը կը փակէ դուռը, նուէրի մը համար: Կնքահայրը իսկոյն բան մը կը սեղմէ ափին մէջ, ու հարսը կը հանեն դուրս: Այդ պահուն թագաւորը առնելով թագուհին՝ կ'անցնին «ապրին հարսն ու փեսան» գոռացող ձայներուն մէջէն ու կը բարձրանան իրենց սայլը: (Ազգագրական Հանդէս, Թիֆլիս, 1910, էջ 142-62):

ԲԱՆՈՒԻ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Բալու քաղաքի հարսանիքի մասին մասնաւոր գրութիւն մը գտած չեմ: Չորս գրութիւն ունիմ ձեռքիս տակ, բոլորն ալ՝ Բալուի գիւղերու հարսանիքի մասին: Կու տամ հնութեան կարգով:

Ս. Ք. Տէրոյեան կը գրէ Բալուէն 1899-ին. Շատ հին ժամանակներէ ի վեր սովորութիւն եղած է, մասնաւոր Բալուի գիւղերուն մէջ, աղջիկ կամ տղայ նշանել եւ ամուսնացնել փոքրահասակ վիճակի մէջ... Մինչեւ այսօր Բալուի գիւղերուն մէջ պաշլըղի (գլխահարկ, խալան) սովորութիւնը կը մնայ գեո. Կոյսերու պաշլըղն մէկէն մինչեւ 5 ոսկի, իսկ այլրիներուն՝ հինգէն մինչեւ 10 եւ 15 ոսկի... » (Արեւելք, Կ. Պ. 1899 թ. 4005):

Յարութիւն ՔՀյ. Սարգսեան (Ալեւոր), Բալուի Թըրխէ գիւղացի, որ անշուշտ իր գիւղի սովորութիւնը կը նկարագրէ.

Նահապետական տիրող սովորոյթի մը համաձայն, գիւղացիներուն մէջ ծնողքը կ'ընտրէ իր հասնցուն կամ փեսացուն: Ամուսնութեան տարիքը քսանէն պակաս

պէտք է ըլլայ մանչուն համար, իսկ աղջիկներուն համար՝ 14 կամ 15, ատկէ աւելին, աղջկան համար, գովելի սովորութենէ դուրս է...

Երկու ծնողաց վերջնական համաձայնութենէն յետոյ, խօսքկապը կը տրուի, որ արծաթէ մատանի մըն է, կամ զոյգ մը օղ եւ կամ մահմուտիէ ոսկի մը: Պաշտօնական նշան օրհնել չեն տար քահանային, այլ կը թողուն զայն հալաւի օրհնութեան ժամանակ, բայց նշանաւորէ նշանաւորէ է. երկու կողմերու աչքի լոյսի գացողները կ'ընդունին զայն իբրեւ կատարուած իրողութիւն: Աղջիկը այլեւս՝ կը զգուշանայ նշանածին հանդիպելու, կը տափի (պահուրտել) անկէ, նոյնիսկ կը տափի կեսրայրէն, կեսուրէն...

Երբեմն նշանուած կը մնան տարիներ: Տարին երկու մեծ տաղաւարներուն փայ (բաժին) կը տանին տղուն կողմէ աղջկան: Հոն գացողներու թիւը կը հասնի 20-40 հոգիի: Տարուած «փայ»ի գլխաւոր նիւթը կը կաղմեն՝ թոնիրին մէջ խորոված ոչխար մը, խոշոր ափսէ մը անուշեղէն, որուն մէջտեղը մեծկակ նուռ մը կամ խնձոր մը դրուած կ'ըլլայ, հարսին տրուելիք հագուստներուն ծրարը զանազան գոյներով կերպասներով՝ թաշկինակ, սեւ մետաքսէ փուշիներ (եագմա), մատանիներ, արծաթեայ ապարանջաններ:

Նոյնը կը կրկնուի յաջորդ տաղաւարին... բոլոր հիւրերը հարսնցուին նուէրներ կու տան, որոնց մէջ քսաննոց (ղազի) ոսկիէն պակաս չկայ...

Վերջապէս հարսանիքի օրը կ'որոշուի աղջկան հօրմէն վերջին խօսքը առնելէն եւ անոր ձեռքը, իբրեւ պաշլըխ (գլխագին) 10-15 ոսկի դնելէն յետոյ: Կը սկսին պատրաստութիւն տեսնել, տաւուլ-գուռնան կը հնչէ, տալու համար ազգանշան գիւղացիներուն, թէ հարսանիքը սկսած է. գիշեր ցերեկ տաւուլին ու գուռնային ձայնը չի դադարիր. ամէն անգամ երկու-երեք աղջիկ կամ կիներ կը պարեն առանց իրարու ձեռք բռնելու,

թաշկինակ բռնած՝ կը խաղան վարժ ու ճկուն շարժումներով: Նոյնը նաեւ հարսին տունը, բայց միայն վերջին իրիկունն ու առաւօտը: Այդ իրիկուն հարար հագուեցնելու եւ հինայելու կ'երթան տաւուլ-գուռնայով... Վերջը կը վերադառնան փեսայի տունը, ուր փեսա-մանուկները նախ փեսան կը լողցնեն, յետոյ ճերմակեղէնները հագցնելով կը բերեն քահանային առջեւ:

Մինչ քահանան, լուսարարը կամ վարժապետը «խորհուրդ խորին» կ'երգեն ու հագուստները հատ հատ առնելով եւ գովերգելով փեսա-մանուկներուն կու տան, ասոնք իրենց կարգին հագուստին անունը տալով՝ կը գովեն:

Ըսէ՛ք շնափոր, վայլէ շնափոր,
Ըս մեր քաղտոին ելալ շնափոր:

Այսպէս կը շարունակուի մինչ գուլպաներու, կօշիկներու հագնելը: Կը պատրաստուէր «ծառը», որուն բարձրութիւնը մէկ ու կէս մետր, որուն գագաթը եօթը ճիւղ կ'ունենար ճկոյթի մը չափ հաստ: Ասոնց վրայ կը շարէին չոր ու թարմ պտուղներ. յետոյ ճիւղերուն բոլոր ծայրերը միացնելով՝ վրան մեծկակ նուռ մը կ'անցնէին զարգարուած ժապաւէններով, բամպակէ ոլորուած ճերմակ պատրոյգներով: Այս ծառը կը խորհրդանշէր փեսային ու հարսին ապագայ բարգաւաճումը, ինչպէս որ այդ պահուն նոյնիմաստ երգով ծառը կը գովեն այսպէս.

Էրբամ բերեմ գոգ մը կախաւ,
Որ գայ գովը ծառնը ծաղկեր:

Հարս ու փեսան ծառ ամկեցին,
Էկէ՛ք գովին ծառն ը ծաղկեր:

Օրհնուած թուրը կու տան փեսային իբրեւ «թագաւոր»ի, որ անով պաշտպանէ իր թագուհիին պատիւը. յետոյ մետաքսեայ թաշկինակի մը մէջ ծրարուած կարմիր, հոտաւէտ խնձոր մը, իբրեւ որդեծնութեան նշանակ, զոր քիթէն չպիտի հեռացնէ, մինչեւ հարսանիքին աւարտումը:

Այս առթիւ փեսա-մանուկները կը պոռան.

Թուրք կտրուկ թագաւորին,
Աստղը պայծառ թագաւորին,
Բախտը բանուկ թագաւորին,
Շատ տառիներ թագաւորին,
Շնաֆոր, հա շնաֆոր...

Շատ մը գիւղերու մէջ Հարսանիքներու նախօրեակը կը կատարուի Կիրակի իրիկուն, թէ՛ փեսային եւ թէ՛ Հարսին տունը: Արշալոյսէն քիչ վերջ (երկուշաբթի) նախ Հարսը առնելու կ'երթան տաւուլ-գոռնայով: Հարսին փոքր եղբայրը նախ ձին կը հեծցեն, իբր թէ ան չուզեր որ իր քոյրը տունէն բաժնուի, յետոյ անոր նուէր մը տալով՝ ձին վար կ'առնեն եւ Հարսը կը հեծցեն: Այդ ատեն գիւղի բնակիչներուն մեծ մասը դուրս կը թափուի տանիքներու, ցուիքներու վրայ՝ փեսային ու Հարսին անցքը դիտելու համար: Փեսան առջեւէն, Հարսը ետեւէն ձիով կը տարուին եկեղեցի: Պսակի ձեւը նոյն է ամէն տեղ: Փեսային բռնած թուրը կնքահայրը կ'առնէ, խաչին հետ միասին կը դնէ փեսային ու Հարսին միացած գլուխներուն վրայ:

Պսակէն յետոյ, նորէն հեծած, կու գան փեսային տունը: Տաւուլն ու գոռնան լեռ ու ձոր կը թնդացնեն, բայց այս անգամ ոչ թէ յուզիչ ու տխուր, այլ յաղթական բանակի մը քայլերդը կարծես: Այդ միջոցին վարժ ու փորձ վահան խաղացողները կը խաղան այդ հին, բայց դիւցադնական հետաքրքրաշարժ խաղը:

Տղուն ծնողքը կը սպասեն փեսան ու Հարսը ընդունելու տան դրան առջեւ, ուր Փեսային ծնողքը անոնց ճակատները համբուրելով գառնուկ կամ ուլ մը փեսային բոլորտիքը դարձնելով՝ կը մորթեն զայն դրան սեմին դրայ, որուն վրայ կոխելով պիտի անցնին Հարսն ու փեսան: Այդ օրը մինչեւ իրիկուն Հարսանիքի ամէնէն գեղեցիկ օրը կ'ըլլայ: Հարսանիքը կը տեւէ մինչեւ երեքշաբթի կէսօր, երբ նաքօտը վար

կ'առնուի: Կնքահայրը իր տունը կը տանի փեսան, ուր կը մնայ ան մինչեւ ուրբաթ, չորս օր եւ կնքահօր հետ միասին կ'այցելեն ազգականներուն եւ բարեկամներուն միշտ կերուխումով ղուարճանալով:

Ուրբաթ իրիկուն կնքահայրը փեսան տուն կը տանի, ուր պատրաստութիւն տեսնուած՝ կը սպասեն անոնց: Փեսային ծնողքը տան բոլոր անդամները փեսային ու կնքահօր հետ կ'ուրախանան, ուտելով խմելով, միայն Հարսը մէջտեղ չ'ելլեր: (Յարութիւն ՔՀՆ. Սարգիսեան, Բալու. Գահիրէ 1932, էջ 1-8)

ՀԱՆՍԻ ԳԻՒԴ

Բալուի մեծագոյն եւ անուանի գիւղն է Հաւաւ, որուն Հարսանիքը կը նկարագրէ Տիգրան Փափագեան:

Հաւաւցիներու Հարսանիքները կը կատարուէին նոյնմբեր-դեկտեմբեր ամիսներուն. կը տեւէր շաբաթ մը. պսակադրութիւնը կը կատարուէր երկուշաբթի առաւօտները... Պսակի արարողութենէն վերջ փեսան առջեւ, Հարսը ետեւ, եկեղեցիէն դուրս կ'ելլէին, ուր դրան առջեւ երկու ձիեր զարդարուած՝ պատրաստ կը սպասէին անոնց: Հարսն ու փեսան արքայազնի կը բազմեցնէին ձիերու վրայ, փեսային գիրկը մերկ թուր մը եւ գլխարկ դրուած՝ ցոյց տալու որ մինք թագ ու սուր ունեցած ենք»:

Փեսան թագաւորի պէս հպարտ, գլուխը բարձր, Հարսը թագուհիի նման բազմած ձիուն վրայ, սեւ քողով մը քողարկուած. Հարսնաջոյնն ու Հարսնեղբայրը Հարսին կողքերէն. Հարսին ու փեսային ձիերուն սանձերը բռնող փեսամանուկները գինուած վեցհարուածներով, շիք հագուած, անոնց առջեւ նոյնպէս երկու փեսամանուկներ, վեցհարուածներով գինուած, մերկ թուրերնին եւ վահաննին ամուր բռնած՝ խաղալով կը յառաջանային միշտ ու միշտ վեցհարուած պարպելով օդին մէջ, որոնց ընթացք կու տային Հարսնեւորները իրենց

զէնքերով: Ձիերու սանձերը բռնողները կը պոռային՝

Թագը րագին րագաւորին:

Հարսնեւորները կը պատասխանէին խլացուցիչ ձայներով՝ Ամէն:

Սուրը կտրուկ րագաւորին՝ Ամէն:

Աստղը փայլում րագաւորին՝ Ամէն:

Թուրք գիւղացի հանդիսականները կը զարմանային ... կատարեալ արքայական հարսանիք էր: Այսպէս էր հարսանեկան ընդունուած սովորութիւնը հաւաքներուն, հին դարերէ ի վեր պահուած: Հաւաքը հին Հայաստանի մանրանկարն էր, մեծով պզտիկով զօրապաշտ: Զէնք կրելը բոլորին ալ բաղձալի էր, արձակ համարձակ, առանց վախնալու:

Հարսանեական թաքորը գիւղի վարի ծայրէն վերի ծայրը կը պատցնէր հարսն ու փեսան՝ թագաւորի ու թագուհիի նման: Թագաւորը որուն տունին առջեւէն անցնէր, տան տէրը չամիչով, պաստեղով, գինիով սինի (ափսէ) կը հանէր. ոմանք ուլ մը կը մորթէին հարսին եւ փեսային առջեւ. բուռներով չամիչ կը նետէին հարսին ու փեսային վրայ... մուխով, ծուխով ծածկուած թաքորը կը յառաջանար մեծով պզտիկով խաղալով, խնդալով...

Թուրքեր, քիւրտեր, դրացի գիւղեր կը զարմանային, որ Հաւաք այսքան ազատութիւն կը վայելէր: Գիւղին մէջ զինուոր կար. քաղաքէն նոյնիսկ զինուորներ Հաւաք կու գային հարսանիք տեսնելու, որոնք կը հրաւիրուէին հարսնատունը, ուր զօրով գինի կը խմցնէին անոնց... Գիւղիս համբաւաւոր Պօղոս Աղա ձեւագեանը իր տղուն եւ հարսին գլուխներուն վրայ ափ մը լեցուն ոսկի ցանած էր իրենց տան դրան առջեւ՝ դեռ ձիերէն վար չիջած:

Հարսն ու փեսան ներս տանելէ վերջ կը բազմեցնէին զատ սենեակի մէջ իրարու քով, ուր պէտք է գտնուէին հարսնեօրը,

հարսնեղբայրը եւ փեսամանուկները... երիցուհին միայն իրաւունք ունէր նոր հարսին քողը վար առնելու...: (Տիգրան Ա. Փափագեան, Պատմութիւն Բալուի Հաւաք Գիւղի. Պէյրութ, 1960, էջ 136-9):

ԿԱՐԻՆԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԿԱՐԻՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Կարինի Հայոց հարսանիքի մասին հարկ է հոս շեշտել, որ հարսանեկան սովորութիւնները, քաղաքի թէ գիւղերու մէջ, շատ աւելի ճոխ, պէսպիսուն ու ժողովրդական ուրախութիւններով լի են եղած 1820-էն առաջ: Որովհետեւ Կարնոյ Առաջնորդ Կարապետ եպ. Բագրատունի (1811-1829) մասնաւոր կանոններով ուղած է սեղմել, չափաւորել եւ շատ մը բաներ ալ արգիլել: (տե՛ս Բագրատունիի գրութիւնը՝ լուծայ, 1899 նոյ. – Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան Բարձր Հայք, Ա, էջ 375-79): – Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյց 1921, էջ 212):

Սակայն հին ժողովրդական սովորութիւնը, ինչպէս կը տեսնուի համեմատականէ մը, մեծ մասով պահած է իր գոյութիւնը Բագրատունիի սեղմումներէն վերջն ալ: – Կարնոյ քաղաքի հարսանեկան սովորութեան մասին գտած ենք հետեւեալ տեղեկութիւնները:

1882-ին անստորագիր թղթակից մը Կարինէն կը գրէ.

Քաղաքիս աղջիկներու թիւը մանչերուն կրկինը ըլլալով, ծնողքը յաւէտ հոգ կ'ընեն, որ իրենց աղջիկներն անտես չմնան. ուստի ամէն տեսակ զարդերով ու մեծածախ զգեստներով զանոնք պճնել կը ջանան... իսկ մանչ ունեցող տանուտէրն երբեք փոյթ չ'ըներ իր չափահաս որդին ամուսնացնելու. այս պատճառով քաղաքիս երիտասարդներու տարիքը միջին հաշուով 30-35-ի կը հասնի...: (Հայրենիք, Կ. Պ. 1882 թ. 990):

Կարնոյ Հարսանիքի մասին ամբողջական լաւ գործիւն մը ունի Հ. Յ. Քօսեան, իր ծանօթ գեղեցիկ գործին մէջ - «Բարձր Հայք» - ուր 1910-14-ին Կարնոյ Հայ ժողովուրդին «ալեւոր անձանց» դիմելով եւ «ապրող ժողովրդեան բարքն ու վարքը դիտելով» (Բարձր Հայք, Ա., էջ Ը) կազմած է Կարնոյ քաղաքի Հարսանիքին պատկերը: Հ. Քօսեան կը գրէ.

Խնամու. Ըստ նահապետական նախկին սովորութեան, երբ ծնողք կ'ուզեն իրենց որդին ամուսնացնել, անձամբ կամ մերձաւոր ազգականներով, մանաւանդ տան երէց քահանային միջնորդութեամբ, կ'երթան այս կամ այն օրիորդին տունը «խնամուս»՝ խնամախօսութեան եւ կը խնդրեն այս կամ այն օրիորդն իրենց զաւակին հարսնութեան... Սոյն առաջին այցելութեան ժամանակ, եթէ օրիորդին ծնողքը հաճութիւն ալ ունենան տալու իրենց աղջիկը հարսնութեան, «խնամուս» եկողներու առջեւ հաստատական կամ ժխտական պատասխան մը չեն տար... մինչեւ որ խնամախօսութեան գալը կրկնուի:

Նշանտուք. - Օրիորդին ծնողաց հաւանութիւնը տրուելէ յետոյ տեղի կ'ունենայ «նշանտուք»ը. կը ղրկուի «փէյը» առհաւատչայն, մատանի մը կամ ուրիշ բան, որուն հետ կը տրուի շղարշ մը՝ «քողքը», կամ յետոյ կը տարուի քողքը:

Հարսնուս-փեսատես. - Նշանտուքէ յետոյ տեղի կ'ունենան «Հարսնտես», «Փեսատես»ի այցելութիւնները: Որոշեալ օր մը երիտասարդին ծնողքը կը հրաւիրեն իրենց մերձաւոր ազգականներէն կամ բարեկամներէն մի քանին եւ երեկոյեան կ'երթան օրիորդին տունը... Ըստ սովորութեան «Հարսնտես» գացողները կը տանին հետերնին նուէր մը հարսնցունին... դոհարեղէն, ապարանջան, օղ, նոյն իսկ աղքատ դասակարգի ծնողքը կը տանի «փուշի» մը, ոսկի մը... Սազը, սանթուրը, ջութակը անպակաս

կ'ըլլան: Առաջին մեծարանքներն ըլլալէ յետոյ, տան մէջ դտնուած մանկամարդ տիկինները կ'երթան կը բերեն հարսնացու օրիորդը, որուն երեսը գոցուած կ'ըլլայ կեսրանց տնէն ղրկուած քողովը: Սա իր կարգին հաջուած սգուած ծանրութեամբ յառաջ դալով... մեծէն մինչեւ փոքրին ձեռքը կը համբուրէ եւ յետոյ կը կանգնի սենեակին մէկ կողմը: Խրախճանքը, ուրախութիւնը, պարելը յառաջ կ'երթան, սեղանը, թէյը կը յաջորդեն իրարու մինչեւ արշալոյս կը տեսէ հարսնտեսի այս այցելութիւնը...

Շաբաթ մը ետքը աղջկան ծնողքը փոխադարձ Փեսատեսի կ'երթան: Տարիներ առաջ Փեսատեսի այցելութեան ժամանակ հարսնցու օրիորդը չէր ընկերանար ծնողքին, բայց վերջին տարիներս օրիորդն ալ ծնողքին հետ կ'երթայ Փեսատեսի, աւելի կեսրանց տան խնդրանքով...

Հիմադրէք. - Իբր ամբողջութիւն սոյն այցելութեանց, կը յաջորդէ վերջապէս «Հինայի» առաքումը: Պարսիկ-Տաճկական սովորութեան ազդեցութեան հետեւութեամբն է, որ Կարնոյ գաւառին Հայ ազգին մէջն ալ մտած է Հինայի գործածութիւնը: Պակէն երկու երեք օր առաջ, երիտասարդի ծնողքին կողմէ կը ղրկուի օրիորդին տունը Հինան, որ շաքարով զարդարուած սկտեղի մը վրայ դրուած կ'ըլլայ: Հարսանիքէն օր մը առաջ, շաբաթ երեկոյեան... ամէն ալ Հինայով կը գունաւորեն ձեռքերին. հարսնացուն ձեռքերն ու ոտքերը կը դնէ Հինան...

Հարսնաւ. - Ընդհանրապէս Կիրակի երեկոյան կը կատարուի Հարսանիքի հանգէսը: Հարսնեւորները իրենց արգուզարդով փեսային տունը հաւաքուելէ ետքը, փոքրիկ ուրախութիւն մը կը կատարեն: Տան երէցը արդէն ժամ առաջ եկած օրհնած կ'ըլլայ փեսային զգեստները, յետոյ՝ հարսին քողն ալ: Կը հագուեցնեն փեսան ջութակի, սանթուրի ձայներուն տակ եւ ջահերու, լապտերներու լուսով կ'երթան հարսն-

ցուին տունը... Հարսնացուին հրաւիրեալները նոյնպէս արդուզարգով եւ հարսը հագուած իր սիրուն զգեստները, ուրախութեամբ կը սպասեն անոնց: Հարսնառ եկողները կը միանան ասոնց... Մեծարանքները կը յաջորդեն իրարու, տեղական պարեր կը բոլորեն ջուլթակի, սանթուրի, սազի նուագով, որոնց կ'ընկերանան երգեր: Վերջապէս հարսին իր ծնողքի տունէն բաժնուելու ժամը կը գարնէ. ոտքի կ'իյլեն... ջահերու, լապտերներու լուսով ծախաբայլ կը սկսին զէպի եկեղեցի յառաջանալ: Արարողութենէ յետոյ հարսին կողմէ հրաւիրուածները կը բաժնուին միւսներէն եւ կ'երթան հարսի ծնողքին տունը շարունակելու իրենց ուրախութիւնը: Իսկ փեսային հրաւիրեալները հարսին հետ եկեղեցիէն ելլելով՝ նոյն հանդերսութեամբ կու գան «թագաւորին» տունը, ուր մինչեւ առաւօտ կ'ուրախանան, կը պարեն, կ'երգեն, սեղանն ալ անպակաս կ'ըլլայ... Երկու երեք իրիկուն կը տեւէ հարսանիքի հանգէսը եւ ուրախութիւնը: Երկրորդ կամ երրորդ օրը կը զրկուի հարսին օժիտը:

Ամուսնութեան յաջորդ երկու երեք ամիսներն անցնելէ յետոյ... տեղի կ'ունենան «Դարձ տանել»ը, որ տարին երկու երեք անգամ կը կրկնուի: (Հ. Յակոբ Մ. Վ. Քօսեան, Բարձր Հայք, Հար. Ա. Վիեննա 1925, էջ 368-74):

Կարնոյ նորագոյն շրջանի հարսանեկան սովորութեան մասին հետաքրքրական տեղեկութիւն մը կու տայ Արամ Չարըզ, որ կ'ուզենք այստեղ յիշել:

Ամուսնութեան թեկնածու երիտասարդը պէտք է ստեղծած ըլլար առանձին գործ, վաստակ եւ դիրք, անկախ իր հօր նիւթական ու բարոյական զրուլմենէն: Պէտք է դարձած ըլլար անկախ մարդ մը, կարող իր ընտանիքը լաւ ապրեցնելու: Ան իր նիւթական միջոցներով պէտք է առնէր նոր զգեստ, պարսկական շայ մը, ոսկի ապարանջան կամ այլ ոսկեղէն զարդ, որպէսզի

իր մայրը համաձակ պտտէր աղջիկներ տեսնելու եւ հաւնելու: Պէտք է պատրաստ ունենար հարսանեկան ծախքերը, որոնք նկատելի գումարի մը հասնէին: Տղուն կողմէ իր ընտանիքէն նիւթական ակնկալութիւններ ունենալը, Կարնոյ մէջ կը նկատուէր վարկաբեկիչ երեւոյթ մը: Նման երիտասարդներ կ'ենթարկուէին արհամարհանքի ոչ միայն աղջկան կամ անոր ծնողքին, այլ նաեւ հանրութեան կողմէ:

(Ղազար-Չարըզ, Յուշամատեան, Պէյրութ, 1957, էջ 352):

ԿԱՐԻՆԻ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Կարնոյ գիւղերու մէջ ալ «խալան» գոյութիւն ունեցած է անցեալին: 1880-ական թուականներուն հոն խալանը կը կոչուէր «հատեմէս», սա տարբերութեամբ, որ Կարնոյ գիւղերու մէջ «հատեմէս» վաճառողը պիտի տար 5-6 ոսկի եւ քանի մը ոսկի ալ հարսնացուին զգեստ եւ անոր եղբայրներուն «խալ» ընծայելու համար:

Կարնեցի մը 1882 փետր. 29-ին կը գրէ Կարինէն.

Քաղաքիս մօտակայ... գիւղերը իրենց աղջիկները ամուսնացնելու համար ծնողքը «հատեմէս» անունով գին մը որոշած են. ով որ կարող է վճարել, ան կ'առնէ աղջիկը: Աղքատ... կը պարտաւորի ամուրի թողուլ որդին այնչափ ժամանակ, մինչեւ կարող ըլլայ... առ նուազն Հինգ-վեց ոսկի աւելցնել, որպէս զի աղջկան ծնողքին հատուցանէ միայն անոնց հաճութիւնն ստանալու... երկու երեք տարի եւս սպասելու է, որ քանի մի ոսկի եւս ձեռք բերէ իւր հարսնացուին զգեստ եւ անոր եղբայրներուն «խալ» ընծայէ: (Հայրենիք, Կ. Պ. 1882 թ. 990):

1874-ին Կարնոյ գիւղերէն մէկուն մէջ գործող բողոքական հայ մը կու տայ հնագոյն սովորութեան մասին ակնարկ մը: Ան կը գրէ.

Մեր բնական գիւղը նեղ եւ խոր հովտի մը մէջ է: Հոս տարօրինակ սովորութիւններ

կը գտնենք: Նորածին աղջիկներ կը խօսուին (կը նշանուին) մէկ տարեկան մանչերու: Ամէն տան մէջ այսպէս խօսուած շատ աղջիկներ ու մանչեր կան... Անցեալ քանի մը օրուան մէջ ամուսնացան շատ տղաքներ, որ դեռ իրենց գօտիները չէին կարող կապել: Իմ դպրոցիս մէջ մանչ եւ աղջիկ տղոցմէ ոմանք ամուսնացած են, ոմանք ալ նշանուած: Աղջիկները կովերու եւ ուրիշ անասուններու պէս կը վաճառուին 15 մինչեւ 35 լիրայի... այրիներն աւելի յարգի են... որովհետեւ արդէն վարժ են գործի: Հարսերը հրաման չունին իրենց այրերու աղբականներէն ոմանց հետ խօսելու 40-50 տարի: Կիներ իրենց գլխուն կէսը, ծոծրակէն մինչեւ գագաթը կ'ածիլեն եւ փոխանակ մազի լաթ մը կը փաթթեն իրենց գլուխը: Նոր հարսերուն կռնակը շատ անգամ ծանր բեռներ տեսած եմ: (Ասիա, Կ. Պ. 1874 թ. 114):

ԴԵՐՋԱՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1881-ին Դերջան 135 հայաբնակ եւ տաճկաբնակ գիւղերէ բաղկացած գաւառակ մըն էր 24,000 բնակիչներով, որոնցմէ 6000-ը հայ էր: Թղթակից մը Կարնէն Պոլսոյ Մասիս թերթին ուղղուած գրութեան մը մէջ խօսելով Դերջանի մասին՝ ընդհանրապէս Հայաստանի մէջ եղած սովորութիւնը ակնարկելով կը գրէ.

Հայաստանի ամէն կողմը տիրող սովորութիւն եղած է, որ աղջիկները խիստ թանկ կը վաճառուին փեսաներուն (որովհետեւ ուշագրութեան արժանի է, որ մեր օրհնեալ երկրի կլիման էգ ծննդեան համար շատ ագահ է եւ միշտ աղջիկներու թիւը մանչերուն անբաւական է, ինչպէս վերջին վիճակագրութիւնները ցոյց կու տան): Մեծ եւ չափազանց տուրք կը պահանջէ աղջկան տէրը եւ տեղ տեղ հայրերը իրենց հարստութեան կամ բախտի մեծագոյն մասը կը համարին իրենց աղջիկները... պաշլըխ կամ դալան ինչ եւ որչափ որ սակարկուած է հարսնախօսութեան օրն, անպատճառ վճարուելու է, որ փեսան կարենայ ամուսնանալ:

Դերջանի մէջ եւս այս Պաշլըխով հարիւրաւոր հարսնախօսութիւններ կան եղեր: (Առաջնորդ) Հ. Իգնատիոս քանիցս կը յայտարարէ, կը քարոզէ, կը խօսի, դժբախտաբար ամուլ կը մնան իւր բոլոր ճիգերը... այն պատճառաբանութեամբ, որ գիւղի մէջ կատարուած հարսնախօսութիւնը Քեհեային (քահանայ) ներկայութեամբ եւ միջնորդութեամբ կը կատարուի եւ Քեհեայն ալ իւր բաժինն ունի: (Մասիս, Կ. Պ. 1881, թ. 2381):

Վահան վարդապետ՝ պատրիարքի կողմէ մասնաւոր առաքելութեամբ Հայաստան այցելած՝ կու տայ շատ կարեւոր տեղեկագիր մը Կարնոյ շրջանի գիւղախումբերէն Դերջանի մասին.

Դերջանի մէջ կան պէյեր... կաշառակերութեամբ այսինչին աղջիկն այնինչին տալով, մանաւանդ նշանտուքի եւ ամուսնութեան ատեն գիւղի մը պէյ աղջկան կողմէն 200-1000 դրշ. «Կէռտէկ» անուն տուրք մը, իսկ ծանչուն կողմէն նոյն չափով «Ագապ փայի» անուն տուրք մը կ'առնեն: Եթէ չտրուի, ամուսնացողները տասնապատիկը կը տուծեն: (Մասիս Կ. Պ. 1879 թ. 2413):

ԲԱՍԵՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Դժբախտաբար տեղական հարսանիքի մասին չեմ հանդիպած նկարագրականի մը: Հետեւեալը Բասենի շրջանին մէջ գոյութիւն ունեցած ամուսնական սովորութեան մասնակի կէտերու մասին է: Բասենի Առաջնորդական Փոխանորդ Համագասպ Վրդ. Վարդանեան իր ժողովրդին ուղղուած շրջաբերականի մը մէջ կը հրամայէ.

1. Մի անգամ ընդմիշտ վերջ տալ պաշլըղին (գլխադրամ), զոր աղջկան ծնողքը կամ պարագաները կը պահանջեն նշանուելիք երիտասարդին աղբականներէն. այդ դրամը կը հասնի Հինգէն մինչեւ երեսուն լիրայի... որ առիթ կու տայ հարազատներու բաժանման, բարեկեցիկ օճախներու քայքայման...

2. Հրաժարիլ կանխաՀաստ ամուսնութիւններէ: Յաճախ 8-էն 12 տարեկան տղաք կ'ամուսնացնեն իրարու հետ եւ շատ անգամ երկու նշանածները տարիներով կը սպասեն իրենց պսակի օրին: (Յառաջ, Կարին, 1910, թ, 19):

ՁԻԹՈՂԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1912-ին Ձիթող (Ձիթ-Հող) գիւղին մէջ ժողով գումարութիւնով՝ հետեւեալ որոշումները կ'առնուին, որմէ կը տեսնուի թէ գիւղին մէջ ինչ սովորութիւն կար հարսանիքի առթիւ.

1. Հարսնտեսի ատեն ըստ հին սովորութեան խիլա տալը իսպառ արգիւտեալ է: Միայն գործին տէրը իր կողմէն ուզած խիլայ նուէր կարող է տալ: Հանդիսականներէն ոչ ոք իրաւունք ունի մասնակցելու այդ նուիրատութեան:

2. Միեւնոյն կերպով փեսատեսի ատեն, բացի գործին տիրոջմէ, ոչ ոք պիտի մասնակցի խիլա տալու:

3. Նուագածուններու վարձը միայն տանտիրոջ կը պատկանի:

4. Արգելուած է կիներուն փայ տեսնելու երթալը եւ այդ առթիւ խիլա տալը: (Յառաջ, Կարին 1912 թ. 36):

ԲԱՐԵՐԴԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Բարերդ չէ ունեցած ամբողջական նկարագրութիւն մը հարսանիքի: Ինչ որ գտած ենք, մասնիկներ են հարսանեկան պատկերին: Դնենք այդ անջատ մասնիկները քովէ քով՝ ունենալու համար համեստ ամբողջութիւն մը:

Յ. Դարբինեան «Հարսնտես կամ Առաջին Կիրակի» վերնագրով Բարերդէն կը գրէ 1903-ին.

Հարսանիքին յաջորդող Շաբաթ իրիկունն է. հարսնատէրերը ոգեւոր իրարանցումով մը հանդիսականներուն ընդունելութեան պատրաստութիւնները կը սարքեն մինչեւ ժամը 1-2 ամէն ինչ կարգի դնելու

ջանքով: Արական լապտերաւորներու խմբակներ ծայր տալ կը սկսին, մինչ այս իրիկուան վարդը եղող սանթուր – քէմանը սկսած է... կը հրամցունին գաւառական պարեր, որոնց կը մասնակցին պառաւ ու մանկամարդ, ծերուկ ու երիտասարդ՝ կլոր շղթայ ձեւացնելով... Եւ ահա խորհրդաւոր լուսթեան պահը կը մօտենայ. նոր հարսը կու գայ հանդիսաւոր կերպով, առաջնորդութեամբ մանկամարդ հարսի մը, երկուքն ալ շղարշ քողերով: Անկիւն մը գրուած է օղի եւ ափսէ մը. հերթով ամէն ոք կ'ելլէ «աչքի լոյս»ի կը խմէ օղին, կը սահեցնէ ափսէին մէջ «առաջ քաշելէք» (հարսին նուէր) եւ «տառօսը գլխուդ, պագնենք թագդ» մաղթելով կը նստի:

Այս արարողութենէն յետոյ, որ մէկ երկու ժամ կը տեւէ, կը տրուի ճաշ մը կամ մէկմէկ զոյգ քաթա ու միրգ: (Արեւելք, Կ. Պ. 1903 թ. 5204):

Դարբինեան տարբեր առիթով մը կը գրէ Բարերդէն.

Ահաւասիկ յուզիչ կտոր մը, որ ողբաձայն կ'երգեն հասակակից աղջիկներ նոր հարսը քողքած ատեն, անոր շուրջ խմբուած.

Աղջիկը տանին կը խոշ լալով լալով,

Գլովսը կ'ապեն կը պիպպի շարով:

Մի՛ լար, աղջիկ, մի՛ լար, աշուիդ

կ'աւերի,

Քեզ պզտիկ տանողին տնիկն աւերի:

Աղջիկ, հարսնաւոգ եկաւ գեղին վերովը,

Քեզի հինալ բերաւ քղբին ծէրովը:

Մի՛ լար, աղջիկ, մի՛ լար, աշուիդ

Կ 'աւերի,

Քեզ պզտիկ տանողին տնիկն աւերի:

(Արեւելք 1908 թ. 6697):

Գեղջկական հարսանիքի աւանդական սովորութեանց մէջ խորհրդաւորն է «Փեսայի ծառը»: Փայտանիւթ արուեստական

ծառ մըն է. բուռնին եւ ճիւղերուն վրայ հիւսուած են գոյնզգոյն թելերով ծաղկակերտ նկարներ եւ թէ՛ բուռնին վրայ ու թէ՛ գլխին եւ ճիւղերուն ծայրը խնձորներ ագուցուած, չամիչի եւ խորոված կաղինի պտուղէն համրիչի ձեւով դերձանի վրայ շարած՝ ուղղակի եւ շեղակի կը զետեղեն ճիւղերուն վրայ՝ ճիշդ ջահի մը ապակեայ բոժոժներուն նման: Փեսային համատի եւ համամիտ աշխոյժ երիտասարդներ կը պատրաստեն զայն:

Կնքահայրը ծառը ձեռքը բռնած՝ փեսային աջ կողմէն՝ կ'երթան եկեղեցի: Հանդիսատես բազմութեան աչքը ծառին վրայ կը դառնայ զանազան դիտողութիւններով: Եթէ չեմ սխալիր, այս ծառը կը նշանակէ փեսային նոր կազմելիք ընտանիքը: Փեսան եւ հարսը բուն եւ գլուխն են այս ծառին (նոր ընտանիքին), զոր կը ձեւացնեն վերի ու վարի խնձորները, իսկ աջ եւ ձախ կողմի խնձորները իր նոր բարեկամներն են յանձինս կնքահօր եւ փեսաւերին:

Վերջապէս խորհրդաւոր այս ծառի խորհրդաւոր երգն ալ կայ, զոր քահանան եւ գիւղին վարժապետն ու դպրոցականները, խմորեղէններով բեռնաւորուած սեղանի մը շուրջ, դէմ առ դէմ փոխասացութեամբ կը զեղզեղեն այսպէս.

Օրհնէ՛ Յիսուս, օրհնէ՛ Քրիստոս,
Օրհնէ՛ որ այս ծառս ծաղկէ (կրկնէ)
Այն առաջին ժամանակին (կրկնէ)
Թէոդորոս Թագաւորին,
Թէոդորոս Թագաւորին,
Շնորհմն մեր թագաւորին:

Այս պահուս փեսան զգեստաւորուած, կարմիր վերարկու մը թիկունքին, ոտքի կեցած է պատկառոտ, շուրջը կնքահայրը եւ փեսաւերը.

Այս ծառիս գլխախնձոր տեսէ՛ այն
ո՞րն է (կրկնէ),
Այս ծառիս ներքնախնձոր տեսէ՛ այն
ո՞րն է (կրկնէ),

Այս ծառիս աջախնձոր տեսէ՛ այն
ո՞րն է (կրկնէ)

Այս ծառիս ձախախնձոր տեսէ՛ այն
ո՞րն է (կրկնէ):

Այս ծառիս գլխախնձոր այն թագաւորն
է (կրկնէ),

Այս ծառիս ներքնախնձոր այն
թագունին է (կրկնէ),

Այս ծառիս աջախնձոր այն կնքահայրն է
(կրկնէ),

Այս ծառիս ձախախնձոր այն
փեսադերն է (կրկնէ):

(Ծաղիկ Կ. Պ. 1891 թ. 39, էջ 7)

Բաբերդի հարսանիքի մասին երկու խօսք ունի Բաբերդցի Մաղաքիա Արսլանեան.

Ամուսութեան պարագաներուն պատասխանատու էին ծնողքը կամ տան երէց անդամները: Հարսնցու աղջկան «եօթը պորտը»՝ քննութեան կ'առնուէր, անոր բարոյականը, անցեալն ու ներկան մանրագնին կերպով կը ստուգուէր ու յետոյ համաձայնութիւն կը կայանար: Նոյնը նաեւ փեսային նկատմամբ...

«Խօսք կապի» ատեն քահանան կամ ուրիշ մը կը յայտարարէր. «Աստուածային հրամանաւ եւ կանոնիւ Ս. Հայրապետաց, ներկայ Հասարակութեան հաւանութեամբ եւ հաճութեամբ ու վկայութեամբ ձեր աղջիկը հարսնութեան կ'ուզենք»:

Ի՞նչ ըսել կ'ուզէք այս մասին»: Պատասխան. «Եթէ Աստուած կամեցեր է, ի՞նչ կրնանք ըսել»:

Ուրիշ գիւղէ մը հարս բերելու պարագային՝ ընտրուած ձիաւորներու խումբ մը կը ղրկուէր, արտակարգ շուք տալով խումբին, որ յատուկ արարողութիւններով կ'առնէր, կը բերէր հարսը: Տարիներ շարունակ հարսները տանձեծերուն հետ արտօնուած չէին խօսելու: Պարտաւոր էին արտակարգ յարգանք տածելու իրենց կնքահայրերուն

եւ տարիներ շարունակ անոնք չպիտի անցնէին կնքաձօր տան դռնէն»:

(*Մաղաբիտ Արալանեան, Բաբերդ, Փարիզ 1954, էջ 6*):

Սարգիս Ոսկերչեան (*Մեր Բայրուրը, Երեւան, 1956, էջ 92*) կը պատմէ որ Բաբերդի բացառիկ Հարսանիքի մը ժամանակ, երբ Հարսանեւորներու չուն դէպի եկեղեցի կը դիմէր եւ երաժշտական նուագը կը սկսէր Բայրուրդցիների սիրած երգը.

Ես վարէն կու գայի, դուն դուր բացիր
Ձեռքդ ծոցդ դիր, «ախ» էփր լացիր.
Դուն զիս շառար, դեմ տունը մնացիր:
Մ'էներ, տղաս, մ'էներ, դուն կ'ըլլաս փուշման,
Ան ու զարս կ'էնէ քեզի փեռուշան:

Բաբերդի Հարսանեկան սեղանին անհրաժեշտ մասն էր «ոչխարի մսով փլաւը, սոյման (չոր ծիրանով թանձր բանդակ), տապակած լոբին եւ պտուղները:

«Առջի տես» կը կոչուի Բաբերդի մէջ «առաջին դարձը», որ տեղի կ'ունենայ պսակէն քառասուն օր վերջ: (Անդ, էջ 276):

ՔՂԻԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՔՂԻԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Բնիկ Քղեցի Լեւոն Սրապեան, որ ընդարձակ յօդուածաշարք մը նուիրած է «Քղի»ի մասին, զարմանալի է, որ Քղիի Հարսանեկան սովորութիւնը գրեթէ անտեսած է: Ատոր պատճառը արդեօք ա՞յն է, որ Սրապեան կը չեղտէ, թէ Աղջիկ փախցնելու դրութիւնը Գասապայի (Քղի) մէջ շատ սովորական դարձած է: Հարսանիքի եղանակներուն, ամէն առաւօտ արթննալուս կը լսենք, որ այսինչը այնինչն է փախցուցեր: Գասապացի երիտասարդը այս կտրուկ միջոցովն է, որ շատ տեղ Գորգեան Հանգոյցը

կը լուծէ, պարապի Հանելով աղջկան կամքը կաշկանդող խել մը պարագաներ: (Արեւելք, Կ. Պ. 1901 թ. 4596):

Սրապեանի տասնուչորս գլուխէ բաղկացած երկար յօդուածաշարքէն կրնանք միայն հետեւեալ կցկտուր ծանօթութիւնը քաղել Քղի-Գասապայի Հարսանեկան սովորութեան մասին:

Ձաւակը շատ կանուխէն ամուսնացնելու սովորութիւնը ատենօք տիրող սովորութիւն դարձած էր: Թէեւ Հիմայ (1901ին) այնքան չէ, բայց բոլորովին ջնջուած ալ չէ: Որքան անրնական է եւ աղետալի է աղջիկը ամուսնացնել 16-17 տարու եւ մանչը 17-18:

Եւ գիտէ՞ք ասոր բուն շարժառիթը: Ամէն ծնողքի իաէալային բաղձանքն է չմեռած դաւակին ծլիլն տւ ծաղկիլը վայելել... Վերոյիշեալ սխալ ըմբռնումին աւելի յոռի մէկ տեսակն է նաեւ պեսիկ քերթմէն, որ ոչ նուազ ցաւալի հետեւանքներու ծնունդ կու տայ» (Արեւելք, 1901 թ. 4597):

Մինչեւ արբունքի Հասնիլը աղջիկը իր արդուգարդին հոգ չի տանիր... բայց արբունքի Հասնիլուն՝ աղջկան հագուստ կապուստն ալ պչրոտ կ'ըլլայ. - փուշի, քեմէր, դոնտուրայ, փոթին, շալեզի շրջազգեստ, խտիֆէ մանթօ, մատանի, օղեր, ապարանջաններ եւ շատ հեղ լիզի ոսկիներ չափահաս աղջկան զարդերը կը կազմեն: Ծածկոցի երեսը ծածկել սովորութիւն բնաւ չկայ Գասապայի կիներուն եւ աղջիկներուն մէջ:

Աղջիկը նշանուելէ ետքը աւելի փափուած կեանք մը կ'անցնէ. մինակ իրեններուն հետ կը տեսնուի: Քղիի մէջ իսկական սեռի ամուսնութեան տարիքն է 17-20, անկէ վեր տարիքով աղջիկները տնմնաց կը սեպուին: Հարսնութեան ատեն գէթ տարի մը տնեցւոյ հետ չի խօսիր եւ դուրսեցիներուն բնաւ չ'հրեւա: (Արեւելք, 1901 թ. 4586):

Գասապացի մանչը, թէպէտ զուրկ կըթութեան շնորհքէն, առոյգ կեանքով մը կը մեծնայ, ֆիզիքական առաւելութիւններով ալ օժտուած ըլլալով ի բնէ: Արբունքի

հասնելուն... բնութեան գեղեցկութիւններուն մէջ ծնող ու գործող առոյգ տղան լեռնեցիի աւելնին բովանդակ թափովը սրտին մէջ լայն տեղ մըն ալ կը նուիրէ գեղեցիկին: Անկեղծութեան կողմէ գեղի սէրէն չի տարբերի այս մաքուր հոգիներուն սէրը... Այս պարզուկ սէրերը կը խոստովանուին պարզուկ վայրերուն մէջ. — ընկուզենիի մը շուքին տակ կամ ժայռի մը գիրկը, ուր աղջիկը գացած կ'ըլլայ առուին ջուրը դարձնելու համար իր ածուն: Քաղաքակրթութեան շինծու կապկութիւններէն զերծ՝ այս մաքուր ու պարզ հոգիներուն սէրն ալ գերազանցօրէն մաքուր ու անձնուիրական է... երեւակայեցէք երիտասարդ մը, որ իր սիրելիի ականջին կը փսփսայ.

Ինչ որ ուզես, չէ չըսեմ քեզ,
Հոգեկա ուզես, հոգեկա տամ քեզ,
Վախիմ կը աչերս ուզես,
Ալ իմտո՞ր նայիմ ես քեզ:

Ասոնք բանաստեղծ չեն կամ աւելի ճիշտը՝ մեր հասկացած, մեր ճանչած բանաստեղծներէն չեն: Եթէ ունին մտերիմ, իրենց տաքուկ զգացմունքները արիւնէ արցունքով անոր կը բանան իրենց սէրը...

Ատեն մը դալանի տնաւեր սովորութիւնն օճախներ կը քանդէր Քղի-Գարսապայի մէջ: Ահագին գումարներ կը տրուէին տղուն կողմէն աղջկան ծնողքին: Ու եթէ ըլլար, որ մրցակիցներ ալ գտնուէին, տրուելիք գումարին քանակութիւնը ծայրայեղ համեմատութիւններ կ'առնէր եւ տունը պարտքի տակ կ'իյնար:

Հիմայ (1901-ին) գրեթէ իսպառ² ջնջուած է այս դրութիւնը: Հարսանիքները տեղի կ'ունենան լուի մնջիկ, թէպէտ ճոխ հացկերոյթներն ու նշանաւոր ծախսերը չեն պակսիր: Այս վերջիններն ալ գէթ կը

կրճատուին այն պարագային, երբ ամուսնութիւնը տեղի կ'ունենայ աղջիկ փախցնելով, երբ ժամուն պսակով ամէն բան կը վերջանայ: (Արեւելք, 1901 թ. 4596):

Կեսար» ստորագրող յօդուածագիր մը 1914-ին կը գրէր Քղիէն.

Անհաս (անչափահաս) ժամանակի մէջ կատարուող ամուսնութիւնները հայ գիւղացիութեան առողջութեան քայքայման ազդակներէն մէկը եղած է: Մասնաւորապէս Քղիի բնակչութիւնը կարծես աւելի մեծ հակում ցոյց տալ սկսած է վերջին տարիներս: Հոս աղջիկը 14 տարեկան եղածին պէս ծնողաց հոգը ուրիշ բան չէ, բայց ամուսնացնել իր զաւակը: Ու ցաւալին այն է, որ մեր 13-14 տարեկան, մայրութեան զգացման պարտականութեան մազի չափ անգամ գիտակցութիւնը չունեցող աղջիկները ակամայ հօր ու մօր քմահաճոյքին ենթարկուելով՝ կ'իյնան այնպիսի միջավայրի մը մէջ, ուր իրական փճացումը, այլասերումը իրենց կը սպասէ:

Ուրիշ մէկ բոլորովին տգեղ սովորութիւն ալ կայ, որ երթալով աւելի ու աւելի կ'աճի: Ատիկա պաշլըխի գրութիւնն է. պաշլըխը ոչ այլ ինչ է եթէ ոչ այն դրամական հատուցումը, որ տղան կ'ընէ աղջկան ծնողաց: Անասուն մը գնած ժամանակդ պազարի մէջ այնքան առարկութիւն ըրած չես ըլլար, որքան աղջիկ մը գնած ժամանակը: (Յառաջ, Կարին 1914 թ. 21):

ԽՈՒՓՍ ԳԻՒՂ

Խուփսը Քղիի մեծագոյն գիւղն է: Թէեւ ունեցած է գրագէտ մը, որ «խուփսեցի» անունին տակ թաքնուած տուած է մէկ-երկու գրութիւն, սակայն համարձակած չէ իր գիւղին- Խուփսի մասին պատմական, տեղեկագրական, ազգագրական, լեզուական ծանօթութիւններ տալ:

2 «Իսպառ» ջնջուած չէր, ինչպէս կը վկայէ վարդ «Կեսար»ի տուած վկայութիւնը, որ կը հաստատէ թէ 1914-ին «պաշլըխ» գոյութիւն ունէր Քղիի մէջ:

Խոստովանեցի անուանին տակ ունինք Հե-տեւեալ գրութիւնը՝ «Նշանատուքը Քղիի մէջ»։ Քղիի⁶ թէ իր գիւղին – Խոստով – նշանատուք ուզած է տալ։ Երբ «Խոստովանեցի» կը ստորագրէ, ինչու⁷ Քղիի նշանատուքը եւ ոչ թէ իր գիւղինը պիտի ուզէր տալ։ Թէ՛ իր ստորագրութիւնը (Խոստովանեցի) եւ թէ՛ գրութեան լեզուն Հաւանական կը դարձնեն, որ այս նկարագրութիւնը Խոստով գիւղի նշանատուքն է։ «Խոստովանեցի» կը գրէ։

Տղան աղջկան մը նշանելու համար նախ տղուն հայրն ու մայրը եւ իրենց մտերիմ բարեկամները իրենք իրենց մէջ կ'որոշեն հարսնացու աղջիկը։ Վերջը միջնորդ մը կ'ընտրեն, որ երթայ աղջկան հօրմէն ու մօրմէն խօսք առնէ։ Բաւական ճարպիկ մէկը պէտք է ըլլայ, որ կարենայ խօսք հասկցնել, համոզել եւ խօսք մը առնել աղջկան հօրը կամ մօրը բերնէն։ Որոշուած օրը, իրիկուն մը, միջնորդը փոքրիկ շիշ մը օղի կը դնէ գօտին, կ'երթայ աղջկան տունը։ Անոնք բնաւ տեղեկութիւն չունին, թէ ինչո՞ւ համար եկած է։

Սովորական «բարեւ, Աստուծոյ բարին»ներէն ետք, խօսակցութիւնը Հետզհետէ կը հասնի աղջիկ տղայ նշանելուն ու կարգելուն։ Այս միջոցին ծոցէն կը հանէ փոքրիկ շիշը, օղի մը կը լեցնէ կու տայ տան տիրոջ։ Առաջին անգամ ան չ'ուզեր առնել, մինչեւ որ չհասկնայ թէ ինչ անակնկալ մըն է. սակայն միջնորդը կը ստիպէ որ խմէ՝ քիչ մը ետք բացատրութիւն տալ խոստանալով։ Տան տէրը կ'առնէ գաւաթը ձեռքը, «Կենդանութիւն, բարի ես եկեր, հազար բարի. մեր գլխուն ու երեսին վրայ» ըսելով կը խմէ։ Միջնորդը հատ մըն ալ կը լեցնէ տան տիրոջն ինչ կու տայ. նա իր բարեմաղթութիւնը կ'ըսէ ու երեսն անգին դարձնելով կը խմէ։ Հիմայ կարգը միջնորդին է։ Օղիին գաւաթը լեցուն կ'առնէ ձեռքն ու կ'ըսէ. «Իս ըսօր խնդրանքի համար իմ էկեր ձեր տունը. ապով (ապահով) իմ օր գիս ամօթալի չսլիտի ինէք. Աստուծոյ հրամանովը այս ինչներու

կողմէն էկեր իմ ձեր աղջիկը իրեն աղին ուզելու. Կ'աղաչիմ օր ինծի խօսք մը տաք»։

Աղջկան հայրն ու մայրը իրարու վրայ կը նետեն վերջին խօսք մը տալը եւ միջնորդին կ'ըսեն թէ. «Աղջիկ մը թող քու խատան առնէ, սակայն աճապարանքով բան չ'ըլլար. մենք ալ մեզի տնինք վերցնինք, վերջը ձեզի խապար մը կու տանք. Աստուած օր խըսմէթ է էրեր, միք (մենք) ինչ կրնանք ըսեր»։ - Մինչ տան մէջ այդ խօսակցութիւնները կը դառնան, փեսացու տղան կամացուկ քայլերով եկած է երդիքը, ականջը տուած է փութերիկին՝ իմանալու համար թէ ի՞նչ որոշում պիտի տրուի...

Միջնորդը քանի մը անգամ եւս կ'երթայ կու դայ եւ վերջապէս կը յաջողի խօսք առնել։ Հետզհետէ պատրաստութիւն կը տեսնեն՝ մէկ երկու շաբաթէն նշանատուքն ընելու համար։ Երկու կողմէն որոշուած օրը կը կատարեն նշանատուքի հանդէսը թէ՛ աղջկան եւ թէ՛ տղուն տունը։ Այդ օրը մինչեւ իրիկուն կերակուր կը պատրաստեն, խորովու եւ գաթայ կ'սփեն։ Իրիկունը (գիշերը) ժամը 1-ի առնները տղուն կողմէն հայրը, մայրը, քաւորը, քահանան, աղագականներ եւ բարեկամներ կ'երթան աղջկան տունը, հետեւին կը տանին օղի, գինի, կերակուրներ ու աղջկան տալիք նշանը – շարուած ոսկի ու մատանի։

Օղի խմելէ ետք քահանան ու հանդիսականները ոտքի կ'ելլեն. քահանան կ'օրհնէ նշանը եւ կու տայ աղջկան հօրը, նա կը համբուրէ, կը դնէ գլխուն վրայ, յետոյ կու տայ տղուն հօրը, նա ալ նոյնպէս եւ բոլոր հանդիսականները. ամէնէն վերջը կու տան աղջկան մօրը։ Քահանան կը մեկնի շնորհաւորելով նշանախօսութիւնը. - «Աստուած շնորհաւոր էնէ»։ Հանդիսականները կը սկսին ուտել, խմել եւ ուրախութիւն ընել։

Վաղը մայր բաժոււ,

Այսօր եկած եմ, վաղը կը տանին.

Տանին, քող տանին,

Ձատկին կը բերեն։

Խնձոր Բաղեցե՛ք, գօտի շառեցե՛ք,
Կամուրջ կապեցե՛ք,
Հաւսնուկն անցուցե՛ք եւն։

Երգեցողութեան ընթացքին մայրը զգացուած՝ կը գրկէ իր աղջիկը ու կը սկսի լալ։ Աղջիկն իր կարգին տունէն բաժնուելուն համար կը գրկէ իր մայրը եւ կու լայ։

Պսակ. — Յետոյ հարսնետոնները կ'առնեն տունէն նոր փեսան, տաւուլ-դուռնան եւ կամ տիկզարը եւ կը դիմեն հարսին տունը, որուն զրան առջեւ, փողոցին մէջ կը սկսին պարել։

Հարսին տունէն գինի եւ օղի կը բերուի հարսնաւորներուն բաժնուելու համար։ Մինչեւ որ հարսը դուրս հանեն տունէն, կնքահայրը իր մերկացուցած սուրը ձեռքին՝ փեսայի աջ կողմը կը կանգնի, իսկ ծառը բռնող ազապը՝ անոր ձախ կողմը։ Յետոյ նուագի առաջնորդութեամբ թափորը կը դիմէ դէպի եկեղեցի։

Նախ քահանան կ'առնէ սուրը կնքահօր ձեռքէն. կը բացատրէ սուրին նշանակութիւնը, թէ ինչպէս սուրով պէտք է պաշտպանել ընտանիքի պատիւը, յետոյ սուրը օրհնելով՝ կը կապէ փեսայի մէջքին։

Պսակի արարողութենէն վերջ, քահանան շուրջառը վրան, դպիրները շապիկով, ծնծղամեհով եւ երգելով՝ թափորը կ'առաջնորդեն փեսային տունը։ Տան առջեւ եկեղեցական երգերը կը դադարին ու կը սկսի նուագը։ Հարսն ու փեսան կանգնած են իրար քով։ Կու գայ փեսային հայրը եւ իր կարողութեան համաձայն եղի մը, կովի մը եւ կամ ոչխարի մը աղանջին ծայրէն կը կտրէ։ Ատիկա կ'ըլլայ առաջին նուէրը հարսին։ Եւ բազմութիւնը կը կանչէ. - Այս հանդէսին ոչ տղան ներկայ է եւ ոչ աղջիկը։ Կան աղջիկներ, որ այդ գիշեր մինչեւ լոյս կու լան՝ քանի մը օր ետքն իրենց հօրը տունէն ելլելուն համար» (Բիւրակն, Կ. Պ. 1898 թ. 39, էջ 697-8)։

ՀԱԳԱՍՏՈՒՆ ԳԻՒՂ

Քղիի Հագստուն գիւղի հարսանիքի մասին նկարագրական մը տուած է Գ. Տէր Կարապետեան 1932-ին։ Ան կը պատմէ.

Մօտ յիսուն տարի առաջ այսպէս տեղի կ'ունենային հարսանիքները Քղիի Հագստուն գիւղին մէջ. - Հարսը իբրեւ օրուան «Թագուհին» գլխուն կը դնէր կլոր թագ մը, շուրջը, ճակտին երկու կողմը, մետաքս բարակ փուշիներ, որոնցմէ կախուած էին ոսկի եւ արծաթ մանր դրամներ։ Հագած կ'ըլլար խութնի դումաշէ պատրաստուած դունաւոր հագուստներ։

Փեսան կը կրէր լայն չուխա շալվար, մէջքին պարսկական շալ գօտի։ Պատրաստուած կ'ըլլար հարսանիքի փայտեայ ծառ մը, մօտ երկու ոտք բարձրութեամբ, ծայրերը խաչաձեւ, որոնց անցուած կ'ըլլար մէկ-մէկ կարմիր խնձոր եւ ապա զանազան չոր պտուղներ կախուած։ Իւրաքանչիւր պտուղի մէջտեղ բամբակի կտոր մը՝ իբրեւ ձմրան նշան։ Այդ զարդարուն ծառը կը բռնէր ազապ երիտասարդ մը, որ կանգնած կ'ըլլար փեսային կողքին։ Անոր մօտ կնքահայրը ձեռքը բռնած սուր մը, իբրեւ պահապանը թագաւորին։

Հարսանիքը կը սկսէր Շաբաթ իրիկուրեքնէ եւ կը տեւէր երեք օր։ Նախ քահանան կ'օրհնէր աղջկան հագուստը։ Անկէ վերջ կը սկսէր երիտասարդ աղջիկներու եւ տղաներու երգեցողութիւնը.

Ժառում ժառժառում,
Վաղը մայր բաժում,
Այսօր եկած են, վաղը կը տանին.
Տանին, թող տանին,
Վաղը կը բերեն։

Ժառում ժառժառում, «Կեցցէ, ոտքը ուղուրլու ըլլայ, մէկ բարձի վրայ ծերանան» եւ կը սկսին նուէրները։ Ամէն մէկը բան մը կու տայ. - Կնքահայրը սուրը առնելով փեսայէն ու զայն մերկացնելով կը

բռնե՛լ դուռին վրայ եւ հարսն ու փեսան ա-
նոր տակէն կ'անցնին ներս:

Կերուխումէ եւ պարելէ յետոյ, վերջին
օրը քահանան նարօտները կը քակէ, ազատ
կ'արձակէ նորապսակ զոյգը: Փեսային ծա-
ռը այդ տեղ կը մերկացուի իր վարդերէն եւ
պտուղները կը բաժնուին երկսեռ ամուրի-
ներուն իբրեւ տառոս: Հայրենիք 1932, թ.
6017:

Ծանօթ.-Այստեղ նշուած աղբիւրի մէջ
(Հայրենիք 1932, թ. 6017) նման գրութիւն
չկայ: Զկրցանք այդ յօդուածի տեղը դտնել:
(Խմբագրութիւն)

ԱԳՐԱԿ ԳԻՒՂ

Պատմել տալով գրի առած եւ 1968-ին,
60 տարեկան Ագրակցի Պր. Կարապետ Նո-
րոյեանէ (Իսթանպուլ):

Նշանուորք. - Եթէ հարսնցուն գիւղին
մէջէն ըլլայ, մանչուն հայրը եւ կնքահայ-
րը, մէկ երկու ծանօթ ալ իրենց հետ առնե-
լով՝ կ'երթան իրենց հաւնած աղջկան տու-
նը եւ հոն տան մեծին հետ խօսելով՝ կ'ըսեն.
«Աստուծոյ հրամանով եկած՝ աղջիկդ կ'ու-
զենք մեր տղուն համար»: Ան կ'ըսէ. «Ամե-
նայն սիրով»: Կը կանչեն գիւղին քահա-
նան, որ նշանը կ'օրհնէ: Նշանը կ'ըլլայ մա-
տանի մը: Պսակը շատ չեն ուշացներ: Այս
առիթով օրը կ'որոշուի: Ատիկա կ'ըլլայ շա-
բաթ մը, 10 օր կամ ամիս մը վերջ:

Հարսանիքին 2 օր մնացած՝ դրացիներ-
ը փեսային կամ հարսին տունը կը հաւա-
քուին մոմ պատրաստելու համար: Առտու
մը այդ մոմերը կը բաժնեն ամբողջ գիւղին:
Պսակին նախորդ օրը աղջկան կնքամայրը
եւ մանչուն կնքահայրը մանչուն տունը
երթալով հինայ կը դնեն ձեռքի եւ ոտքի
մատներուն: Կնքահայրը փեսային տունը
կը պատրաստէ հարսանիքի յատուկ ծառը,
որ կ'ըլլայ ամէն տեսակ պտուղներով զար-
դարուած: Մօտաւորապէս կէս մետր երկար
այս «ծառ»ին վրայ կը հաստատուի աստ-
ղածեւ ուտելիք մը: Կնքահայրը այս ծառը

ձեռքին՝ մինչեւ եկեղեցի եւ եկեղեցիէն
տուն կը քալէ:

Պսակի օրը կնքահայրը փեսան հարսին
տունը տանելով՝ աղջիկը կ'առնէ եւ եկեղե-
ցի կ'երթան: Ասիկա տեղի կ'ունենայ երգով,
խաղով, տաւուլ-զուռնայով, ուրախ կանչե-
րով: Կնքահայրը մանչուն ու աղջկան մէջ-
տեղէն կը քալէ: Երբ եկեղեցի կը հասնին,
ժամկոչը եկեղեցիի դուռը գոցած՝ նուէրի
կը սպասէ: Կնքահայրն է, որ գոհացում
կուտայ եւ դուռը կը բացուի: Հարսնեւոր-
ները բոլորն ալ եկեղեցի կը մտնեն: Պսակի
ժամանակ սովորութիւն է փեսային, հար-
սին եւ կնքահօրը մեղրով պատրաստուած
անոյշ խմելիք մը հրամցնել, որ յետոյ բոլոր
ներկաներուն ալ զաւաթներով կը տրուի:
Եկեղեցիէն ելլելէ յետոյ քահանան առջե-
ւէն, երգեցիկ տղաքը անոր շուրջը՝ երգելով
դէպի փեսային տունը կ'երթան: Ծամբան
պարը, երգը, ուրախ կանչերը անպակաս
են: Տուներու վրայէն՝ հարսին վրայ չոր
պտուղներ կը ցանեն: Տնեցիները հարսին
կը նուիրեն տեսակ տեսակ նուէրներ, ինչ որ
իրենց սրտէն կը բխի:

Փեսային տան առջեւ հասած ատեն եղ
մը կամ հորթ մը կը մորթնեն եւ կը մտնեն
հարսնետուն, ուր հարսը կը մեկուսացուի
անկիւն մը՝ վարագոյրով զատուած, իր քո-
վը կ'ունենայ կնքամայրը: Իսկ փեսան կը
մասնակցի հարսանեկան ուրախութիւննե-
րուն՝ միշտ իր քով ունենալով կնքահայրը:
Կերուխումը կը տեւէ մինչեւ ուշ գիշեր: Ու-
տել-խմելիքները բերուած են նաեւ գիւղա-
ցիներէն: Հարսանիքը կը տեւէ շաբաթ մը:

Առաջին գիշերը փեսան հիւրն է կնքա-
հօր տանը, իսկ հարսը կը մնայ տղուն տու-
նը: Կնքամօր հսկողութեան տակ, երկրորդ
օրը, առտու կանուխէն տաւուլ-զուռնայով
կ'երթան փեսան բերելու հանդիսաբար իր
տունը: Հոս կնքահայր ու կնքամայր հարսն
ու փեսան իրարու հետ կը միացնեն եւ հար-
սանիքի ուրախութիւնները կը շարունա-
կուին: Հարսը միշտ ծածկուած է քողով մը,

որ կը տեւէ ոչ երկար. կեսուրը նուէր մը տալով՝ հարսին քողը վար կ'առնէ, բայց հարսը միշտ լուռ ու մունջ կը մնայ մեծերուն հանդէպ:

Լեւոն Սրապեան (Քղեցի) կը գրէ որ «Ստիպողական պարագաներու մէջ Քղիի շրջանին, թոնիրի վրայ կը կատարեն պսակադրութիւնը, առանց եկեղեցի երթալու»: Նոյնպէս «Թոնիրի վրայ վար կ'առնուի հարսանիքի պսակը. այդ սովորութիւնը պսակէն քանի մը օր վերջ տեղի կ'ունենայ» (Բիւրակն, Կ. Պ. 1900, էջ 626):

ՉՄԾԿԱԾԱԳԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՉՄԾԿԱԾԱԳԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Խ. Չոլագեան չմշկածաղցի, տուած է հետեւեալ նկարագրութիւնը 1891-ի սկիզբները: Կ'ամփոփենք:

Հինգշաբթի էր. դրացի կիներ միահամուռ կը դիմէին դէպի Գաբիկ աղբօր տունը, կը թուէր ինձ, թէ պարտականութիւն մը կատարելու համար: Հետաքրքրուած՝ հարցուցի պառաւ կնոջ մը. «Տարոսը քղի, ողու, Գաբիկ աղբարը տղան կը ծաղկցնէ էս օր շնաւորում կենին», պատասխանեց:

Կիներուն բազմութիւնը երթալով կը խռնուէր. ըստ սովորութեան մէկը, տասը կը խմէ. միւսներն ալ կը խմեն բարեմաղթութիւններով: Ծաշէն վերջ լուացուիլն արդիւրուած է, մի գուցէ հարսին եւ փեսային շնորհքը կը փախչի:

Գաբիկ աղբար մի քանի երիտասարդներու խնձոր կը բաժնէ եւ կը պատուիրէ ուրոշ տուներ երթալ, տան աղային կամ տանտիկնոջ հատ մը տալով հարսանիքի հրաւիրել՝ «Գացէք, բարեւ երէք իմ բերնէս, թող վաղը հարսանիք հրամանն»:

Բարեկամները ամէն կողմէ կը սկսին գալ, աւելի քան 50 հրաւիրեալներ: Ծաշատեսակներն էին՝ եահնի, տոլմա եւ փիլաւ:

Ընթրիքէն վերջ ամէն կողմէ ձայներ. «Հայտէ նայինք, զուռնաճի, պաշլացէ, քաղցողներ քղի կը նային»: Երկու երիտասարդներ կը սկսին պարել: Հանդիսատեսք իրենց ձեռքը երկու տասնոց կամ քսան փարանոց առած՝ մի առ մի պարողներուն ճակատը կը փակցնէին:

Դրամները զուռնաճիին համար էին: Պարն ու խօսակցութիւնը կը տեւէր մինչեւ գիշեր:

Հարսնաւ. — Շաբաթ օրը կը լուսանար... Ժամը 4-ին հարսնեւորները սկսան հաւաքուիլ փեսային տունը. ձիերով, ջորիներով պիտի երթային 85 տուն բնակիչներով գիւղ մը:

Մինչ այդ հարսի տան մէջ կը լսուէր աղջկանց ողբաձայն երգն ու հարսին լացը, հեծկտանք մը:

Աղջիկ մը կը տանին արով ու լալով,
Մագներն ըլ կը հիստեն սըռմաի թելով,
Գլովսն ըլ կը փաթքեն լահոռի շալով:

Լեռներն ի վեր կ'երթաս կանանց մօրի է,
Զատած հօրէտ մօրէտ էս ի՞նտոր օր է,
Աղջիկներուն լացը մէկ երկու օր է:

Մի՛ լար, աղջիկ, մի՛ լար, աշիգ կ'աւրի,
Քեզ պզտիկ տանողին տնակն աւրի:

Տաւուլը բլրակի մը ետեւէն կ'իմացնէր հարսնաւորաց գալը: Տուներու մէջ մարդ էր մնացեր: Հարսնառի հարսնաւորները երբ հասան, հարսնետան դուռը դոցուած էր. հարսնցուի ընկերուհիները կը գոչէին. «Փունջի փարան չտուած՝ ներս էք կրնար մտնել»: Այս աղջիկները օր առաջ մէկ մէկ խոշորկեկ մետաքսեայ փունջ շինելով՝ պատրաստած էին հարսնցուին ճակատը ձգելու: Կնքահայրը 10 դահեկան տալով՝ դուռը բացուեցաւ:

Այրերն ու կիները զատ զատ սենեակներու մէջ հրաւիրուեցան: Հարսնցուի մայ-

րը, քոյրերը եւ մօտաւոր ազգականներ հաւաքուած անոր վիզն ինկած՝ գովասանքներ կ'երգէին:

Սուտ ըսին ու իրացուցին, գառնուկ,
 Խըռ ձին դուր կայնըցուցին, եսվրում,
 Ոտքերդ հանեցին գոգոս, խուզիս,
 Ձեռքերդ հանեցին ծոցուս:

Ընթրիքէն վերջ քահանան նշանը օրհնեց: Զուռնայի եւ տաւուլի ձայներն սկսան. 2 պարողներ պէտք է տեղացիներէն ընտրուէին: Կիներուն կողմէ 20-30 հարս ու աղջիկ խառն պարերով կը զուարճանային տեղական Հէրէներ երգելով:

Գիշերը բուն շունիմ պսոկիմ քնանամ,
 Ես էս եւրամետուն ի՞նտոր դիմանամ,
 Թղթիկ մըլ գըրէ որ տէրտըլ իմանամ:
 Աշունը տի գայիր, ու՞ր մնաց գալըդ,
 Հէջ գըրել չէր ուզեր որ էս եր հալըդ:

Այսպէս պարելով խնդալով եղաւ ժամը 6-7: Հիւրերը մեկնեցան. չափահաս աղջիկներ միայն մնացին հարսնացուին տունը:

Կիւրակէ առաւօտ... կիներ ուրիշ պարտք մըն ալ ունէին՝ երթալ հարսնացուն, մայրը եւ ազգականները լացնել: Եկան խռնուեցան, հարսնացուի սենեակը եւ խղճալի ձայնով սկսան երգել:

Ժամը 8-ն էր. զուռնան ու տաւուլը հարսնետան դրան առջեւ տխուր եղանակներ կը նուագէին: Նշան էր հարսնեւորներուն մեկնելու պատրաստութեան: Զիւրն ու ջորիները պատրաստ էին: Ամէն մէկը իր կենդանիին վրայ նստած՝ կը հաւաքուէին գիւղէն դուրս տափարակ տեղ մը՝ իրենց ազգականներուն հետ միացնելով հրացաններու բոմբիւնը: Կնքահայրն ու կնքամայրը միայն մնացին մինչեւ վերջը, հարսը ձի դնելու եւ միասին մեկնելու համար: Հարսը երկու կողմէն բռնած դրին ձիու վրայ եւ անոր առջեւ փոքրիկ եղբայրը, իբր յենարան

անոր ծռած գլխուն, եւ քովնտի բռնելով երկու հարսնեղբայրներ մեկնեցան գոչելով՝ «վերտըք» պիր սողան, ալտըգ պիր սողան»:

Պսակադրութիւն. - Երկուշաբթի առաւօտ կանուխ հարսնեւորները հարսնետան մէջ կը հաւաքուէին: Յետոյ զուռնայի եւ տաւուլի առաջնորդութեամբ, փեսան ալ միասին, կ'երթային կնքահօր տունը, ուր երկու կիներ ներս մտնելով՝ հարսը դուրս կը բերէին: Դարձեալ հրացանի բոմբիւններ: Քահանան պատրաստ կը սպասէր եկեղեցւոյ դրան առջեւ: Պսակի խորհուրդը կատարուեցաւ. երգեցիկ խումբը փեսային ու հարսին առջեւէն սկսաւ յամրաքայլ երթալ՝ երգելով «Առաւօտ լուսոյ»: Փողոցներու մէջ, ամէն տան առջեւ օղիներով, մեկաներով պատրաստ սեղաններ. բաժակները բարեմաղթութիւններով կը պարպուէին. - «Ուղուրլու խատթնմիլ ըլի, մէկ հացով մէկ բարձով ծերանան»: Գաբիկ աղբար եւ տիկիներ, ըստ հնաւանդ սովորութեան, պարեցին: Փողոցին մէջէն մինչեւ հարսնետուն տեղական գեղեցիկահիւս գորգերու վրայէն հարսն ու փեսան անցուցին: Դեռ ներս չմտած՝ հարսին գլխուն վրայ եազմաներու եւ այլ նուէրներու շնոր մը դիզուեցաւ ազգականներու եւ բարեկամներու կողմէ: Տան ներսը, Սառա Խաթուն իր աջ թեւը բարձրացած հորիզոնական ձեւով՝ հարսն ու փեսան տակէն կ'անցնէին, ապագային իր հրամանէն դուրս չեկելու համար:

Այսօր, ճաշելէն վերջ, հարսնեւորները մինչեւ երեկոյ հրաւիրուելով դրացիներուն տունները եւ երեկոյեան դարձեալ հարսնետունը ընթրելէն վերջ, ամէն մարդ մեկնեցաւ իր տունը: (Ծաղիկ, Կ. Պ. 1890 թ. 23-24):

ՉԱՐՍԱՆԾԱԳԻ ԳԻԻՂԵՐՈՒ
 ՀԱՐՍԱՆԻՔը

Նշանաւոր. - Տղուն ծնողքը իրենց կնքահօր հետ աղջկան տունը կ'երթան... Կնքահայրը խօսք առնելով կ'ըսէ. «Այսօր

Հոս եկած ենք խիստ բարի գործի մը համար եւ կ'ուզենք, որ Աստուծոյ հրամանով Ձեր հետ խնամակա՛ն բարեկամութիւն հաստատենք: Մեր բուռն փափաքն է, որ Ձեր աղջիկը մեր տղուն հետ նշանենք... Խօսքը Ձերն է...»: Աղջկան ծնողքը պահ մը առանձնանալէ յետոյ, կը վերադառնան ու կը պատասխանեն. «Եթէ տէրը կամեցած է, մենք ըսելիք չունինք, միայն թէ կ'ուզենք հօրեղբորը կամքը առնել, անկէ յետոյ Ձեզի լուր կու տանք»: Երկու շաբաթ վերջ տղուն ծնողքը եւ կնքահայր-կնքամայրը իրենց հետ առնելով նշանի մատանին, գոյգ մը օղ, առատ ըմպելիք, ուտելիք ու պտուղ՝ աղջկան տունը կ'երթան: Հոն կ'ըլլայ աղջկան հօրեղբայրը. կը կանչուի նաեւ ծխատէր քահանան: Սեղանը պատրաստ է: Քահանան կ'օրհնէ զայն: Կը սկսի կերուխումը: Այդ միջոցին մէջտեղ կու գայ նշանի մատանին եւ կը կատարուի կրօնական արարողութիւնը: Կը մաղթեն աչքի լոյս: Նշանտուքը կը տեւէ վեց ամիս, տարի մը, երբեմն աւելի, մինչեւ որ հարսանիքի պատրաստութեան ձեռնարկուի:

Հարսանիք. — Ձարսանճագի մէջ հարսանիքը կը սկսի Յիսնակի պահոց վերջին ուրբաթ իրիկունը: Այդ պահուն մասը մը հրաւիրեալներ կը հաւաքուին տղուն տունը, շաբաթ օր, հարսնառումի երթալու համար: Այդ առիթով կ'ուտին հարսանիքի յատուկ փերփէրը կարմիր գինիով: Տղուն ծնողքը, ուրբաթ օր, ընտիր ոչխար մը կը զրկէ խնամոնց տունը, շաբաթ օրուան հարսնեւորներուն պատրաստութիւն տեսնելու համար: Այդ ոչխարը կը կոչուի «աղուէսուկ»:³

Շաբաթ առտունէ սկսեալ տաւուլճին ու գուռնաճին ամբողջ գիւղը շարժման մէջ կը դնեն: Գիւղը տօնական բնոյթ կը ստանայ: Գիւղին ամբողջ բնակչութիւնը, առանց ազգի եւ կրօնի խտրութեան, ուրախ

տրամադրութիւն կ'ունենան... երիտասարդները հագուած, շքուած, վիզերնին կարմիր, նախշուն թաշկինակներ կապած, ձեռք ձեռքի բռնած եւ կողք կողքի տուած՝ Հալալի Կէօվէնտ եւ ուրիշ պարեր կը քաշեն տաւուլ-գուռնայի առաջնորդութեամբ:

Անդին հարսին տունը նոյնպէս եռուզեռու մէջ է: Գիւղին նոր հարսերն ու աղջիկները իրենց դոյնգոյն, վայելուչ տարազները հագած եւ հարսնացուն շուրջը հաւաքուած՝ ջութակի եւ զիլլիտէֆի նուագով ձեռք ձեռքի տուած՝ կլորակ կը կազմեն եւ մեղմ, թրթռուն ձայնով կը պարեն ու կ'երգեն:

Կէսօրէն յետոյ հարսնեւորները կը հաւաքուին տղուն տունը, կազմ ու պատրաստ հարսնառումի երթալու համար: Հարսին տունը տարուելիք բոլոր իրեղէնները կը բերեն երկու սինիներու վրայ դրուած: Մէկ սինին մէջտեղը դրուած է խորոված խոշոր գառ մը, որուն երկու կողմերը շարուած են 12 խորովուած հաւեր եւ երկայնավիզ խոշոր դդումը՝ կարմիր գինիով լի: Ամէն հաւի վրայ մոմ մը, խոշոր մոմ մըն ալ գառնուկին վրայ: Հաւերուն քով դրուած են նուռ, սերկելի կամ կարմիր խնձոր: Մեծ սեխ մը կը հանգչի գառին վրայ: Այս բոլորը ծածկուած է սաւանով մը: Երկրորդ սինին վրայ զետեղուած է հարսին հալաւի ծրարը: Ծրարին վրայ դրուած են երեք տուփ - մէկուն մէջ հարսանեկան մատանին, միւսին մէջ ապարանջանը, երրորդին մէջ գոյգ մը օղ: Ծրարին շուրջը շարուած են 12 նուռ, սերկելի կամ խնձոր, բոլորտիքն ալ անուշեղէններով եւ չոր պտուղներով պնակներ: Ծրարին վրայ կայ նաեւ տուփ մը հինայ: Այս սիններուն քով կանգնած են երեք երիտասարդներ:

Կնքամայրը, երէցիկներ, փեսային մայրը եւ 12 կիներ մետաքսէ շղարչներով, ինչպէս նաեւ բոլոր հասնեւորները տաւուլ-

3 Ինչպէս տեսանք, ուրիշ տեղերու մէջ ոչ թէ ոչխարը, այլ ոչխար տանողը կը կոչուէր «աղուէս»:

զուգուցե՛ք Կաթողիկոսին: Երբ խնամոնց տան մօտենան, տան ծառան կամ երիտասարդ մը դուռը գոցելով՝ նուէր կը պահանջէ: Բարի գալուստ կը մաղթուի օղիով եւ գինիով, որմէ վերջ կը սկսի կերուխումը, ուր կայ մանաւանդ կլորիկ քուֆթան, որ իր համով կը գերազանցէ բոլոր ուտելիքները: Շատ չանցած՝ քահանան կը կատարէ հալաւօրհնէքը, կը վառէ 12 մոմեր...

Կարգը կու գայ Հինային: Օրիորդ մը Հինային պնակը ձեռքին՝ կը պարէ տաւուլ-զուգուցի նուագով: Պարին կը մասնակցին ուրիշ օրիորդներ եւ երիտասարդներ: Պարէն յետոյ հարսին ձեռքերն ու ոտքերը կը Հինային: Գիշերը ուշ ատեն կը ցրուին հարսնեւորները:

Կիրակի առտունէ մինչեւ իրիկուն կը պարեն հալայի եւ կէօվէնտ: Իրիկունը փեսային հալաւ օրհնելու եւ զինքը գովելու օրն է: Բոլոր հարսնեւորները հաւաքուած են փեսային տունը. սեղանը պատրաստ է ամէն տեսակ ուտելիքներով, յատկապէս պեղա անուսով բոյս մը, որ ծնեքեկի նման է, որ աղը կամ թթուն դրուած ըլլալով՝ հոս իբր մազա կը գործածեն: Խատեղծին (մատուռակ) անդադար գինի կը մատուռակէ բոլորին: Վերջապէս փեսան ածիլուած, մաքրուած, գլխուն վրայ ապա մը ձգուած՝ կնքահօր եւ 12 փեսա-մանուկներու առաջնորդութեամբ կը բերուի եւ խաչն ու սուրը անոր վրայ դնելով՝ կը կատարուի հալաւի օրհնութիւնը, որուն կը յաջորդէ փեսային գովքը եւ զգեստաւորումը. տիրացուն կ'երգէ նախ «Խորհուրդ խորին» եւ կը սկսին հագուեցնել փեսան երգելով.

Ասէ՛ք շնատր հա՛յ, ըս թագուրին հալարը
շնատր, վայլէ շնատր,

Հագուցե՛ք ըս թագուրին չոխա շալվարն, ա-
սէ՛ք շնատր,

Ասէ՛ք շնատր հա՛յ, վայլէ շնատր, ըս մանկիկ
թագուրին շալվարը շնատր:

Հագուցե՛ք այս խոբնի ելկէկն, հագուցե՛ք,
կուրծին ոսկի ալմաստ կոնակները.

Ասէ՛ք շնատր հա՛յ, վայլէ շնատր, ըս թագու-
րի խոբնի ելկէկն կոնեցե՛ք. շնատր:

Հագուցե՛ք այս չոխա սալքէկն, հագուցե՛ք,
ուսերուն վրայ ոսկեթել փնչիկ կաւեցե՛ք.

Ասէ՛ք շնատր հա՛յ, վայլէ շնատր, ըս թագու-
րին չոխա սալքէկ, շնատր եւմ.:

Հայրը համբուրելով զաւակը, պատ-
շաճ օրհնութիւնը կու տայ. «Տղաս, մօրդ
տուած սրբազան վրէժի պատգամը մի մոռ-
նար... Միեւնոյն պատգամը սորվեցուր
նաեւ քու զաւկիդ եւ անոր զաւակներուն,
մինչեւ արշալոյսի ծագումը»...

Երկուշաբթի առաւօտ հարսնեւորները
կը հաւաքուին փեսային տունը, անկէ ալ
տաւուլ-զուգուցիով հարսին տունը՝ հարսը
եկեղեցի բերելու: Տալուծի-զուգուցիին
դրան քովը կանգնած՝ անդկան մայրը լաց-
նելու յստակ մեղմ ու թրթրուն եղանակներ
կը նուագեն: Ներսը նոր հարսին մէկ կողմը
կնքամայրը, միւս կողմը եէնկէ մը (հարս-
նեւոր կին) զայն կը տանին նախ հօրը ձեռ-
քը համբուրելու եւ վերջին օրհնութիւն
առնելու... անկից ալ՝ մօրը քով:

Տունէն դուրս հանելով կը յառաջա-
նան դէպի եկեղեցի տաւուլ-զուգուցի ա-
ռաջնորդութեամբ. փեսան շրջապատուած
փեսա-մանուկներով՝ նոյնպէս կ'առաջնոր-
դուի դէպի եկեղեցի: Պսակի արարողութիւ-
նը լրացնելէ յետոյ, քահանան սուրը մեր-
կացնելով պատեանէն՝ կը դնէ փեսային ու
հարսին իրարու փակած գլուխներուն մէջ-
տեղ եւ սուրով զանոնք կը բաժնէ իրարմէ,
խորհրդանշելու համար, որ անկեղծօրէն
զիրար սիրող երկու սրտեր միայն սուրով
կրնան բաժնուիլ իրարմէ:

Գիւղին ամբողջ ժողովուրդը ցնծու-
թեամբ կը դիտէ նորապսակ ամուլին թաբո-
րը եւ տեղ տեղ գինի, օղի եւ զանազան ու-

տելիքներ կը հրամցնեն: Հարսին ու փեսային վրայ կորեկ ու բրինձ կը ցանեն... Տան առջեւ գառ մը պառկեցուցած կ'ըլլան եւ փեսան մէկ հարուածով կ'որելով անոր վիզը՝ զոհին վրայէն կ'անցնի ներս: Դրան առջեւ հայրն ու մայրը իրարու ձեռքը կամարածեւ կը բռնեն, որուն տակէն կ'անցնին հարսն ու փեսան: Մայրը մէկ ձեռքին շերեփը, միւսին դայնան (լաթի կտոր) բռնած՝ պարելով ներս կ'առաջնորդէ: Փեսան ու կնքահայրը ցորեն կամենելիք կամի տախտակին ոսկի գահին, իսկ հարսը թագուհի՝ յատուկ կակուղ բուրդէ շինուած բարձէ գահին վրայ կը բազմին: Սեղանները զառներով, հաւերով ու զանազան ուտելիքներով բեռնաւորուած են: Մի քանի երիտասարդներ երկայնավիզ դուրմներէն գինի կը հրամցնեն: Ծաշը կը սկսի: Երիտասարդները քիչ ետք հարսին ու փեսային հետ ձեռք ձեռքի՝ բոլորակ կը կաղմեն, կ'ներգեն ու կը պարեն... Հարսանիքի ուրախութիւնները կը շարունակուին մինչեւ ուրբաթ: Փեսան, որ կնքահայր տունը փախցուած էր, այդ օր կնքահայրը տուն կը վերադարձնէ: Նոյն իրիկունը տան անդամները կը բացակային տունէն, ուր կը մնան միայն փեսան ու հարսը: (Գ. Խ. Երեւանեան, Պատմութիւն Չարսանճագի Հայոց. Պէյրուս 1956, էջ 504-17):

ԶՆՔՈՆԻ ԿԱՐՍԱՆԻՔԸ

Զնքունի գրագէտ Պր. Գառնիկ Գէորգեան (Ամերիկա) հաճեցաւ ինձ տրամագրել իր ձեռագիր «Զնքունապատում»էն արտագրուած Զնքունի հարսանիքը (33 էջ): Շնորհակալութիւն: Կը համառօտեմ.

Մինչեւ ժ. դարու կէսը սրբութեամբ կը պահպանուէր «պեշիկ-քեսմէ»ն: Այնուհետեւ վերջ գտած էր այս սովորութիւնը:

Օժիտ. - եթէ նորածին աղջկան օրօրոցէն նշանելու տգեղ սովորութիւնը վերացած էր, սակայն կը պահուէր, օրօրոցէն սկսեալ, անոր ամուսնութեան օժիտ (որ կը բաղկանար միայն հագուստեղէն) պատրաստելու

գեղեցիկ սովորութիւնը: Աղջկան մը մօր մեծագոյն հպարտութիւնը կը կազմէր անոր պսակուելէն ետք իր փեսային տունը զրկուած օժիտը: Որքան ընտիր եւ ազնիւ ըլլային իր եւ իր աղջկան ձեռքով պատրաստուած հանդերձեղենները եւ որքան շատ զանոնք պարունակող սնտուկներուն թիւը, այնքան մեծ կ'ըլլար անոր հպարտութիւնը: Այո, օրօրոցէն սկսեալ եւ տարուէ տարի աղջկան մայրը կը գործէր ու կը պատրաստէր ամենաընտիր օժիտը իր աղջկան:

Ամուսնութեան տարիքը. - Մինչեւ 1900-ական թուականները Զնքունի մէջ ամուսնութեան հասունութեան տարիք կը համարուէր տղուն համար՝ 18-21, իսկ աղջկան համար՝ 13-16ը: 16-ը անցած աղջիկ մը «տունը մնացած» կը համարուէր:

Աղջիկ-տես. - Աղջիկ-տեսի նախնական նպատակն է աղջիկը մօտէն տեսնել, քննել, ստուգել, որ ան ֆիզիքական թերութիւն մը չունի: Աղջիկ-տեսի այցելութիւնը կը կատարուէր տղուն ծնողքին կողմէ միայն:

Խօսք-կապ. - Քաջալերուած իրենց ապագայ խնամիներու մօտ իրենց գտած սիրալիր ընդունելութենէն՝ տղուն ծնողքը կը պատրաստուէին խօսք-կապի այցելութեան, որ այս անգամ կը կատարուէր երրորդ դէմքի մը մասնակցութեամբ եւ աղջկան ծնողքն ալ կը հրաւիրէր ընտանիքին վստահելի եւ խօսքը կշռաւոր բարեկամ մը:

Նշանտուք. - Նշանտուքը տեղի կ'ունենար աղջկան ծնողքին տունը երկու կողմի ազգականներու եւ բարեկամներու ներկայութեամբ: Ինչպէս բոլոր խոշոր յարկերու, նշանտուքին ալ երկու առանձին սենեակներու մէջ սեղաններ կը յարդարուէին, մէկը այրերու, միւսը կիներուն համար: Երբեմն նշանտուքներուն վարձուած նուագաժողովներով նուագ եւ պար ալ տեղի կ'ունենար: Կերուխումէն ու երգ ու պարէն վերջ, երբ մթնոլորտը ելեկտականացած էր, կը սկսէր նշանի օրհնութիւնն ու մատանիի

տուհուլթիւնը նշանուող զոյգին, որոնց առաջին ու վերջին տեսակցութիւնը կ'ըլլար այդ մինչեւ պսակադրութեան օրը: Առնուազն տարի մը կամ 7-8 ամիս նշանուած կը մնային զոյգերը:

Պաշլըդ. — Պսակադրութեան օրը կ'որոշուէր խնամիներու համաձայնութեամբ եւ անոր մաս կը կազմէր պաշլըդը, որ տղուն ծնողքին բարեկեցութեան համաձայն մէկ ոսկիէն մինչեւ հինգ ոսկի եւ աւելի կ'ըլլար: Ի. դարուն այս տգեղ սովորութիւնը ջնջուած էր:

Հարսանիք. — Չնքուշի հարսանիքը կը տուէր 3-8 օր, երբեմն աւելի: Հարսանիքը կը սկսէր փեսային տունէն: Հարսնեւորները կը հրաւիրուէին փեսային սղտիկ եղբոր կամ մերձաւոր ազգական պատանիի մը միջոցաւ: Հրաւիրուած կ'ըլլային փեսային ազգականներն ու բարեկամները: Խրախճանքը կը սկսէր կէսօրէ առաջ: Կերուխուսմը, երգն ու պարը կը տեւէին ամբողջ օրը:

Հինացում. — Այդ օրը, կէսօրէ վերջ ժամը 4-ին, կնքամայրը, փեսային մայրը, քոյրն ու ազգականուհիները հինան առած կ'երթային խնամենց տունը հարսը հինայելու: Կիներուն յատուկ ցերեկոյթ մըն էր սա: Հինայումը կը սկսէր նուազով: Հարսը կը նստեցնէին հանդիսասրահին մէջտեղը, կնքամօր հետ միասին եւ անոնց շուրջ խմբապարը կը սկսէր առաջնորդութեամբ փեսային մօրը եւ քոյրերուն, որոնց կը միանային երկու կողմի հարսներն ու ազգականուհիները: Այս միջոցին փեսային ազգականուհիներէն ոմանք հինան կը շաղէին: Ու կը սկսէր երգը փեսային ազգականուհիներուն կողմէ, որոնք կ'երգէին տուն մը, զոր նոյնութեամբ կը կրկնէին հարսին ազգականուհիները: Երգը կը սկսէր «Ֆասէք շինաֆօր» (ասէք շնորհաւոր)ով, այսպէս.

Ֆասէ շինաֆօր (կրկն.)

Ով Աստուած սիրէ

Ֆասէ շինաֆօր

Ըս հարսին հինան (կրկն.)

Բերեւ Շամ Բարվան,

Եկեւ ալմըդան (նուէր),

Ֆասէ շինաֆօր:

Հինան մաղեցէ,

Գինով շաղեցէ,

Հարսն հինայեցէ.

Ֆասէ շինաֆօր:

Հարսը կը հինայէր կնքամայրը:

Հալաօրհնէք. — Մինչ հարսենց տունը հարսին հինայումը կը կատարուէր, փեսային հանդիսասրահին մէջ ալ փեսային ալաֆի (հալաւ) օրհնութիւնը՝ փեսայ-մանտուքի (փեսամանուկ) առաջնորդութեամբ: Երկու սկուտեղներու մէջ խնամով դետեղուած էին հարսին ու փեսային հարսանկան հագուստները: Տէր Հայրը դպիրի մը ընկերակցութեամբ կը կատարէր հալաօրհնէքը, որուն հարսնեւորները լուծութեամբ կ'ունկնդրէին:

Փեսահանում. — «Փեսահանում» կը կոչուէր փեսան հագուեցնելը: Փեսային լուգանք տալը եւ փեսան հագուեցնելը հաճոյասէր փեսամանտուքին «մեռնելու օրն էր» (չատ տենչացած բանը), ինչպէս կ'ըսեն Չնքուշցիները:

Փեսահանումը կը սկսէր փեսային սափրուելով: Սափրուելու միջոցին փեսամանտուքը կ'երգէին.

Ֆասէ շինաֆօր, ֆասէ շինաֆօր

Ով Աստուած սիրէ ֆասէ շինաֆօր

Պարպարալար պաշի, պարպարալար պաշի,

Թէգ էք քաշի. ֆասէ շինաֆօր:

Փեսան սափրուած՝ կարգը եկած էր հագուեցնելու: Փեսամանտուքը չէին աճապարեր. մէկիկ մէկիկ կը հագցնեն փեսային հագուստները, իւրաքանչիւրին համար ֆասէք շինաֆօր» երգելով: Երբ փեսան հագուած էր, կը սարքուէր ճաշի սեղանը:

Հարսահանում. — Հարսանիքին երկրորդ օրը կնքամայրը, փեսային մայրը, քոյրերն ու ազգականուհիները հարսին օրհնուած

Հագուստն առած՝ կ'երթային խնամիենց տունը ՀարսՀանումի — Հարսն Հագուեցնելու: Կիներուն յատուկ հանդիսասրահին մէջ դարձեալ «Ֆասէք շինաֆոր» երգելով՝ «ըս հարսին քողքը», «ըս հարսին ֆիսթան», «ըս հարսին միլթան» եւ այլն, մէկիկ մէկիկ կը Հագուեցնէին Հարսին Հագուստները, յետոյ ճոխ սեղանով կը մեծարուէին ազգականուհիները:

«Շա՛տ դանք — քի՛չ դանք». — Հարս-Հանումի դացողները փեսային տունը կը վերադառնան: Իրիկուան հազիւ մթակալած, պատանի մը լուսավառ լապտեր մը ձեռքին՝ սուրհանդակ կը ղրկուէր խնամիենց տունը: Դուռը բախելէ եւ ներս մտնելէ վերջ կ'ընէր սա հարցումը. — «Շա՛տ դանք — քի՛չ դանք»: Հարսին հօրեղբայրը կամ մերձաւոր ազգական մը կը պատասխանէր պատանիին. «Տղաս, տուներնիս նեղ է, բայց սրտներնիս լայն է. մեր աչքին, գլխուն վրայ տեղ ունիք. ըսէ խնամիենց տուն, որ ուզածնուն չափ մեծ բազմութեամբ գան»: Պատանին «մնաք բարի» ըսելով կը հեռանար:

Հարսառում. — Գիշերուան ժամը 11-ի ատենները փեսային տունէն նուագածուներու առաջնորդութեամբ Հարսնեւորներու մեծ բազմութիւն մը, փեսան ալ միասին — նուագելով, երգելով, պարելով կու գար խնամիենց տունը Հարսնառումի: Հարսնեւորներու ճամբան կը լուսաւորէին բազմաթիւ մաշխալներ (իւղի մէջ թաթախուած բոցավառ լաթեր) եւ ֆենէրներ (լապտեր):

Մինչ մէկ կողմէ կը հիւրասիրուէին կնքամայրը եւ փեսային հարազատները, միւս կողմէ հարսին կօշիկները կը հագցնէին եւ վարէն փեսամանտուքը կը սկսէին երգել՝ լացնելու եղանակով մը.

Կարմիր կօշիկ հագուեցուցին,

աման աման,

Ներտիվանէն իջեցուցին.

Հարս, համբայ տուր որ անցնիմ,

աման աման,

Ելին տղին ես եւս ըլլիմ:

Երբ թաքորը շարքի էր, ամէնէն առաջ կնքահայրը, անոր ետեւէն փեսան, յետոյ հարսը եւ ապա հարսնեւորները երգով ու նուագով կը դիմէին դէպի եկեղեցի: Պսակը կը կատարուէր Ս. Պատարագով եւ իր լրիւ շուքով: Կնքահայրը հարսին ու փեսային գլխին վրայ խաչին հետ կը բռնէր երկար թուր մը, զոր կ'օրհնէր քահանան նաբօտին հետ: Պսակէն ետք դպիր մը կը մեներգէր «Թաղաւոր երկնաւոր», իսկ հարսնեւորները «Թէ Հայրենեաց պսակադիր» կ'երգէին միասին: Արդէն արշալոյսը բացուած ըլլալով կ'երգեցուէր «Առաւօտ լուսոյ»:

Ռախի հաճել. — Փողոց ելլելուն պէս կը սկսէին նուագը, երգերն ու պարերը: Մինչեւ փեսային տուն հասնիլը առնուազն 10 անգամ կանգ կ'առնէր թաքորը տունեւորուն առջեւ, ուր կը մեծարուէին օղիով եւ մեղէններով — այդ էր «ռախի հանելը» — մինչ տան երկրորդ յարկի պատուհաններէն հարսին ու փեսային վրայ մանրուք դրամ եւ բրինձ կը սփռուէր:

Մատաղ և Գոտ. — Երբ հարսնեւորները կը հասնէին փեսային տունը, հարսին ոտքին առջեւ կը մօրթուէր այժ մը որպէս մատաղ, իսկ տուն մտնելէն ետք հարսին ձեռքը կը տրուէր նուռ մը, որ դրան զարնելով ջարդ ու փշուր կ'ըլլար: Սա նշան էր հարսին ոտքին ուղուրլու (բարեբեր) լինելուն:

Հարսնեւորները կը հիւրասիրուէին հարիսայով, որ կը բաշխուէր նաեւ աղքատներուն:

Փեսաւալէթ. — Պսակադրութեան օրէն սկսած փեսան իր ծնողաց տան մէջ չէր գիշերեր, այլ կնքահօր տունը կը քնանար մինչեւ հարսանիքին վերջին գիշերը: Այդ միջոցին, ամէն երեկոյ, տեղի կ'ունենար փեսատալէթ (փեսայինի պատիւ կոչունք), սա կարգով. 1. խնամիենց տուն, 2. կնքահօր, 3. հօրեղբայրներուն, 4. մօրեղբայրներուն, եւ այլն. տունը:

Պողոտր. — Փնաստապէթներու վերջին երեկոյին «Պողոտորը» տեղի կ'ունենար: Պողոտորին ներկայ կ'ըլլային երկու խնամիններու ազգականները «պողերով» (նուէրներու ծրար): Այդ երեկոյ կը բերուէր նաեւ հարսին օժիտը խոշոր սնտուկով մը: «Պողոտորի» հերոսուհին հարսն էր: Այդ օրը կը զգացուէր անոր թագուհիի հանգամանքը: Նա կը գրաւէր իր տեղը կիներուն յատուկ հանդիսաւորահին մէջ: Պողոտորը կիներուն օրն էր: Պողոտորի երեկոյթի լրումին՝ պսակադիր քահանան պատշաճ ծիսակատարութեամբ, նարօտը կ'առնէր փեսային ու հարսին գլխէն եւ զանոնք կը հռչակէր այր ու կին:

ՄԱԼԱԹԻԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Մալաթիայի հարսանիքի մասին գրած է Կարապետ Պեննէեան, Մալաթիացի, ԺԹ. դարու վերջերը: Կ'ամփոփեմ:

Մալաթիայի հայերը խնամութիւն կ'ընէին գրեթէ միեւնոյն կարողութեան տէր եւ զոգ ընտանիքներու հետ: Նշանտուքը յաճախ կը կատարուէր տղայութեան ատեն կամ դեռ մանչն ու աղջիկը չծնած. հերիք է որ ծնողք երկուստեք համակրին եւ իրար սիրեն... Տղայի ծնողքը նախ կին մը կը զրկեն աղջկան մօրը մօտ՝ անոր բերանը հասկնալու համար: Հետեւեալ օրը աղջկան հօր բարեկամներէն մին - «այրճը» - կը զրկուի պաշտօնապէս «Աստուծոյ հրամանօքը» աղջիկը նշանելու: Աղջկան ծնողքը, եթէ կամք ունին «Ասված գրիր է նէ վա՛վ ինչ ըսէ տանուշոգ մ'է նիքուք. ճեվապ մի կու տաք» ըսելով՝ «այրճին» ետ կը զրկեն:

Մէկ երկու օր ետքը, տղուն հայրը կամ եղբայրը նախորդ օրուան «այրճի»ն եւ քահանայ մը առած՝ կ'երթան խնամիցուին քով: Այլ այս անգամ խնամին խօսք կու տայ, պայմանաւ որ աղջկան քեռիին, քեռայրին, հօրեղբօրը եւ այլ մերձակայ աղականներուն մասնաւոր ոսկին տան (տրուած ոսկիները աղջկան կը վերաբերին), որովհետեւ եթէ այդ ազգականներն

ալ ոսկին ընդունին, խնամութիւնը հաստատ է: Այդ օրէն սկսեալ խնամինները կը սկսին յարաբերութիւնը տաքցնել. եթէ մէկը եկեղեցի, բաղնիք երթայ, պէտք է իր խնամինին հետ երթայ... Հինգ տաղաւարներու եւ նշանաւոր օրերուն անպատճառ կ'երթան... մասնաւոր ընծաներ առած... հրաժեշտի ատեն մէկ երկու ոսկի նուէր տալով: Նուիրուած ոսկիները հարսնցուն կամ զլուխը կը կապէ եւ կամ երկոք ընելով կուրծքէն կը կախէ: Նշանուելէ վերջ խօսքը բոլորովին արդիւրած է խնամինին հետ. եթէ հարցում ընեն, «այո»ի տեղ «հէ»», «ոչ»ի տեղ՝ «ձըն»ով կը պատասխանէ:

Հարսագիրք. — Հօս հաղուադէպ է տղան 12-15 եւ աղջիկը 10-12 տարեկան ամուսնացնել: Հարսանիքէն մէկ շաբաթ առաջ տղուն կողմէ մէկը կը զրկուի աղջկան տունը, իմանալու համար թէ պատրաստ են. եթէ պատրաստութիւնը տեսած են, «գալիք շաբաթ լաթը թող ձեւուի» ըսելով՝ ետ կը զրկեն: Յաջորդ շաբթուն տղուն ծնողքը մէկ երկու մարդով եւ դերձակի մը հետ կ'երթան լաթ ձեւելու այն կերպասներէն, որ առաջունէ իրենք զրկած էին աղջկան տունը: Այս առթիւ կ'որոշուի հարսանիքին օրը:

Հարսանիքը սովորաբար աշնան կ'ընեն, երկուշաբթի կամ հինգշաբթի: Այր մարդ մը հրաւիրելու համար թաղապետ մը կը զրկեն, իսկ կիները հրաւիրելու համար՝ դայեակ մը, որ իր հետ կ'առնէ պարկ մը հաց՝ գացած տեղերը մէկմէկ հատ տալու համար: Իր նշանաբանն է. «Ս. ...ենց թ. Պաճին մախսուս բարեւ ունի. հարսանիք հրամեցէք. աղջիկնիդ, հարսերնիդ կոնաղ տուէք. տարոսը տղիդ, աղջինիդ ըլլի»: Մէկ կողմէն հաց կը թխեն, միւս կողմէ կաթսաներով կերակուր կ'նվուի: Կը լսուի թմբուկի եւ ծմբերու ձայն: Այսպէս չորս հինգ օր: Հարսանիքի առաւօտը խապրանուէրի (կնքահայր) կողմէ փեսան, ազապալաշիներն ու 50-ի չափ հարսնեւորներ բաղնիք կը հրաւիրուին: Բաղնիքէն վերջ հանդիսա-

բար կը կատարուի փեսային ածիլուելը. ասոնց ծախքերը կնքահայրը կը վճարէ: Կուգայ քահանան փեսան հագուեցնելու «Արեգականն Արդարութեան» շարականով:

Ամէն մէկ շոր հագցնելուն՝ ազապաշինները կը գոչեն. «Լօշ, Թագաւորի լօշ. Հերշա, չուրշա, ալիհէ» («Թագաւորը լուսեղեն զգեստ հագաւ. Աստուած շնորհաւոր քնէ») ... Ասկէ վերջ Հարսնառի կ'երթան: Կը հասնին աղջկան տունը. քահանան կ'օրհնէ հալաւը. հարսը կը տանին մասնաւոր բարձի մը մօտ. այդ բարձին շուրջը երեք անգամ դարձնելէ ետքը մոմազարդ ափսէի մէջէն քիչ մը թաց հիննէ կ'առնեն եւ ձեռքերը կը հիննային: Հարսին նոր շորերը կը հագցնեն ու զարդարուած ձիու վրայ կը նստեցնեն: Հրաժեշտ կ'առնէ ծնողքէն ըսելով. «Պապա, շէն կեցէք. Ասված հիմա էս դրանը էհտած ու մէօհտած չընէ»: Պարերով ու խաղերով կ'ուղղուին եկեղեցի: Փեսան խոստովանած՝ կը սպասէ եկեղեցին:

Կը հասնին հարսնեւորները: Հարս ու փեսայ, ալ ձեռքնին բռնած, գլուխ գլխի, կը կանգնին Ս. Պատկի: Կին մը զմէկին մը բանալով՝ կը բռնէ պսակադրութեան վերջը եւ ապա կը գոցէ: Պատկը լրանալուն՝ քահանաներ հարսին թեւերէն բռնած — չձգելով որ հարսին ու փեսային մէջտեղէն մարդանցնի — ծնծղայ զանգակ հնչեցնելով եւ «ԶՔրիստոս Թագաւոր» երգելով՝ մինչեւ տաճարին դուռը կ'ուղեկցին:

Եկեղեցիէն ելլելէ վերջ փեսան առջեւէն հետի, հարսը ձիու վրայ ետեւէն, նուագներով եւ խաղերով կ'երթան տուն: Երբ բակին մէջ հարսը ձիէն պիտի իջեցնեն, կեսուրը պատշգամէն շռախ վար կը ձգէ բղուղ մը «կաւէ աման», որպէս զի հարսը վախնալով հնազանդ գտնուի իրեն... Բազմութիւնը կը նստի ճաշի. փեսան ամէն մէկուն թեմեննա (մեծարանք) կ'ընէ, իսկ հարսը առջիններէն (կնքամայր կամ առաջնորդող կին) ծնկան առջեւ ծնրադրած կը պառ-

կի սա ալ կաղդուրելու համար: Երբ հրաւրուածները կը ցրուին, չորս-հինգ օր փեսան աղգական-բարեկամներու քով, իսկ հարսը «առջիններէն» հետ կը քնանայ: (Տէր Կարապետ ԲՀՆԵՅ. Պէննէեան, Մալաթիոյ տեղագրական եւ ազգագրական աշխատասիրութիւնը. Պէյրութ 1950-1, էջ 83-94):

Յակոբ Ա. Պէննէեան՝ Ա. «Հարսանեկան սովորութիւններ Մալաթիոյ» վերնագրով տուած է նոյնպէս նկարագրական մը 1899-ի Փետրուարին, որմէ կը քաղեմ կաւոր մասեր.

Հարսանիքներու եղանակին մէջ ենք. նշանուած տղայ ունեցողները աղջկան կողմը կ'երթան աղաչելու, որ հարսնցուին շորը ձեւուի: Մալաթիայի աղջիկներն ամէնալուսն՝ երբեք չեն ներկայանար տեղ մը, ուր կեսրանց կողմէ ունէ մէկը գտնուի. ուստի տանտիկինը զաւակին զգեստները կը բերէ, որ անոնց վրայէն ձեւուի շրջագգեստ, փուքա եւ այլն: Տիկինը հիւրերուն հիւսուած քսակ կամ թաշկինակ կը նուիրէ, յետոյ խօսքը խնամին ուղղելով կը յարէ.

- է, աշկիս լօսը, խնամիս, էսօնք նէ իսէ ձեւուեցաւ, պաշխա ի՞նչ պիտ'էնես:

- Ինչ որ Աստուած լայրխ տեսներ է նէ, էն:

-Ձէ, իս համպըրիմ (համբեմ) ուք է-նուր կէօրէ էրէք. — 50 հատ ածնէս (ոսկի տեսակ) օսկի, 3ը մահմուտիյէ թող ըլլին, ինարէդու չիթերիյէ, ֆիսթան մ 'ա, թեւը պուրմա (ապարանջան), շլլին՝ կերտանլըխ (մանեակ), ախանճը՝ Հելպու օղ (զուտ ոսկի ըլլալով), օթկը՝ փոթին-կալօշ կ'ուզեմ:

-Փէք էյի, կ'ըսէ խնամին կէս մը կմկմալէն...

Կերակուրը պատրաստ է. տան տէրը նախ կը հրամցնէ կապուրդայի արգանակ, յետոյ քիւֆթէ, պամիա, բրինձ փիւաւ, կարկանդակ, ձմերուկ, պանիր: Կերակուրէն վերջ զուտ սուրճ մը կը խմեն եւ կը մեկնին: Խնամին քիչ մը ետ մնալով ոսկին կը սեղմէ տանտիկնոջ ձեռքը:

Հարս առնել. — Մալաթիացիները հարսանիքը կիրակի եւ պսակը երկուշաբթի կը կատարեն: Շաբաթ մը առաջ հարսնցուին գլուխը հինա կը դնեն: Հինգշաբթի խնամի կիները նուէրներով (շապիկ, բաճկոն, սաւան) ճեհէզ (օժիտ) ծալլել կու գան: Կին մը աղջիկը բաղնիք կը տանի, վերադարձին ձեռքերն ու ոտքերը հինա քսել կու տայ: Գաթա կ'իփեն եւ տղոց կը կերցնեն, որ տա՛րոսը իրենց ըլլայ:

Պսակէն ութ օր առաջ հացկերոյթ կու տան կրօնականներուն՝ երկուշաբթի, երեւելիներուն՝ երեքշաբթի, ուսումնականներուն՝ հինգշաբթի, զրացիներուն՝ շաբաթ, նուագով (տաւիղ, ջութակ, թմբուկ): Նախ մեղամաղձիկ երգեցողութիւն, յետոյ Աչըզ Քերեմի, Քէօր Օղլու: Կը խմեն, կը ճաշեն, կը պարեն: Կիրակի փեսային հայրը իր տան այրերը, ազապաշիները եւ նուագածուները բաղնիք կը տանի, երթուղարձին երգով ու նուագով:

Պսակ. — Երկուշաբթի է. կէսօրին քահանաները վարժապետներով կու գան փեսային շորերը հագցնելու: Օրհնուած շորերը ազապաշիները կը հագցնեն, իսկ տղաք «լօս, թագաւորի լօս» կը պոռան: Քահանաները հարսի տունը կ'երթան հարսին հալաւը օրհնելու: Այս միջոցին փեսայի տունէն «խոնջան» կը զրկուի հարսին տունը: «խոնջան» ծրար մըն է, որ կը պարուճակէ հարսին զգեստները, ոսկին, ապարանջանը, օղը, մատանիները, չամիչ, շաքար: «խոնջանը» օրհնուելէ վերջ, կին մը կը հագցնէ հարսին կեսրանց զրկած զգեստները, յետոյ անոնց ուղարկած ձիուն վրայ նստեցնելով զայն՝ հարսանեկան չուն ճամբայ կ'ելլէ դէպի եկեղեցի: Զի հեծած հարսնօրը հարսին կը հետեւի, իսկ միւս կիները թաքորաբար կը քալեն երգելով, մինչ տղաք «Հերշա հալէ հէ» կը պոռան: Փեսան արդէն եկեղեցին է. թաքորը կը հասնի. քահանան կը խոստովանցնէ հարսն ու փեսան եւ կը պսակէ զանոնք:

Պսակէն վերջ փեսան հարսին ձիուն առջեւէն կը քալէ: Երբ կը հասնին տուն, բարձրէն ձիուն առջեւ բղուղ մը կը ձգեն... որպէս զի հարսը իրենց հնազանդի: Հարսը ձիէն վար առնելով՝ վրան կը նստեցնեն 5 տարեկան մանչուկ մը, որուն հարսը դաթա, թաշկինակ կը նուիրէ... Հարսին ճեհէզը. — Ահանիքէ 20 շեպիկ, 10 էնթերի՝ երկուքը կութնի, մնացածը տոխումա, 3 հատ ֆիստան, 2 փոլքա, 15 կից տողախ...» 246, թ. 27, էջ 424):

Անդին տղու ազգականներն հաւաքուած՝ փեսացուն կը պատրաստեն: Հինգշաբթի գիշեր խոմբով բաղնիք կ'երթան

ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Տիգրան Մկուռդ. տուած է լաւ նկարագրական մը քաղաքի հարսանիքի մասին, զոր (Բիւրակն, Կ. Պ. 1899 թ. 8, էջ 120, թ. 16, էջ կ'ամփոփեմ.

Աղջկատես. — Աղջկան ընտուլիւնը միշտ մայրն ու քոյրը կ'ընեն. վերջինս իր ընկերուհիներէն մին հաւնելով՝ կը թելադրէ իր մօրը, որ զայն «գոնախ» (հրաւիրուած հիւր) բերէ իրենց աղգական ուրիշ աղջիկներու հետ, մէկ կամ երկու շաբաթ, աւելի մօտէն ճանչնալու համար: Իսկ սովորական կերպն է, որ եկեղեցւոյ ժամերգութենէն վերջ, մայրը ծանօթ կիներու հետ խօսակցելով կը խնդրէ, որ իրեն «աղջիկ մը սալըղեն», այսինքն, հասած աղջիկ ունեցող ընտանիքի մը անունը տան: Տղուն մայրը հետն առած երկու կամ երեք մօտ աղգական կիներ՝ կ'երթան «աղջկատես»ի: Առաջին նշանն է դրան չաքմաքի (ուռն) մանր մահր, արագ արագ զարնելը: Ներսիսները կ'իմանան, որ «աղջկատես»ի եկողներ են, կը բանան դուռը: Այլ եւ այլ նիւթերու վրայ խօսակցութեան պահուն աղջիկը սուրճ կը բերէ, որ առիթ կ'ըլլայ

«աղջկատես»ի եկողներուն համար մօտէն դիտելու դայն: Երբ որ հաւնին, երկրորդ այցելութեան մը կու գան մէկ երկու շաբաթ վերջ եւ պաշտօնապէս աղջկան մօրը կը յայտարարեն. «Աստուծոյ կամքով ձեր աղջիկը մեր տղուն կ'ուզենք»:

Խօսք առնում. - Երբ երկուստեք յարմար կը դատուի, պաշտօնական բանակցութիւնը տեղի կ'ունենայ: Տղուն հայրը եւ կարեւոր ազգականներ իրենց տաներէցին հետ, կիրակի կէսօրէն վերջ, կու գան «խօսք առնում»ի: Քահանան խօսքը բանալով կ'ըսէ. «Աստուծոյ կամքով եկած ենք ձեր աղջիկը մեր տղուն կ'ունեցան ուզելու»: «Խօսք առնում»ին կիներ չեն մասնակցիր: Աղջկան կողմի այրերը աղջկան քեռիին կը յանձնեն վճիռը տալ. սա ալ, «եթէ հայրը կը համաձայնի, ես կու տամ» ըսելով բանակցութիւնը կը վերջանայ եւ ուրախութեան պլերկիշը (ուտելիքներով զարդարուած սեղան) կը հանեն. օղին կը սկսի մաղթանքներու դուռը բանալ. «Աստուած շնորհաւոր ւնէ». «Ալան սաթան խերընի կէօրսիւն»...

Նշանտուք. - Նշանի համար անհրաժեշտ է մատանի մը, ժամացոյց մը, մի քանի զարդոսկիներ: Քահանան եկեղեցւոյ մէջ օրհնելէ վերջ, նշանը կը տանին աղջկան տունը:

Հարսանիք. - Աղջկան կողմի պատրաստութիւնը կը սկսի հինգշաբթի օր մը. կը հրաւիրուին ազգական աղջիկներ ու նորահարսներ՝ հարսնցուին ձեռքերը հինայելու համար: Շաբաթ օր տղուն կողմէ խալաֆ կը ղրկեն, պսակի օրուան հարսին զգեստը լինելն աւետող. ասիկա կը բաղկանայ թանկարժեք վերարկուէ մը հարսնցուին համար, մի քանի ոսկեղէններու հետ եւ ափսէով մըն ալ շաքարեղէններ: Կիրակի կը սկսի հարսանիքը: Ազգականներն հաւաքուած են. կիներն առանձին, այրերն առանձին: Կիները առուսը (հարսը) կը քողքեն, կը հագուեցնեն:

Ուրբաթ եւ շաբաթ մեծ քանակութեամբ ուտելիք պէտք է պատրաստել. դիւսաւոր տեղը կը բռնէ՝ չորէկ, պանիր եւ շաքարիչի՝ երեկոյին. պսակէն վերադարձին՝ խորոված հաւ ու բրինձ: Կիրակի գիշերը փեսան հագուեցնելու կը սկսին: Երիտասարդներ շրջապատած են փեսացուն. նախ կը տանին մառանը՝ ներքնագգեստները հագցնելու, երգելով յարմար երգը. ապա վեր կը բերեն՝ մնացած մասերը հագցնելու. իւրաքանչիւր առարկային երգելով պատշաճ համարը:

Պսակը Կիրակի կէս գիշերէն վերջ տեղի կ'ունենայ եկեղեցին: 1892-ին, երբ փեսան եկեղեցի կը հասնէր, դպիրները շապիկ հագած դիմաւորեցին երգելով «Յայնժամ սիրով տիրական», «նշին ծաղիկ, նշան գարնան», «յուրախութիւն անդրաւական»: Կէս գիշերը երկու ժամ անցած, փողոցին մէջ երաժշտութեան ձայներ կը լսուին — տաֆ, թուրուղ եւ չըղըրդմայ: Հարսանեկան լուսազարդ թաբորը եկեղեցիէն կը վերադառնայ. երկու ջահակիրներ կ'առաջնորդեն դանոնք իրենց մէջտեղ առած երաժիշտներն ու երգիչները, որոնց կը հետեւին ձիերու վրայ նստած հարսն ու փեսան եւ կնքահայրը շրջապատուած հարսնեւորներով: Հագած դիմաւորեցին երգելով «Յայնժամ սիրով տիրական», «նշին ծաղիկ, նշան գարնան», «յուրախութիւն անդրաւական»: Կէս գիշերը երկու ժամ անցած, փողոցին մէջ երաժշտութեան ձայներ կը լսուին — տաֆ, թուրուղ եւ չըղըրդմայ: Հարսանեկան լուսազարդ թաբորը եկեղեցիէն կը վերադառնայ. երկու ջահակիրներ կ'առաջնորդեն դանոնք իրենց մէջտեղ առած երաժիշտներն ու երգիչները, որոնց կը հետեւին ձիերու վրայ նստած հարսն ու փեսան եւ կնքահայրը շրջապատուած հարսնեւորներով:

Ճամբան թաբորը մերթ կանգ կ'առնէ եւ բարեկամ-ազգական մը հիւրասիրութեան համար սեղան մը կը բերէ: Այս սեղանին վրայ կը ցուցադրեն ոսկերչութեան գեղարուեստի գլուխ գործոցներ — ոսկիէ

շինուած կիւլապտան (վարդեջուեր սրսկիլու) եւ արծաթէ պուխուրտան (խնկաման), մետաքսեայ ժապաւէններով զարդարուած, որոնք պիտի գործածուին յաջորդ օրը «Հարսն ու փեսան խնկելու»: Սեղանին շուրջ պար մը կը սկսի. ամէն մարդ կը պարէ: Այս սեղանը կը կոչուի «դրան առջեւ պըրկիշ հանել»:

Պսակին յաջորդ օրը քահանան կու գայ պսակը վար առնելու: Մինչեւ այն տեն հարսը կրնորուն բաժնին եւ փեսան արանց բաժնին մէջ են: Քահանան կը կանգնեցնէ զիրենք բակին մէջ եւ կը սկսի պատշաճ աղօթքը, որուն կը յաջորդէ հարս ու փեսայի խնկուիլը. — նախ վարդիջուերի մատուակ երեք անգամ հարսին եւ երեք անգամ փեսային կը դարձնէ տարիքոտ աղօղականուհի մը կրկնելով՝ «Աստուած շնաֆուր էնէ» եւ սրսկելով վարդիջուերն իրենց վրայ, ապա խնկամանն հիւսլուպան ծխելով կը դարձնէ նախ հարսին, ապա փեսային շուրջը՝ ողողելով զանոնք վարդիջուերի հոտով եւ զմուռսի անուշահոտ մուխով» (Տիգրան Մկուռե, Ամիտայի արձագանգներ. Նիւ Ճըրզի, 1950, էջ 400-408):

ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ԳԻՒԼԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՀԱԶԶՈՅ-ԽԶՈՒ ԳԻՒԼ.

Գրած է Գ. Բագրատունի Տիարպեքիւրէն. Կ'ամփոփենք:

Հարսանիքի հրաւիրելու համար հաց մը եւ անոր փեսային տունն է, ուր երկսեռ հրաւիրեալներ կը սկսին դաւառական խաղերգեր ու փեսային զարդեր հագցնել: Տեղական երգերէն մէկն է հետեւեալը.

Նայէ փեսու իշլիկին (բանկուն),
Նայէ փեսու տալալին (գեղեցիկ).
Դրածնին մէջ ժողովին,
Էկէք տեսէք անուշին,
Մեզի (նայեցէք) փեսու էրեսին.
Ուր կը մանի խնձորին:

Մեզի փաշի (փեսայ) աչքնուն,
Ուր կը մանին աստղերուն,
Էկէք մեզի մար (մեր) փեսան.
Համար էլիով հաւսական:

Պարմանուհիները, որոնց խաղերգերու (պարերգ) մէջ աւելի դիւթիշ եղանակ կայ, շարան-շարան, ճկոյթնին իրար տալով՝ մեղմ կը պարեն, հազիւ հազ իրենց ոտնաձայնը լսելի ընելով: Այդ խաղերգերը մեղմաշարժ շրթներէն վար կը թափին «շնաֆուրի» շարք մըն ալ տեղացնելով փեսայի գլխուն, երիցս կրկնելով ու ծափահարելով: Փեսան զարդարելէն վերջ այս անգամ երկսեռ անձերէ բաւական մեծ ու ճկուն սարմը կը կաղմեն. ոչ սրինդ, ոչ նուագարան (թմբուկ). Իւրաքանչիւր իր նուագարանն ունի — թրթռուն շրթունքներէն տարօրինակ ձայներ, խաղեր կը լսուին: — Հարսին քով պիտի երթան ձեռքը հինայելու եւ զգեստը հագցնելու: Տէր-պապան ալ հոն պիտի գտնուի զգեստները օրհնելու: Ահա կը վերադառնան, հետերին բերելով հարսը:

Իրիկունն է, մթնշաղ. հրաւիրեալներէն ոմանք տներին կը դառնան, սակայն տաներէցը խստիւ կը պատուիրէ ամէնուն, որ առտու կանուխ պատրաստ գտնուին Ս. Պսակի: Արշալոյսէն ժամեր առաջ ամէնքս ալ պատրաստ ենք. տունէն դէպի եկեղեցի կ'ողղենք մեր քայլերը՝ հետերնիս տանելով հարսն ու փեսան: Ամէն անձ, մեծ ու պզտիկ, վառուած մոմ մը ունի ձեռքը բռնած, իսկ այդ մարդու մը գլխուն վրայ դրուած է մեծկակ թափսի մը, որու մէջ մրգեղէն, կերակուր եւ իւղաբլիթ պաքսիմաթներ կան: Հարսն ու փեսան Ս. տաճարը տարին, պսակելու արարողութիւնը սկսաւ եւ տեւեց մէկ ու կէս ժամ: Դուրս ելանք, արշալոյսը հետզհետէ բացուելու վրայ էր: Պարուհիներն սկսան պարել. ուրիշ կիներ ալ իրենց պարերգով այդ պարուհիներուն աւելի մեծ կորով կու տային: Ահաւասիկ այդ երգերէն քանի մը տող.

Մընք տուն իջաք ուշիկ ուշիկ,
 Փեսան կ'անէր (կը նայէր) լոիկ մնջիկ.
 Մշու սարէր մշուշ էր,
 Աղջկան անուն Քննուշ էր.
 Հարսի ֆողը նախշուն էր,
 Փեսի մատնէն (դէմք) անոյշ էր:

Փառա չկայ տուն իգամ,
 Օսկի չկայ էեզ ի տամ.
 Էկօ արքաք Ս. Նշան,
 Օսկի մատնիք ֆու նշան.
 Հարսի սոյլեր կողոտ էր,
 Փեսի սիրտը ֆառայոտ (բարկացոտ) էր:

Իջանք սլարերով, խաղերով փեսային տունը, ուր անոր մայրը ձեռքի ամանին մէջ եղած մրգեղէնները կը ցանէր հարսի գլխուն: Չորեքշաբթի առտուն, արեւածագին հարսանիքը վերջ գտաւ: (Բիւրական, Կ. Գ. 1899 թ. 3, էջ 37-38):

ՀԱՅՆԻ ԳԻՒԴ

Պատմողն է բնիկ Բենիամին Կ. Ժամ-կոչեան.

Հայնի մէջ կամ օրօրոցէն եւ կամ 7-11 տարեկանին կը նշանէին ու 13-14 տարեկանին կ'ամուսնացնէին: Ընտրութիւնը կը կատարուէր ծնողներու կողմէ... մանաւանդ լուսպը-լուսանքի ատեն կը գնահատէին աղջիկ մը. օր մըն ալ լուր կու տային աղջկան ծնողքին եւ կ'երթային ուղեւոր: Աղջկան ծնողքը, եթէ հաւանութիւն յայտնել ուզէր, պատեղ կը հանէր խնամիններուն: Տղուն ծնողքը հաւանութիւն առնելով՝ կ'երթային տուն եւ կը սկսէր ուրախութիւնը: - Ժամանակ մը խնամատեսի այցելութիւններ կը տրուէին, երբ գաւաթ, ափսէով գունաւոր շաքար, մէջտեղը խնձոր մը դրած՝ կը տանէին խնամիններուն: Ուտել, խմել, պարելու ատեն մէկը կը սկսէր գաւաթն ու շաքարը բաժնել, իսկ ներկաները ծափերով կ'երգէին.

Առ, կիր, խնամիին գաւորն է.
 Առ, կիր, խնամիին շաքարն է:

Նշանտուք. - Նշանտուքը դարձեցին բակը կը կատարուէր: Քահանան նշանը (մատանի, եւն) կ'օրհնէր, ապա նաղտ (նուէր) կու տային: Փեսային կողմէ 5 մեծիտ կամ 5 դեղին ոսկի եւ կամ կարմիր ալու մատանի մը կը տրուէր: Այդ օր կ'որոշուէր հարսանիքին թուականը: - Աղջկան օթիտը կ'ըլլար 5-10 զագի ոսկի, ոսկի մատանի, շալէ խումաշ (երկար կտոր մը քողին տակէն մինչեւ գետին հասնող), շըմըք (կօշիկ), անկողին, հայեի, սնտուկ մը, հագուստ կապուստ: Օթիտին սնտուկը քերտուկէն կը բերուէր:

Հարսանիք. - Պսակը երկուշաբթի գիշեր կը կատարուէր: Շաբաթ իրիկուն փեսային բաղնիքի օրն էր: Կիրակի առտու կնքամայրը կ'առնէր փեսան եւ ամուրի երիտասարդի մը ու տունէ տուն պտտելով՝ հարսանիքի կը հրաւիրէր: Հրաւիրուածները փեսային գրպանները մուրկ, չամիչ, բոլնչ, նուռ կը լեցնէին: Կնքամայրը հինան գիւնով կը շաղէր եւ ափսէի մը վրայ դնելով՝ շուրջը կը շարէր նուռ, խնձոր եւ 20-ի չափ մոմ ու խումբով, երգ ու նուագով խնամոց կը տանէր: Տաւուղ-գուռնայով կը սկսէր թեւինակի (մենապար՝ աջ թեւը յառաջ երկարած, ձախը ուսին բարձրութեամբ ծալած եւ միջնամատն ու բլթնամատը շաչեցնելով) պարը, շարքով, փոխնիփոխ, ոմանք հինան վեր բռնած եւ ուրիշներուն գլխուն դրած: Ու կ'երգէին.

Կանչեցիք նենէն, թող հիմա բերէ,
 Կանչեցիք մաման, թող հիմա բերէ,
 Կանչեցիք ֆոռն, թող հիմա բերէ:
 Սիսեռ լըցուցանի ջորը (ջուրը),
 Կանչեցանք փեսան ֆորը (ֆոյրը):

Փեսան կը հագուէր նշանէն կնքահայրն ու խորթերը (ազապները), երգելով.

Պարտէզի ծաղիկ,
 Թագաւոր փեսայիկ,
 Հագիր ֆո շապիկ:

Իւրաքանչիւր կտորին յարմար խօսք մը: Լրանալէ յետոյ կը համբուրէին եւ գրպանը դրամ կը ձգէին: Իսկ հարսը կը հագուեցնէին կնքամայրը եւ ազապ աղջիկնիւրը՝ երգելով:

Ծառ կենաց ծաղիկ անթառամելի,
Լուսեղէն խորան տանաւ գովելի,
Հանեցաւ ի քեզ Տէրն բոլորի,
Որպէս սուրբ կոյս Մարիամ
Մայր էմմանուէլի:

Պսակը եկեղեցիին մէջ կ'ըլլար: Վերագարձը խաղ ու պարով, տաւուլ-զուռնայով: Երբ փեսային տունը հասնէին, Կովընտ շուրջպարը տեղի կ'ունենար. հարսնեւորները երկուքի կը բաժնուէին, թեւթեւի:

Առաջին խումբը կ'երգէր.
Զիմ իգի, չիմ իգի (չեմ գար),

Երկրորդ խումբը կը պատասխանէր.

Մըն ի գաս, մըն ի գաս (պիտի գաս), Պատ-
ոխ, փրսխս մըն ի գաս:

Ասիկա կը կրկնուէր մինչեւ որ ոչխարը բերուէր, որ սեմին վրայ կը մորթուէր, որուն վրայէն կ'անցնէին եւ ներս կը մտնէին, ուր երեք հոգի մէկ մէկ կուժ կը կտորէին՝ փեսային, կնքահօր եւ հարսին առջեւ, չարը խափանելու համար:

Սենեակ մտնելէ առաջ հարսը սեմին նուռ մը զարնելով պիտի կոտրէր:

Երեք օր գիւղը կերուխում կ'ընէր. 4-5 ոչխար կ'եփուէր՝ հետը գալիս (մսով ձաւարով եղինձ), լոխմըններ, թզկկներ, գաւութ, բրինձ: Երկու օր հարս ու փեսայ իրար չէին տեսներ: Երրորդ օրը կը վերջանային հարսանիքի ուրախութիւնները: (Բենիամին Կ. Ժամկոչեան, Հայնի. Պէյրութ 1952, էջ 66-70):

Ժամկոչեան տուած է նաեւ հարսանեկան երգերու եղանակներ եւրոպական նոտաներով (Անդ, էջ 106, 112, 116, 129):

ԵՂԵՍԻԱ-ՈՒՐՖԱՅԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԵՂԵՍԻԱ-ՈՒՐՖԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Գէորգ Կ. Ոսկերիչեան, եղեսացի, երկար ատեն թղթակից Եղեսայէն Պոլիս, յետոյ քահանայ ձեռնադրուած, Եղեսայէն կը գրէ 1900-ին «Հարսանեկան սովորոյթներ» վերնագրով:

Գրեթէ 30-40 տարի առաջ... եփուն հասակի եւ քեար ու վաստակի տէր եղող մարդիկը միայն ամուսնութեան լուծին տակ կը մտնէին: Բայց հիմա (1900-ին) հասակով ու վիճակով ճշմարիտ հարս ու փեսաներ են... Հարսանիքները կը կատարէին շուրջ պերճութեամբ: Չունեցողը պարտքով պիտի ընէր՝ «նկուն չերևալու համար» ուրիշներու առջեւ: Պսակները անպատճառ կը կատարուէին առաւօտները, եկեղեցիին մէջ, ուրիշ փեսան փողոցէ փողոց պտտցուելով հանգիստաւորապէս տուն կը տարուէր: Եկեղեցիի բակէն սկսած քահանաները «փեսայի թաբոր»ին առջեւէն կը սկսէին երգել «Փառաբանակից»ը կամ ուրիշ հոգեւոր երգեր, որոնք սակայն ծայրը չէին հասներ. հազիւ անկիւն մը դարձած՝ ազապաղաչիւնները գոհարիկ շարիներով կը լուսնային հոգեւոր երգերուն ձայնը... Վերջին տարիներուն պսակադրութիւնները գիշերով, մեծ մասամբ տուններու մէջ կը կատարուէին: (Արեւելք, Կ. Պ. 1900, թ. 4495):

Նոյն թղթակիցը 1897-ին կը շեշտէր թէ Եղեսայի գիւղերուն մէջ «արմատացած սովորութիւն մըն է դրամօթիտն ու զրախօման», բայց Եղեսայ քաղաքին մէջ «ուղղակի ոչ դրամօթիտ կար, ոչ դրախօմա... բայց կային տարբեր սովորոյթներ, որք ոչինչ նուազ արգելք եւ դժուարութիւն կը յարուցանէին ամուսնական կեանքի բարգաւաճման դէմ: Երիտասարդին կողմէ ինչքան խըշըր — ոսկեղէն ու արծաթեղէն զարդեր — աղջկան կողմէն ալ ինչքան ճէյիլ — զանազան նիւթերէ հարդերձեղէններ — մինչեւ որ

չնախապատրաստուելին, ամուսնութիւն անհնարին էր. որով կարելի էր ըսել, ուրֆացիներու «գրամօթիտն ու զրախօման» աւելի ամէկոտ, ծպտուած կը կատարէին իրենց աւելի ղերը: Այս փոխադարձ պաշտօնները նիւթական աննպաստ պայմաններու մէջ գտնուող շատ մը երիտասարդներու ու աղջիկներու համար սրտակեղեք տառապանք էին: Վերջին ժամանակները, ամուսնութեանց մասին մեր բարքերն ալ մեծապէս փոխուած են... Տարիէ մը ի վեր տեղւոյս աղջայիներու մէջ կատարուած ամուսնութիւններուն դրամ բնաւ չի փնտռուիր: Այլ եւս խըշըրն ու ճէյիզը չեն, որ յօդը կ'ըլլան ամուսնական կապակցութեան: (Բիւզանդիոն, Կ. Պ. 1897 թ. 73):

Եղեսիա-Ուրֆա քաղաքի հասանիքի մասին գրած են նաեւ Ա. ԲՀՆյ. Գոսապեան եւ Յովսէփ Չիլինկիրեան, որոնց գրութիւններէն կ'առնեմ հետաքրքրական մասերը.

Ուրֆայի սովորութիւնն էր աղջիկը 15-17 տարեկանին ամուսնացնել: Եթէ «պեշիկքեամէ» էր, պէտք է 16 տարի նշանուած մնար. սովորական նշանուածները 3-8 տարի նշանած կը մնային: Եթէ տղան 18 տարեկան էր, աղջիկը պիտի ըլլար 10 տարեկան կամ աւելի պակաս: Նշանի նիւթն էր մահմուտիէ ոսկի մը եւ քսան դաղի: Նշանուած աղջիկը հիւրերուն ձեռքը չէր համբուրեր, այլ աջ ձեռքը կուրծքէն ճակատը կամ ծնօտէն ճակատը կը տանէր:

Ուրֆայի հարսանիքները աշնան տեղի կ'ունենային: Հրաւէրը կը կատարուէր ձիւթենիի ճիւղով մը: Թանրչ գնասի կամ «Հէննէ բաղնիք» կը կոչուէր, երբ տղուն կողմէ «Հէննէ» (հինա) կը զրկուէր աղջկան տունը եւ երկու կողմի խնամքները բաղնիք կ'երթային եւ հոն իրարու հետ կը ծանօթանային: «Խօսք առնում» կ'ըսուէր այն երեկոն, երբ տղուն պարագաները աղջկան տունը կ'երթային՝ մեծ «սէյնի» մը պատինճանով քեպապ տանելով եւ այդ առթիւ հարսանիքի օրը որոշելով: «Թօխում» կը կոչուէր

պսակէն օր մը առաջ, երբ փեսային տունը մեծ հրաւէր կ'ըլլար ծանր եւ տեսակաւոր կերակուրներով ու նուագով: Հարսը հագուեցնելու գացողները կը ջանային այնտեղէն սուրճի գաւաթ, փայտէ դգալ եւ այլն. թռցնել, որոնք բոլորը կը շարէին յետոյ տղուն տան մուտքին առջեւ, որպէս զի հարսը անոնց վրայ կ'ոխելով անցնի եւ ամէն կերպով կապուի կեսրանց տանը (Տիւս Սահակեան Արամ, Դիւցազնական Ուրֆան եւ իր Հայորդիները. Պէյրութ, 1955, էջ 625-36):

ՏԵՐՍԻՄԻ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1879-ին անանուն թղթակից մը կը գրէ Տերսիմի Հայոց հարսանիքի մասին. «Հարսանիքը դաղտնի կ'ընեն քիւրտերու վախէն: Այս տարի, որ քիչ մը ազատութիւն գտան, արդէն սիրահար ըլլալով թմբուկի եւ պարելու, 16 օր տեւեցին հարսանիքի հանդէսները: Փեսան հագուեցնելու ատեն փսոռը կը պաշեն, յետոյ քանի մը երիտասարդներ զայն փնտռելու կ'ելլեն գէնքերով ու բիրերով: Փեսայ դովիլը եւ ծառ շինելը խիստ հետաքրքրական էր: Կնքահայրը սուր մը ձեռքին փեսային քովէն կ'երթայ թէ՛ եկեղեցի եւ թէ՛ տուն: Փեսան անխօս եւ բերնին վրայ թաշկինակ մը կը գոցէ մինչեւ 15 օր, իսկ հարսը 40 տարի վերջը միայն կրնայ կեսրայրին ու տագրին հետ խօսիլ...»:

Անդրանիկ ստորագրութեամբ յօդուածագիր մը կ'աւանդէ հետեւեալ ծանօթութիւնները.

«Մէկը իր տղան նշանելու կամ պսակելու համար չափազանց ծախքեր կ'ունենայ: Տղաները 15-22 տարեկան անպատճառ պսակուած կ'ըլլան, իսկ աղջիկները՝ 12-16: Տղու ծնողներուն կը յայտնեն իրենց ցանկութիւնը: Երկար բարակ արարողութիւններէ յետոյ, քաւորի եւ միջնորդներու հետ կ'ուղարկեն նշանը (զոյգ մը օղբ, զոյգ մը պլազուկներ, զոյգ մը կարմիր «կօշիկներ, կարմիր ֆէս մ' ու չիթ մը եւ միայն չիթ մը եւ մատանի մը, որոնք կ'օրհնէ քահանան

եւ կը յանձնէ աղջկան ներկայութեամբ ծնողներուն՝ մաղթելով. «Կապն խաւի ըլլի» (Հաստատուն ըլլայ): Մինչեւ Հարսանիքի օրը 1-7 տարի կը տեւէ նշանտուքը: Կը Հասնի վերջապէս ամուսնութեան օրը: Հարսանքի կը սկսի մեծ ուրախութիւններով, տաւուով զուռնայով եւ զանազան կատակերգութիւններով: Հարսանիքը կը տեւէ 3-5 օր: Հարսանիքի միջոցին փեսան «Թագաւոր» կը կոչուի՝ ունենալով «փեսամանուկներ» իր ետեւ, որպէս զօրքեր եւ թիկնապահներ: Աղջիկը Հարս ըլլալէն յետոյ կապոյտ կամ գոյնզգոյն լաչակներով կը ծածկէ իր դէմքը, որմէ յետոյ ան իրաւունք չունի ոչ մէկի հետ խօսելու մինչեւ 25-30 տարի, մինչեւ որ կեսուր կեսրայր նուէր մը տալով բարեհաճին թոյլ տալ իրենց հետ խօսելու...» (Անդրանիկ, Տէրսիմ. Թիֆլիս 1900, էջ 187-93):

ԿԱՄԱԽԻ (ՔԵՄԱԽ) ՀԱՐՍԱՆԻՔԸ

Մ. Թորոսեանց երգնկայէն կը գրէ Պոլսոյ «Բիւզանդիոն»-ի մէջ, 1897-ին.

Հոս քանի մը տարի առաջ մանչուն ծնողը ստիպուած էին վճարել աղջկան ծնողաց որոշ գումար մը պաշլըխ կամ քեսիմ անուան տակ, բայց երբ չամուսնացող երիտասարդներու թիւը շատցաւ եւ շատ աղջիկներ ստիպուեցան մնալ իրենց հօր տունը, պաշլըխի գրութիւնը վերցաւ տակաւ տակաւ: Սակայն մերձակայ Կամախ գաւառակին մէջ սոյն գրութիւնը կը շարունակէ միեւնոյն ձեւով: Հոն մանչերը շատ կանուխէն կ'ամուսնացուին, որովհետեւ Հարսնցու աղջիկներ սակաւաթիւ ըլլալուն՝ մանչուն ծնողքը ստիպուած են բաւական մեծ կակ գումար մը տալ աղջկան ծնողաց եւ զայն Հարսնացեալ իրենց զաւակին:

(Բիւզանդիոն, Կ. Պ. 1897 թ. 267):

Կամախի եւ իր շրջանի Հարսանիքի մասին գտած ենք նաեւ հետեւեալը.

Շաբաթ օրը դաւուլը ու զուռնան միշտ փեսացուին տան շուրջն ըլլալով՝ տեսակ մը

նախատօնակ մը կատարուի յաջորդ օրուան Հանդիսութեանց: Հարս ու աղջիկ չեն փախցներ այս պատեհութիւնը եւ ուրախ պարերով ու երգերով կ'անցնեն իրենց ժամանակը... Հարսնետունը թոնրատունն էր, որ միշտ խճողուած կ'ըլլար ելլող-մտնող բազմութեամբ, որովհետեւ Հարսանիքը ամբողջ գիւղին կը պատկանէր եւ ոչ թէ ընտանիքի մը:

Հարսանիքին մասնակցող աղջիկները, իբրեւ նախապատրաստութիւն, հինայ կը դնէին իրենց ձեռքերուն: Ուրբաթ օր փեսան կնքահօր տունը կ'երթար, ուր քանի մը երիտասարդներու ներկայութեան կը սափրուէր, կը լոգնար եւ երեկոյին ալ կը հինայուէր:

Աղջկան հինայումը տեղի կ'ունենար իր մօր տան մէջ, ուր հաւաքուած կ'ըլլային չափահաս աղջիկներ ու նոր Հարսեր, գիշերատեն մասնաւոր արարողութեամբ: Աղջկան կնքամայրը չոր հինան զարդարուած սեղանի մը վրայ դնելով մէջտեղ կը բերէ: Խումբ մը աղջիկներ այդ լուսազարդուած սինին իրենց մօտ առած՝ պար կը պարեն: Պարագլուխ եղող Հարսը կամ աղջիկը հինան իր գլխուն վրայ բռնած՝ կ'առաջնորդէ խումբը նախ առանձին երգելով: Հինայի յատուկ երգեր ու ասացուածքներ կան, որ շատ յուզիչ են ու մայր լացնող:

Աղջկան մաքրութիւնն ու հինայումը կրնար տեղի ունենալ նաեւ կնքամօր տունը:

Սովորութիւն է, որ շաբաթ օր փեսան, ընկերակցութեամբ նուագի եւ իր ընկերներու, այցելութիւն կու տայ մօտիկ ազգականներուն եւ բարեկամներուն: Այս այցելութեան ընթացքին կը սարքուին խորովածներով եւ համադամներով լի սեղաններ:

Կիրակի օր կը կատարուէր հալաւի օրհնութիւնը: Եկեղեցիէն ետք գիւղին ժողովուրդը հրաւիրուած կ'ըլլար համայնական մեծ ճաշին: Եթէ ձմեռ էր, ճաշը կը տրուէր մեծ տան մը թոնրատան եւ անոր յարակից

մասերուն մէջ: Եթէ ամառ էր, կալի կամ տանիքի մը վրայ կը դրուէին սեղանները:

Հարսանեկան ճաշը ունէր իր մասնաւոր կերակուրները: Ասոնցմէ առաջինն էր էրիշտէ ապուրը: Ապուրը սեղանին վրայ կը դրուէր խոշոր եւ խոր սկաւառակներով կամ սկուռայի մը մէջ: Կը յաջորդէր շող-գամէ խաչնին կամ ուրիշ միսով կանաչեղէն մը, որ նոյնպէս մեծ ամանի մէջ կու գար սեղանի վրայ: Ասոր կը յաջորդէր պատուական փիլաւը, որ խոշոր ափսէի մը վրայ բրգաձեւ դիզուած կը դրուէր սեղանին վրայ: Հարսանիքի փիլաւը մասնաւոր կիներ կը պատրաստէին միսի ջրով եւ վրան ալ առատ կարագ լեցուած կ'ըլլար: Փիլաւին կ'ընկերանար ծիրանի խոշապ եւ կամ պատուական թանձր թանը: Ամէնէն ետքը կը բերուէր ոչխարի խորոված կամ խաշած միս, պանիր եւ այլ աղցաններ: (Յուսարեք, Գաշիքէ 1969 թ. 199):

ՍԵՐԱՍՏԻԱՅԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՍԵՐԱՍՏԻԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Սերաստիայի Հարսանիքի մասին մեր ունեցած հնագոյն աղբիւրը Պողոս Վ. Նաթանեանի աւանդածն է 1875-6ին:

Կ'ամփոփենք:

Սերաստիայի եւ չրջակայ գիւղերու մէջ նշանտուքի եւ Հարսանիքի սովորութիւն մը կայ, նուազ բացառութեամբ, որ դեռ երեխան չծնած կամ օրորոցի մէջ եղած ատեն նշանատուութիւն կ'ընեն... Նշանելի մանկան հայրը կանուխէն նշանի ոսկին կը պատրաստէ քսան եւ աւելի, երեք քաշ չաքար իր բոլոր տեսականիովը, տաներէջ քահանային հետ կը զրկէ աղջկան տունը եւ քահանան նշանը աղջկան վիզը կոխելով կ'օրհնէ զայն եւ կը մեկնի... Եթէ հարուստ է նշանելի օրիորդին հայրը, ազգականներն ու բարեկամները տասը-քսան հոգեոյ չափ քահանային հետ մէկտեղ կ'երթան աղջկան

տունը, նշանը կը կախեն եւ իւրաքանչիւրը մէկմէկ ոսկի տալէն վերջ՝ կը սկսին ուտել, խմել ու արքենալ... Նոր ատեններս քահանայի փոխարէն տասը-քսան կիներ կը տանին նշանը եւ կը կախեն՝ առանց օրհնութեան... Նշանուած օրիորդը տասը-քսան տարի նշանուած կը մնայ...

Կու գայ փեսատես երթալու սովորութիւնը... Նախ աղջկան կողմէ մունետիկ կը զրկուի իրենց գալուստը իմաց տալու եւ այնուհետեւ քսանի չափ կիներ ոսկիով եւ մարգարիտով զարդարուած՝ կ'երթան փեսային տունը. փեսացուն կը կանգնեցնեն մէջտեղ, որ կը սկսի օղի բաժնել, յետոյ կիներ փեսացուի Ֆէսին վրայ եազմա մը կը կապեն եւ ան կը սկսի անոնց ձեռքերը համբուրել. յետոյ կիները փեսացուին գլուխը մէկ մէկ ոսկի կը կախեն եւ կ'ուտեն, կը խմեն եւ երեկոյեան կը վերադառնան: Այս սովորութիւնը կը շարունակուի ամէն տարի տաղաւարներուն: Մոռցանք յիշելու որ հացկերոյթի սովորութիւնը առաջին անգամ փեսացուին կողմէ հարսնտես գացած ժամանակ աղջկան կողմէ կ'առաջարկուի իրարու ծանօթանալու համար:

Գալով «բայ» ըսուած արարողութեան, ասիկա կը պատահի Ս. Սարգսի պահոց չորեքշաբթին: Երկուշաբթի օրէն սկսած հարսնցուն երեք օր ծով կը պահէ եւ չորեքշաբթի օրն ալ իր մօր եւ թաղի աղջիկներուն հետ կու գայ եկեղեցի Ս. Հաղորդութիւն առնելու: Հարսնացուին ծոմապահութեան համար համադամ կերակուրներ ընծայ կը զրկուին (այս է «բայ»ը):

Յետոյ կու գայ բաղնիքի արարողութիւնը... Հարսնացուին եւ փեսացուին կողմէ միատեղ բազմութեամբ բաղնիք կը դիմեն... Հին ատեն պաշլըխի սակարկութեան առիթով շատ զեղխութիւն եւ անկարգութիւն տեղի կ'ունենար կ'ըսեն: Նախ հարսնացուին հայրը կ'առաջարկէր իր ուզած գինը. բաւական վիճելէ վերջ՝ միջնորդով

սակարկութեան խնդիրը կը լուծուէր. այսինքն՝ 500-էն մինչեւ 1500 ղուրուշ պաշլըխ անունով գումար մը վճարել կը խոստանային:

Կոռ Գայ Հարսանիքի Հանդէսը. շարաթ մը առաջ ազգականները կը հաւաքուին: Երկուշարթի առաւօտեան փեսացուն կը զգեստաւորեն «Խորհուրդ խորին»ով եւ միահամուռ կը դիմեն Հարսնցուն տունը. քահանան փեսան կ'առնէ եւ հարսին մօտ կը տանի. ձեռնտուութեան արարողութիւնը կը կատարուի. յետոյ կառքը նստելով եւ կեղեցի կը դիմեն պսակի խորհուրդը կատարելու: Տուն վերադարձին դռան առջեւ փեսային մայրը եւ ազգականները մէկ մէկ նուէրներ կու տան հարսին: Փեսան նախ պարտաւոր է իր տունը պտտիլ, որ ուղուր սեպուի. յետոյ տան դուռը հաւաքուելով՝ կը սկսին շարականներով ներս երթալ ու սեղանի նստիլ. . . Քահանային կողմէ թագավերացի արարողութեամբ հանդէսը վերջ կը գտնէ: Փեսան մէկ քանի օր կը պտտցնեն եւ երեք օրուան ընթացքին, որուն որ պատահի, ամէնուն խոնարհութիւն կ'ընէ:

(Պօղոս Վ. Նաթանեան, Տեղեկագիր ընդհանուր վիճակին Սերաստիոյ. Կ. Պ. 1877, էջ 184-90):

Կ. Ա. Պարսամեան կու տայ մանրամասնութիւններ.

Սըվազցի աղջիկը կը նշանուի 14-19, իսկ մանչը՝ 18-23 տարեկանին: Տղան նշանելու ատեն միջին դասակարգը սա նշանաբանը ունի. «Պէտք է սայլով ածուխ, փայտ, ցորեն բերէ, որ նշանեմ»: -

Աղջիկ գտնել, ահա մեծ հոգը մանչուն մօրը... Աղջիկտեսի պտտող կիներ, երբ տուն մը մտնեն, ջուր կ'ուզեն. աղջիկը կը հասկնայ ու ամչնալով ջուրին կոթիկը կը կարկառէ... Աղջիկտես պտտող կիներ... մէկուն ճինսին չեն հաւնիր, միւսին դոյնին, ուրիշի մը հասակին կամ դէմքին... Սըվազցի մայրը իր տղուն «մարդ մարդու զաւակ» -

աղջիկ մը առնել կուզէ»: «Հարուստին աղջիկը առնելը դժուար է, պահելը՝ դիւրին»: Սըվազցի մէջ բոլոր գործողութիւնները սրճարաններու մէջ կը կատարուին... Մանչուն կողմէ քանի մը ազգականներ սրճարանը կը հաւաքուին. աղջկան հօրը մարդ կը ղրկեն եւ անոր ազգականներն ալ միջնորդութեան կը հրաւիրեն: Սուրճը առնելէ յետոյ «Աստուծոյ հրամանովը ձեր աղջիկը մեր մանչուն պիտի ուղենք»ներով կը սկսին... Երկու կողմէն կ'ըսեն. «Խայրիլի գործը ինչու՞ ձգձգել»... Վերջապէս աղջկան հայրը կ'ըսէ. «Խերը տեսնէք»: Որոշումը առնուեցաւ: Ներկաներէն մէկը մանչուն տունը աւետել կ'երթայ «աչքի լուս»ի: Կը գովեն աղջկան հայրը՝ «Մեզ ուրախացուցիր, Աստուած ալ քեզ ուրախացնէ»... Ալ կ'որոշեն նշան տանելու օրը...

Երկու տեսակ նշան տանիլ կայ - շատուր եւ քիչուր: Այս վերջինը կը նշանակէ մէկ-երկու շատ մօտ յազգականներու ընկերակցութիւնը տաներէց քահանային եւ նշանի սեղանին, ուր մէկ մէկ զարդոսկի նուէր կու տան հարսնցուն: Նշանտուութիւնը կը կատարուի մանչուն կողմէ հարսնցուն ղրկուած շարք մը զարդոսկիներու նուիրումով: Նշանի սեղանը կը պատրաստեն մանչուն տունը. - Տափակ, խոշոր, կլոր, պղինձ սեղանի մը վրայ կը բլրակեն այլաչափ, այլադոյն, այլաձեւ շաքարներու շեղջ մը... Այս շաքարներու կոթողներուն վրայ կ'անցընեն մետաքսէ ժժմալի մը վրայ հատիկ հատիկ կտորուած (կարել) ոսկիներու շղթան ու ամբողջին վրայ մետաքսահիւս շղարշ մը, որ շքեղանքը կ'աւելցնէ: Նախնական պարզ, կարմիր լաչակ մը դրուելով պարսկական մետաքսահիւս շալի մը մէջ փաթթուած, շատ մօտ ազգականի մը տղուն գլխուն վրայ, քահանային առաջնորդութեամբ կը տարուի աղջկան տունը: Աստուծոյ պաշտօնեան... «նշանեցաւ» աղօթքով ոսկիներու շղթան աղջկանը վիզը կ'անցնէ՝ աչքի լոյս ըսելով

հորը եւ ազգականներուն: Հարսնցուն բերնին, ճակտին ու նորէն բերնին տանելով ձեռքերը՝ կը պագնէ երեք անգամ: Ու կը պատուասիրուին...

Նշանի սեղանը աղջկան տունը կը թողուի ու քանի մը օր յետոյ կը վերադարձուի, մէջը մանչուն բաճկոն մը, չապիկ մը, դուլպայ մը, բապուճ մը եւ այլն. դնելով: Այլ Հարսնցուն «մնջել» կը պարտաւորուի: Քանի մը շաբաթ ետքը Հարսնցուն բազնիքը կ'ըլլայ: - Եթէ մանչը ետ ընել ուզէ, տրուած բոլոր ոսկիները աղջկան իրաւունքն են օրէնքով:

Օժիտին սնտուկը դուրս կը հանուի, ուր կան հալաֆներ, պին-տալը, ոսկեճամուկ, ոսկեծոպ լաչակը, ծալլուն կամարը, մարգարտով օղեր, ագամանդ, մատանիներ, ոսկի բազուկներ, ոսկի թեւնոցներ, հատը հինգնոցներու շղթաներ, գրիմիցներ, սանտուխլուներ, լաչակին ծայրերը շարած մանր ոսկիներ, ճակատ ոսկի, կուզ-կուզ մարգարիտներ ճակտէն կախուած եւ այլն: Սըվազ-ցի Հարուստ ու տարեց կիներ մինակ մուշկ կը գործածեն... Հարուստ տուներ նոճի սնտուկներու մէջ կը դնեն շորերնին՝ բուրումնաւելու մտքով: Նոր Հարսեր ձեռքերնին — հինայտած են: (Արեւելք, Կ. Պ. 1904 թ. 5701, 5731, 5768. 1905 թ. 5926, 5928):

Պարսամեան չէ տուած ամբողջական նկարագրութիւն մը Սեբաստիայի հարսանիքին: Ան ծրագիր ունեցած է գրքի մը մէջ տալու Սեբաստիայի «Հայ կինը» եւ այդ առթիւ ներկայացնելու նաեւ հարսանիքը (Հմմտ. Արեւելք, 1905 թ. 5928), սակայն չէ կրցած տալ, որքան կ'երեւայ:

Տիկ. Ոսկի Թոփալեան (Ֆրանսա) բրգնիկցի եւ որ այնքան ազնուութեամբ մեզի օգտակար եղած էր Բրգնիկի պատմութեան համար, դժբախտաբար առանց տեսնելու մեր Բրգնիկի «Յուշամատեանը»՝ 1969-ի սկիզբը վախճանած էր:

Տիկ. Թոփալեան Բրգնիկի հարսանիքի մասին ինձ կը գրէր.

Առաջին անգամ մանչ տղուն ծնողքին կողմէ պատուիրակ մը կը ղրկուի աղջկան ծնողքին մօտ: Եթէ համամիտ գտնէ, երկու տարեց պարոններ կ'երթան եւ կը համաձայնին: Նշանտուքի նուէրն է զոյգ մը ոսկի օղ, զոր հրապարակաւ կ'օրհնեն երկու կողմի ազգականներու հաւաքոյթով, փոխադարձ նուէրներով: Թէ՛ մանչուն եւ թէ՛ աղջկան կողմէ «Սահուն թեփսի»ով փախլավա կը մատուցուի եւ կամ տունը կ'ուղարկուի:

Հարսանեկան հանդէսը. Ղ. Ճոշկունեան կը շարունակէ գրել. «Հարսանիքը ընելու համար քաղաք կ'երթան աղջկան հագուստ կտրելու համար: Կը գնեն ամէնէն սուղ ապրանքը — սրմալը արծաթ փեշեր, թեսեր, կուրծքեր, որոնք մէկ բառով հալաւ կ'ըսուին:

Ատկէ ութ օր վերջը կը սկսի սկսի հարսանիքը, որ ընդհանրապէս բարեկենդանի օրերուն տեղի կ'ունենայ եւ երեք օր կը տեւէ: Ուրբաթ իրիկուն տաւուլ-գուռնան կը սկսի չալիլ. պարի ձայնը լսելով՝ գրեթէ բոլոր ազգականները տունը կը հաւաքուին եւ կը սկսի պարը, նախ մանչերը, յետոյ աղջիկներն ու հարսները. կը տեւէ մինչեւ գիշեր, երբ կը սկսի հելվայի պատրաստութիւնը: Շաբաթ օր տեղի կ'ունենայ հալաւ օրհնէքը: Կը հրաւիրուին վարդապետը եւ գիւղին մեծերը: Այդ պահուն տիրացու տղաքը ժամուն զանգակները կը հնչեցնեն եւ ծնծղաներով կ'երթան «Թագաւոր»ը՝ բերելու «Առաւօտ լուսոյ» երգելով: Վարդապետը կ'օրհնէ թէ՛ «Թագաւոր»ին եւ թէ՛ «Թագուհի»ին հագուստները:

Կիրակի «Հարսնառ» է. մանչուն տունէն ճամբայ կ'ելլեն. հարսին հագուստները (օժիտ) փեսան գլխուն վրայ կ'առնէ, ուրիշ մըն ալ՝ պենլիկ մը օղի: Պարելով, երգելով եւ տապանչա պարպելով կ'երթան հարսին տունը: Այս միջոցին հարսը կը հագուեցնեն, յետոյ ձի նստեցնելով՝ զոյգ տաւուլ-

զուգահեռայով եկեղեցի կը տանին, ուր յառաջուրնէ գացած կ'ըլլան փեսան ու կնքահայրը: Պսակը կատարուելէ վերջ, հարսն ու փեսան ձիերու վրայ կը հեծցեն ու ձիարշաւներով նախ հարսին տունը կը դառնան, ուր նուէր տուողներ կ'ըլլան, յետոյ փեսային տունը, ուր նոյնպէս նուէրներ կու տան: Զիւրէն վար իջնելէն վերջ հարսին գլխուն խուկը կը ծխեն: Հարիւրաւորներով կ'ուտեն, կը խմեն ու կը պարեն:

Տիկ. Թովալեան Բրգնիքի հարսանեկան հանդէսի մասին կը գրէ. «Հինգշաբթի մը խմորեղէններ կը պատրաստուին հարսանիքի համար - փախլավա, գաթա, բաղարջ, նոյնպէս տաշտերով հաց: Ուրբաթ օր եղ մը կը մորթեն: Երիտասարդ կին մը դեռատի երկու աղջիկներով բոլոր ծանօթները հարսանիքի կը հրաւիրէ. եկողները, ի նշան առատութեան հացով, կարագով կու գան, որուն կ'ըսենք «գաթախատիֆ»: - Հարսը հագուեցնելու համար «հալաւ»ը արծաթէ թափսի մը մէջ դրած՝ պատուաւոր տարեց պարոնի մը գլխուն կը դնեն ու նուագներով կ'երթան հարսին քով ու կը սկսին հարսը հագուեցնել երգերով, մաղթանքներով ու նուագով:

Ստեփան Պալապանեան (մեռած 1967 Յունիս 21-ին, Իսթանպուլ) բնիկ Բրգնիկցի, կու տայ նորութիւններ ալ. Ընդհանրապէս ձմեռ ժամանակ տեղի կ'ունենան հարսանիքները եւ կը տեւեն երեք օր, երեք փշեր: Տաւուլ- զուգահեռայով պարեկ կը խաղացուին, այրերը զատ, կիները զատ:

«Շուրջպարը» պարող աղջիկներն ու հարսերը զարդարուած են իրենց հալաւներով, ոսկի ճակատով, կէլիլներով, խրդլիկներով. քիչ վերջ հրապարակ կու գայ երիտասարդութիւնը ձեռք ձեռքի, թեւ թեւի: Հարսը հագնելու միջոցին կ'երգեն.

Տանիլ եկանք, տանիլ եկանք,
Հարս փեսային տանիլ եկանք:

Իսկ երբ հարսի գլխու զարդ «փուլ-լուն» քող կ'ընեն ու մագերն ալ սեմ կը դնեն, կ'երգեն.

Մազըդ սեմ սեմ բուսեր է,
Մառըդ ետեւէդ հուսեր է.
Թէգ ըրէ, նազըդ աղջիկ,
Օրըդ եկեր հասեր է

Հանդիսական է նաեւ «թագաւոր»ին զգեստաւորումը. - երիտասարդները իբրեւ «փեսաւէրներ շրջապատած են «թագաւոր»ը երաժիշտներով, վարդապետներով, ծնծղաներով, երգերով ու ամէն մէկ հագուստը հագնելուն՝ «Օրհնեա՛, Տէր» կը կանչեն:

Հարսանիքի երրորդ օրը «թագաւորն» ու «թագուհին» ձիերու վրայ կը բազմեցնեն, երկու այր հարսին երկու կողմէն կը քալեն, նոյնպէս երկու այր՝ փեսային երկու կողմէն:

Նշանտուքի բանակցութիւնները կը սկսին խողա մը ձեռքերին, մէջը հալվա, քանի մը գոյնդգոյն թաշկինակ, օղ ու մատանի դրած՝ աղջիկները կ'երթային... ու նշան կու տային:

Քանի մը ամիս կամ տարի նշանուած կը մնային եւ ապա հարսանիքը կը սկսուէր: «Թագաւոր»ը կը հագնէր իր պաշտօնական հալաւը, որ շայալըդ չուխա-լաթ կը կոչուէր եւ բաղկացած էր մուր կապտագոյն չուխայէ եւ զըպղայէ, մետաքսէ ծիածանագոյն գօտիէ, երկար շղթայով արծաթ ժամացոյցէ, տրեխի փոխարէն կիսակօշիկներ, գլխին ալ փիւսկիլով ֆէս մը: Իբր նախաքան հացկերոյթ մը կու տային դուռ դրացիներուն եւ զուգահեռայով հարսանիքը կը յայտարարուէր: «Թագաւոր»ը իր շքախումբով կ'իջնէր կնքահօր տունը, լոգանք մը կ'առնէր, շերպէթ կը լեցնէր իր գլխին — կը քաղցրանար, ընդունակ կը դառնար ամուսնութեան:

«Թագաւոր»ը հագուեցնելու պատիւը ստանձնելու համար զրամական մրցում մը

կը բացուէր եւ վերջինը կ'ըլլար հագուեցնողը: Հանգերձի ամէն մէկ կտորը տալուն՝ տիրացուները կ'երգէին. «Օրհնեցէք, գովեցէք» եւ պոճոռ (կեցցէ) կը կանչէին: Ճաշէն վերջ կանացի շքախումբ մը «Թագաւոր»ին կ'ընկերանար դէպի աղջկան տունը նուագածութեամբ նաղարայով (թմբուկ) ու հրադանաձգութեամբ: Երբ «Թագաւոր»ը ներս մտնէր, աքաղաղ մը կը գլխատուէր ի պատիւ եւ արիւնը կը քսուէր տան շէմքին եւ Թագաւորի ոտքին, իսկ եղբօր կրն մըն ալ խուսնկ կը ծխէր անոր շուրջը «Օխթը քեզի պէս, մէկը ինծի պէս» ըսելով:

Փեսային սեղան նստելէն առաջ փեսամատիկը դգալ մը կը սահեցնէր անոր ոտքին տակ, որ դայն կը ջարդէր: Զոնքանչը կը համրուէր եւ նուէր մը կու տար Թագաւորին: Քահանան խաչով ու բուրմառով կ'օրհնէր հարսնացուի շորերը — պետլան (ափուխ քող), միլթան (զարգարուն հագուստ մինչեւ մէջքը), ջինթան (լայն, խորունկ կարմիր վարտիք) եւ ալթը-պարմախ:

Երրորդ օրը կ'ուղուէին դէպի եկեղեցի պսակի համար: Քահանան պատարագ կը մատուցանէր, կարգը կը կատարէր, նարօտ կը կապէր... Հարսնեւորներու ամբողջ բազմութիւնը նախ հարսնացուի տունը կը դիմէր, ուր նուիրատուութիւն կ'ըլլար հարսին, յետոյ Թագորը կը շարժուէր դէպի փեսային տունը, ուր նոյն ձեւով փեսային մերձաւոր ազգականներու նուէրը կը յայտարարուէր: Փեսային տունը մտած պահուն հարսին առջեւ պնակ մը, ունելի մը եւ ակիւշ մը կը դնէին. առաջինը ոտքով պիտի ջարդէր, իսկ վերջինները գետնէն պիտի վերցնէր: Այդ օրուրնէ հարսը կը մնար չխօսկան մինչեւ մահը: Զորրորդ օրը աղջկան տունէն ճէզ (օժիտ) բերելու կ'երթային: Հինգերորդ օրը մասնաւոր արարողութեամբ հարս ու փեսայի Թագը վար կ'առնէին: (Վահան Համբարձումեան, Գիւղաշխարհ, Փարիզ 1927, էջ 147-52):

ՅԱՂԹ ԳԻՒՂ

Յաղթ գիւղի հարսանիքի մասին կը գրէ Տրդատ Տրդատեան.

Ծնողքներ կային, որոնք իրենց զաւակները ծնելէ անմիջապէս յետոյ կը նշանէին, որուն «պեշիկ քեւթմէ» կ'ըսէին: Կանոնաւոր ամուսնութեան համար նախ նշանտուք կ'ընէին հանդիսաւոր կերպով, ուր ներկայ կ'ըլլային տղուն հայրը, քահանայ մը, երկու կողմի կնքահայրերը, մօտիկ ազգականներն ու ըէիսը (գիւղապետ)... Քահանան կ'օրհնէր նշանը եւ կը յանձնէր աղջկան»:

«Ուրբաթ երեկոյ, տաւուլ-զուռնայով հարսանիքին սկսիլը կը ծանուցանէին... Շաբաթ կէս օրէն հոք քահանան կ'օրհնէր «Թագաւոր»ին հագուստները. Կիրակի երեկոյեան «հարսնոր» (հարսնառ) կ'երթային... Քահանան այդ գիշերն ալ աղջկան հալաւը կ'օրհնէր: Յետոյ հարսերն ու աղջիկներ կը սկսէին հարսն հագուեցնել — ալթը պարմախ (երեք փէշերով, գոյնզգոյն գծերով, ծունկերէն վար երկարող մետաքսէ հագուստ), միլթան (սրմայանախշ, մէջին հասնող թափշէ հագուստ), պոլոզ (հարսանեկան գլխանոց մը, որ կ'ուսնեար կտաւէ շինուած ցցուածք մը, ճակտին վրայէն դէպի հոն ձգուած), պիտլան (գոյնզգոյն չիթէ գլխու բարակ՝ ծածկոց մը՝ մինչեւ սրունքներն հասնող):

«Թագաւոր»ը կը հագուէր մութ կապոյտ կերպասէ շալվար, նոյն կերպասէն սիւմերով նաշխուած ղեղեքի, մէջքը կը կապէր թրապլուս գօտի մը, վիզէն կը ձգէր քեֆիէ մը մինչեւ կուրծքը հասնող, վզէն վար խաչաձեւ»: «Երկուշաբթի առտու, խուռներամ բազմութեամբ Թագոր կազմած, տաւուլ-զուռնայի եւ երգչախմբի ընկերակցութեամբ կ'երթային եկեղեցի գոյգը պսակելու: Հարսը ձիուն վրայ, եղբայրը կը քալէր մօտէն ձիուն սանձը բռնած: Փեսան վառ ու ճերմակ խոշոր մոմ մը բռնած՝ «վա-

ճառ» պոռագողներուն խոնարհելով: Պսակադերութիւնը լրանալէ յետոյ «Թագաւոր-Թագուհի» ձի հեծած՝ թաքորը կ'ուղղուէր փեսային տունը... Երեքշաբթի, հարսանիքի վերջին օրը, քահանան «ճիհէզ»ը կ'օրհնէր ու վար կ'առնէր հարսին ու փեսային «Թագ»երը... Այնուհետեւ շուրջպար կազմելով կը գովէին հարսն ու փեսան:

Առաջին հայրն է մեր Աղամ,
Ծնաւ Աբէլ, Յուսէփի տղան,
Նոյն նահապետն ամենայն.
Օրհնէ հարսն ու քազաւորը,
Փեսայ մանտիկ հասարակաց:

(Տրդատ Տրդատեան, Յաղթը եւ Յաղթեցիները. Պոսթըն 1959, էջ 58-68):